համար 20 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ «ՌԵՊՈ / ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱԿԱՐԳԻ» ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի 07.06.13թ. թիվ 143 Ա, 24.12.13թ. թիվ 302 Ա, 11.02.14թ. թիվ 32 Ա, 07.10.14թ. թիվ 254 Ա, 16.12.14թ. թիվ 348 Ա որոշմամբ կատարված փոփոխությունները

Կանոնակարգը փոփոխվել է՝

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից նոր «Ռեպո/հակադարձ ռեպո համակարգի» ներդրումը, որը պետք է ապահովի կենտրոնական բանկի և առևտրային բանկերի միջև ռեպո/հակադարձ ռեպո գործառնությունների և միջօրյա ռեպո գործարքների կնքման հետ կապված ավտոմատացման գործընթացը, ինչպես նաև կարևորելով համակարգի գործունեության կարգավորման անհրաժեշտությունը,

նպատակ ունենալով կանոնակարգել «Ռեպո/հակադարձ ռեպո համակարգի» միջոցով գործառնությունների իրականացման գործընթացը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետը, 20-րդ հոդվածի «իդ» և «ժդ» կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել ՀՀ կենտրոնական բանկի ««Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի կանոնները»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերին սույն որոշման ծանուցման օրվան հաջորդող օրը:

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ **Արթուր Ջավադյան**

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ 22/01/2013 ԹԻՎ 20 Ա ՈՐՈՇՄԱՄԲ

Հավելված 1

ԿԱՆՈՆՆԵՐ

«ՌԵՊՈ/ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2013

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

1. ԳԼՈՒԽ . ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6

2. ԳԼՈՒԽ. «ՌԵՊՈ/ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ» ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ 19

2.1 Համակարգում Լիազոր օգտագործողների գրանցումը, «Մոնիթորինգի» միջոցով գործառնությունների իրականացման համար իրավասությունների տրամադրումը, փոփոխումը 19

3. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ «ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ» ՄԻՋՈՑՈՎ ՀԱՍԱՆԵԼԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ 20

3.1 «Մոնիթորինգ» համակարգի միջոցով մասնակիցների կողմից իրականացվող գործառնությունները և հասանելի տվյալները 20

3.2 Համակարգում Հայտերի, Միջօրյա հայտերի ներկայացումը Մոնիթորինգի միջոցով 21

3.3 Համակարգին ուղղված Հայտերի, Միջօրյա հայտերի և հաղորդագրությունների ներկայացման այլընտրանքային տարբերակ 23

4. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ 24

4.1 Համակարգում գործարքների կնքման վերաբերյալ հայտարարության իրականացումը 24

4.2 Համակարգում հայտարարված աճուրդի չեղյալացումը 25

5. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԻ ԵՎ ՄԻՋՕՐՅԱ ՀԱՅՏԻ ԱԿՑԵՊՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ 25

5.1 Համակարգի միջոցով Հայտի ակցեպտավորումը և գործարքների կնքումը 25

6. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 27

6.1 Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների ընդհանուր բնութագրիչները 27

6.2 Միջօրյա ռեպո գործարքի հիմանական բնութագրիչներ 28

6.3 Լոմբարդային ռեպո գործարքի հիմանական բնութագրիչներ 28

6.4 Համակարգում ռեպո գործարքների կատարման համար ընդունելի արժեթղթերի

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ցանկի սահմանումը 29

6.5 Հակադարձ ռեպո գործարքի բնութագրիչները 29

6.6 Համակարգում Հակադարձ ռեպո գործարքի կատարման համար արժեթղթերի հետ կապված առանձնահատկություններ 30

7. ԳԼՈՒԽ. «ՌԵՊՈ ԶԱՄԲՅՈՒՂԻ» ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ 31

7.1 Ռեպո զամբյուղի արժողության հաշվարկման և վերագնահատման իրականացումը 31

7.2 Ռեպո զամբյուղում առկա ավելցուկային արժեթղթերի հետ փոխանցումը 35

8. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 37

8.1 Համակարգում կնքված գործարքների համար Մասնակիցների կողմից կատարման հերթի առաջնահերթության կանոններ 37

8.2 Միջօրյա ռեպո գործարքի կնքումը և կատարումը 38

8.3 Կնքված Ռեպո գործարքների կատարման կանոններ 40

8.4 Կնքված Հակադարձ ռեպո գործարքների կատարման կանոններ 42

8.5 Համակարգով գործառնությունների իրականացման հետ կապված կատարվող կլորացումները 43

9. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 45

9.1 Կատարված Ռեպո և Միջօրյա ռեպո գործարքի, ինչպես նաև Կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքի մարման կանոններ 45

9.2 Հակադարձ ռեպո գործարքների մարման կանոններ 48

10. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԶՈՒՏԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 49

10.1 Ռեպո գործառնությունների զուտացման կանոններ 49

10.2 Հակադարձ ռեպո գործառնությունների զուտացման հետ կապված դրույթներ .. 54

11. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԱՌԿԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ԱՐԺԵԿՏՐՈՆԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 54

11.1 «Ռեպո զամբյուղում» առկա արժեթղթի մարման գումարների տնօրինումը 54

11.2 «Ռեպո զամբյուղում» առկա արժեթղթի արժեկտրոնի դիմաց վճարված գումարի տնօրինումը 55

11.3 «Հակադարձ ռեպո» գործարքների առարկա հանդիսացող արժեթղթի արժեկտրոնի դիմաց վճարված գումարի տնօրինումը 56

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

12. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՕՐՎԱ ՍԿԶԲՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 56

13. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՄՓՈՓՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ (end of day procedure) ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ 58

13.1 Ռեպո գործառնությունների հետ կապված ամփոփման փուլում իրականացվող քայլերը 58

13.2 Հակադարձ ռեպո գործառնությունների հետ կապված ամփոփման փուլում իրականացվող քայլերը 60

14. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՆՈՆՆԵՐ 60

14.1 Ռեպո գործարքների լուծման հետ կապված կանոններ 60

14.2 Հակադարձ ռեպո գործարքների լուծման հետ կապված կանոններ 61

15. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ 61

15.1 Մասնակիցների կողմից Կենտրոնական բանկին ուղղված էլեկտրոնային հաղորդագրությունների ներկայացումը 61

15.2 Կորպորատիվ արժեթղթերի հետ կապված էլեկտրոնային հաղորդագրությունների ներկայացումը Համակարգին 62

16. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՅԼ ԿԱՆՈՆՆԵՐ 63

16.1 Մասնակցի մոտ Համակարգով գործառնությունների իրականացման անհնարինության, միջադեպերի առաջացման և անվտանգության հետ կապված կանոններ 63

17. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 71

Դիմում ՀՀ Կենտրոնական բանկ «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգին և Մոնիթորինգ համակարգին Մասնակիցների միացման մասին 71

Դիմում ՀՀ Կենտրոնական բանկ «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի Մոնիթորինգում Լիազոր օգտագործողների գրանցման (հեռացման), նրանց իրավասությունների տրամադրման մասին 73

Լիազոր օգտագործողի համակարգչին ներկայացվող նվազագույն պահանջներ 76

«Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգում Հայտերի,Միջօրյա հայտի ընդունման հետ կապված կիրառվող կարգավիճակներ 77

Հայտում նշված առաջարկությունների կատարման արդյունքի հետ կապված կիրառվող կարգավիճակներ 79

«Ռեպո/Հակադարձ ռեպո» համակարգում գործառնությունների իրականացման ժամանակ կորպորատիվ արժեթղթերի (պարտատոմսերի) նկատմամբ կիրառվող չափանիշները..... **Error! Bookmark not defined.**

Համակարգում Զուտացման իրականացման ընթացակարգի նկարագրությունը ... 89

«Ռեպո/Հակադարձ ռեպո» համակարգի միջոցով գործառնությունների իրականացման հետ կապված ժամանակացույցը 96

«Ռեպո/Հակադարձ ռեպո» համակարգով կատարվող գործարքների օրինակներ 97

Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների մարման օրինակներ 97

Ռեպո գործարքների զուտացման օրինակներ..... 101

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

1. ԳԼՈՒԽ . ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սույն կանոններով (այսուհետ՝ նաև Կանոններ) սահմանվում է Համակարգով գործառնությունների իրականացման կարգը, այդ թվում՝ հայտերի ներկայացման, աճուրդների իրականացման, գործարքների կնքման, կատարման և մարման, հաշվարկների իրականացման, ռեպո զամբյուղների կառավարման, գործարքների լուծման կանոնները:
2. Սույն Կանոններում օգտագործվող՝ ստորև նշված հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.
   1) **Համակարգ՝** Ռեպո/հակադարձ ռեպո ավտոմատացված համակարգ, որի միջոցով ապահովվում է աճուրդի հայտարարումը, Կենտրոնական բանկի և Մասնակիցների միջև գործարքների կնքումը, կատարումը, մարումը, տուգանքների հաշվարկումը, գործարքների լուծումը, ինչպես նաև՝ Կենտրոնական բանկի և Մասնակիցների կողմից Համակարգով գործարքների հետ կապված այլ գործառնությունների կատարումը.
   2) **Համակարգի օպերատոր՝** Կենտրոնական բանկ. որը պատասխանատվություն է կրում Համակարգի անխափան աշխատանքի և զարգացման համար
   3) **Կենտրոնական բանկ՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
   4) **Համակարգի անդամներ՝**
      - Կենտրոնական բանկը՝ որպես Համակարգի օպերատոր, Պահառու Պետական արժեթղթերի համար և Գլխավոր համաձայնագրի կողմ.
      - Կենտրոնական դեպոզիտարիան՝ որպես Պահառու Կորպորատիվ արժեթղթերի համար
      - Համակարգի մասնակիցներ
   5) **Համակարգի մասնակից կամ Մասնակից՝** Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆինանսական կազմակերպություն, որը Կենտրոնական բանկի հետ կնքել է Գլխավոր համաձայնագիր, բավարարում է Համակարգին մասնակցության համար Կանոններով ներկայացվող պահանջներին և Կանոններով սահմանված կարգով գրանցվել է Համակարգում: Համակարգի մասնակիցը Համակարգով գործառնություններն իրականացնում է իր Լիազոր

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

օգտագործողի(ների) միջոցով:

6) **Ֆինանսական կազմակերպություն**՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկ և (կամ) Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ ֆինանսական կազմակերպություն:

7) **Լիազոր օգտագործող**՝ Մասնակցի լիազորված անձ, որը Կանոնների համաձայն գրանցվել է Մասնակցի անունից Համակարգում Կանոններով նախատեսված գործառնություններ իրականացնելու համար.

8) **Կենտրոնական դեպոզիտարիա՝** «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ-ն, որն իրականացնում է Կենտրոնական բանկի և Մասնակիցների միջև Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների հետ կապված կորպորատիվ արժեթղթերի փոխանցումը, հաշվառումը, արժեթղթերի հաշվառման հաշիվների վարումը

9) **Պահառու**՝ Կենտրոնական բանկ և (կամ)Կենտրոնական դեպոզիտարիա, որոնք իրականացնում են պահառուական գործունեություն.

10) **«Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ»** Կենտրոնական բանկի «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ», որի միջոցով իրականացվում է Պետական արժեթղթերի փոխանցումը, հաշվառումը, «դեպո հաշիվների» վարումը:

11) **Դեպո-հաշիվ**՝ արժեթղթերի հաշվառման նպատակով Կենտրոնական բանկի կողմից վարվող «դեպո-հաշիվ», ինչպես նաև Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից Մասնակիցների և Կենտրոնական բանկի համար վարվող «արժեթղթերի հաշվառման հաշիվ»:

12) **Գործառնական օր**՝ Բանկային օրվա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում իրականացվում է Կենտրոնական բանկի համապատասխան համակարգերի շահագործումը, ըստ յուրաքանչյուր համակարգի համար Կենտրոնական բանկի կողմից հաստատված գործառնությունների իրականացման ժամանակացույցի.

13) **Բանկային օր**՝ այն օրացուցային օրը, երբ Կենտրոնական բանկը տրամադրում է Համակարգում՝ Կանոններով նախատեսված գործառնությունների կատարման հնարավորություն.

14) **Մասնակիցների սպասարկման ժամանակահատված**՝ ըստ Համակարգում գործառնությունների իրականացման ժամանակացույցի սահմանված ժամանակահատված՝ Մասնակիցների կողմից Համակարգին ուղղված հաղորդագրությունների ընդունման համար.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

15) **Ժամանակացույց՝** Համակարգի միջոցով գործառնությունների իրականացման հետ կապված ժամանակացույց՝ համաձայն Կանոնների Հավելված 7-ի.

16) **Էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգ՝** Կենտրոնական բանկի կողմից Սի-Բի-Էյ-Նեթ համակարգչային ցանցի հիման վրա շահագործվող էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգ, որը ապահովում է Կենտրոնական բանկի համակարգերին ուղղված էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցումը:

17) **Էլեկտրոնային հաղորդագրություն՝** Կենտրոնական բանկի կարգերին համապատասխան կազմվող և փոխանցվող հաղորդագրություններ, որոնք կապված են Համակարգով իրականացվող գործառնությունների հետ:

18) **Մոտիվ՝** Համակարգում կիրառվող հաղորդագրություններում գործառնությունների բնութագրման համար սահմանված տառաթվային կոդեր, որոնք ունիկալ են և կիրառվում են միայն սահմանված գործառույթը նույնականացնելու համար:

19) **Կարգավիճակ՝** Համակարգում գործառնությունների իրականացման հետ կապված առաջացած իրավիճակի բնութագրում: Կարգավիճակների ցանկը սահմանված է Կանոնների Հավելված 3-ով և 4-ով:

20) **Մոնիթորինգ համակարգ՝** իրական ժամանակով գործող համակարգ, որը ապահովում է Հայտերի ուղարկումը և Մասնակիցներին հասանելի տեղեկատվության տրամադրումը, ըստ սահմանված ընթացակարգերի.

21) **Գործարքի կողմ՝** Կենտրոնական բանկը և Համակարգի այն Մասնակիցը, որը Կանոններով և Գլխավոր համաձայնագրով սահմանված կարգով Կենտրոնական բանկի հետ կնքել է ռեպո, միջօրյա ռեպո, լոմբարդային ռեպո կամ հակադարձ ռեպո գործարք.

22) **Ռեպո գործարքի գումար՝** ռեպո գործարքի կնքման պահին այդ գործարքի պայմաններին համապատասխան՝ ՀՀ դրամով արտահայտված դրամական միջոցների չափը.

23) **Միջօրյա ռեպո գործարքի գումար՝** միջօրյա ռեպո գործարքի կնքման պահին այդ գործարքի պայմաններին համապատասխան՝ ՀՀ դրամով արտահայտված դրամական միջոցների չափը.

24) **Հակադարձ ռեպո գործարքի գումար՝** հակադարձ ռեպո գործարքի կնքման պահին այդ գործարքի պայմաններին համապատասխան՝ ՀՀ դրամով արտահայտված դրամական միջոցների չափը.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

25) **Ռեպո գործարք՝** իրավական մեկ ամբողջություն կազմող գործարք, որի շրջանակներում գործարքի կողմերը ստանձնում են ստորև նշված փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները.

Մասնակիցը պարտավորվում է՝

- Ռեպո գործարքի կատարման օրը Կենտրոնական բանկին վաճառել Ռեպո Ընդունելի արժեթղթեր.
- ռեպո գործարքի մարման օրը հետ գնել վաճառված Ռեպո արժեթղթերը կամ դրանց համարժեք և Ռեպո զամբյուղում հաշվառվող այլ Ընդունելի արժեթղթեր.
- Ռեպո գործարքի մարման օրը վերադարձնել Կենտրոնական բանկին Ռեպո գործարքով իրեն վճարված գումարը և վճարել այդ գումարի նկատմամբ Ռեպո գործարքի պայմաններին համապատասխան հաշվարկված տոկոսները.

Կենտրոնական բանկը պարտավորվում է՝

- Ռեպո գործարքի կատարման օրը Մասնակցից գնել Ռեպո արժեթղթերը.
- Ռեպո գործարքի կատարման օրը Ռեպո գործարքի կատարման պայմաններին համապատասխան Մասնակցին վճարել Ռեպո գործարքի գումարը.
- գործարքի մարման օրը Մասնակցի ընտրությամբ Մասնակցին հետ վաճառել Ռեպո արժեթղթերը կամ դրանց համարժեք և Ռեպո զամբյուղում հաշվառվող այլ Ընդունելի արժեթղթեր.

26) **Լոմբարդային ռեպո գործարք՝** Կանոններով սահմանված դեպքերում և կարգով Միջօրյա ռեպո գործարքի վերաձևակերպման արդյունքում կնքվող և կնքմանը հաջորդող բանկային օրը Միջօրյա ռեպո գործարքի վերաձևակերպման միջոցով մարվող Ռեպո գործարք.

27) **Միջօրյա ռեպո գործարք՝** նույն բանկային օրվա ընթացքում կնքվող և մարվող, իրավական մեկ ամբողջություն կազմող անտոկոս գործարք, որի շրջանակներում ՝

Մասնակիցը՝

- գործարքի կնքման օրը Կենտրոնական բանկին վաճառում է Ռեպո արժեթղթեր.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

- Ռեպո արժեթղթերը Կենտրոնական բանկին վաճառելուց հետո իրավունք է ստանում գործարքի կնքման օրվա ընթացքում՝ ներկայացված Միջօրյա հայտի հիման վրա Կենտրոնական բանկից պահանջել, միանվագ կամ մասնակի վճարումներով Մասնակցին վճարել Կենտրոնական բանկին վաճառված Ռեպո արժեթղթերի արժողությանը համարժեք դրամական միջոցներ, իսկ չվճարված դրամական միջոցների դիմաց գործարքի կնքման օրվա ընթացքում Կենտրոնական բանկից պահանջել Մասնակցին սեփականության իրավունքով հետ փոխանցել Ռեպո արժեթղթեր կամ դրանց համարժեք և Ռեպո զամբյուղում հաշվառվող այլ Ընդունելի արժեթղթեր.
- պարտավորվում է գործարքի մարման օրը Կենտրոնական բանկին վերադարձնել վերջինիս կողմից Մասնակցին վճարված դրամական միջոցները.

Կենտրոնական բանկը՝

- պարտավորվում է Մասնակցի կողմից Կենտրոնական բանկին վաճառված Ռեպո արժեթղթերի դիմաց Մասնակցին վճարել առավելագույնը Ռեպո արժեթղթերի արժողությանը համարժեք դրամական միջոցներ՝ Մասնակցի կողմից ներկայացված Միջօրյա հայտում նշված գումարի չափով.
- պարտավորվում է դրամական միջոցների չվճարման դեպքում Մասնակցի պահանջով գործարքի կնքման օրվա ընթացքում Մասնակցի սեփականությանը փոխանցել չվճարված դրամական միջոցներին համարժեք Ռեպո արժեթղթեր կամ Մասնակցի ընտրությամբ դրանց համարժեք և Ռեպո զամբյուղում հաշվառվող այլ Ընդունելի արժեթղթեր.
- պարտավորվում է գործարքի մարման օրը՝ Կանոններով սահմանված պահին, Մասնակցի սեփականությանը փոխանցել չվճարված դրամական միջոցներին համարժեք Ռեպո արժեթղթեր կամ Մասնակցի ընտրությամբ դրանց համարժեք և Ռեպո զամբյուղում հաշվառվող այլ Ընդունելի արժեթղթեր.
- Իրավասու է Կանոններով սահմանված դեպքերում և կարգով կատարված Միջօրյա ռեպո գործարքը վերաձևակերպել

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Լոմբարդային ռեպո գործարքի.

28) **Հակադարձ ռեպո գործարք՝** իրավական մեկ ամբողջություն կազմող գործարք, որի շրջանակներում Կենտրոնական բանկը գործարքի կատարման օրը Մասնակցին է վաճառում Պետական արժեթղթեր՝ գործարքի մարման օրը դրանք հետ գնելու և սահմանված տոկոսագումար վճարելու պարտավորությամբ, իսկ Մասնակիցը սեփականության իրավունքով ձեռք է բերում Պետական արժեթղթերը՝ դրանք գործարքի մարման օրը Կենտրոնական բանկին հետ վաճառելու պարտավորությամբ.

29) **Ռեպո արժեթղթեր (Ապահովվածություն)՝** յուրաքանչյուր առանձին Ռեպո կամ Միջօրյա ռեպո գործարքների կատարման համար Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով փոխանցված Ընդունելի արժեթղթեր, որոնց արժողությունը համարժեք է Ռեպո կամ Միջօրյա ռեպո գործարքի գումարին:

30) **Գլխավոր համաձայնագիր՝** ռեպո գործարքների Գլխավոր համաձայնագիր և հակադարձ ռեպո գործարքների Գլխավոր համաձայնագիր.

31) **Ռեպո գործարքների գլխավոր համաձայնագիր՝** Կենտրոնական բանկի և Մասնակցի միջև անորոշ ժամկետով կնքված համաձայնագիր, որով՝ ի լրումն սույն Կանոնների, կարգավորվում են միջօրյա ռեպո գործարքների, ռեպո գործարքների և լոմբարդային ռեպո գործարքների կնքման, կատարման և մարման հետ կապված՝ Կենտրոնական բանկի և Մասնակցի միջև ծագող հարաբերությունները.

32) **Հակադարձ ռեպո գործարքների գլխավոր համաձայնագիր՝** Կենտրոնական բանկի և Մասնակցի միջև անորոշ ժամկետով կնքված համաձայնագիր, որով՝ ի լրումն սույն Կանոնների, կարգավորվում են հակադարձ ռեպո գործարքների կնքման, կատարման և մարման հետ կապված՝ Կենտրոնական բանկի և Մասնակցի միջև ծագող հարաբերությունները.

33) **Ռեպո զամբյուղ՝** Կենտրոնական բանկում յուրաքանչյուր Մասնակցի համար վարվող հաշվառման համակարգ, որտեղ Կանոններով սահմանված հիմքերով, կարգով և պայմաններով հաշվառվում է ռեպո զամբյուղի պետական արժեթղթերի բաղադրիչը, կորպորատիվ արժեթղթերի բաղադրիչը և ռեպո զամբյուղի դրամական բաղադրիչը.

34) **Հակադարձ ռեպո զամբյուղ՝** Կենտրոնական բանկում յուրաքանչյուր Մասնակցի համար վարվող հաշվառման համակարգ, որտեղ հաշվառվում են տվյալ օրը Մասնակցի կողմից Հակադարձ ռեպո գործարքների կատարման նպատակով Կանոններով սահմանված կարգով Կենտրոնական բանկին

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

փոխանցված դրամական միջոցները, ինչպես նաև Հակադարձ ռեպո գործարքների մարման նպատակով Կենտրոնական բանկին փոխանցված Հակադարձ ռեպո արժեթղթերը.

35) **Ռեպո զամբյուղի պետական արժեթղթերի բաղադրիչ՝** ռեպո Գլխավոր համաձայնագրի գործողության ընթացքում Մասնակցի կողմից Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով փոխանցված և ռեպո զամբյուղում հաշվառվող Պետական արժեթղթերի ամբողջությունը.

36) **Ռեպո զամբյուղի կորպորատիվ արժեթղթերի բաղադրիչ՝** ռեպո Գլխավոր համաձայնագրի գործողության ընթացքում Մասնակցի կողմից Կենտրոնական բանկին սեփականության իրավունքով փոխանցված և ռեպո զամբյուղում հաշվառվող Կորպորատիվ արժեթղթերի ամբողջությունը.

37) **Ռեպո զամբյուղի դրամական բաղադրիչ՝** Կանոններով սահմանված ցանկացած հիմքով ռեպո զամբյուղ մուտքագրված և ռեպո զամբյուղում հաշվառվող դրամական միջոցների հանրագումար.

38) **Ռեպո զամբյուղի (փաստացի) արժողություն՝** Ռեպո զամբյուղում յուրաքանչյուր պահի դրությամբ հաշվառվող բոլոր Արժեթղթերի արժողության և առկա դրամական միջոցների հանրագումարը.

39) **Ռեպո զամբյուղի նվազագույն (պահանջվող) արժողություն՝** Ռեպո զամբյուղի արժողություն, որը հավասար է կատարված Ռեպո, Լոմբարդային ռեպո և կատարված Միջօրյա ռեպո գործարքների գումարների հանրագումարին.

40) **Ռեպո զամբյուղի բացասական արժողություն (պակասորդ)՝** Ռեպո զամբյուղի արժողության և ռեպո զամբյուղի նվազագույն արժողության միջև բացասական տարբերության չափը.

41) **Ռեպո զամբյուղի ավելցուկային (դրական) արժողություն** ՝ Ռեպո զամբյուղի արժողության և ռեպո զամբյուղի նվազագույն արժողության միջև դրական տարբերության չափը.

42) **Ռեպո զամբյուղի վերագնահատում՝** յուրաքանչյուր օր Ռեպո զամբյուղում հաշվառվող Ընդունելի արժեթղթերի արժողության որոշում՝ հիմք ընդունելով Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող եկամտաբերության կորը և Հեյրքաթը:

43) **Արժեթուղթ՝** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված արժեթղթեր.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

44) **Ընդունելի արժեթղթեր՝** պետական և(կամ) կորպորատիվ արժեթղթեր, որոնք ընդգրկված են արժեթղթերի ցանկում և կարող են լինել ռեպո, միջօրյա ռեպո, լոմբարդային ռեպո գործարքի առարկա.

45) **Արժեթղթերի ցանկ՝** Կենտրոնական բանկի կողմից սահմանված արժեթղթեր, որոնց ցանկը օրական կտրվածքով հրապարակվում է Կենտրոնական բանկի տնային էջում.

46) **Պետական արժեթղթեր՝** Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկված Պետական (Գանձապետական) պարտատոմսեր և Կենտրոնական բանկի կողմից թողարկված պարտատոմսեր.

47) **Կորպորատիվ արժեթղթեր՝** Պետական արժեթղթեր չհանդիսացող Արժեթղթեր

48) **Արժեթղթի արժողություն՝** Ընդունելի արժեթղթի ընթացիկ գին, որը նվազեցված է Հեյրքաթի տոկոսի չափով: Ընդունելի արժեթուղթ չհանդիսացող Արժեթղթի արժողությունը սահմանվում է զրո:

49) **Արժեթղթի ընթացիկ գին՝** արժեթղթի՝ Կենտրոնական բանկի կողմից հրապարակվող եկամտաբերության կորի հիման վրա յուրաքանչյուր օր որոշվող գին.

50) **Հեյրքաթ (կամ սկզբնական մարժա)՝** յուրաքանչյուր Ընդունելի արժեթղթի համար սահմանվող տոկոս, որի չափով Համակարգում նվազեցվում է այդ արժեթղթի ընթացիկ գինը: Հակադարձ ռեպո գործարքների դեպքում Հեյրքաթ չի կիրառվում.

51) **Թրիգեր փոինթ (կամ շեմ)՝** Կենտրոնական բանկի կողմից սահմանված տոկոս, որի հիման վրա հաշվարկվում է Մասնակցին օրվա վերջում վերադարձման ենթակա Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողությունը.

52) **Թրիգեր արժողություն (Մարժա)՝** Թրիգեր փոինթի հիման վրա հաշվարկված արժողություն, որի չափով օրվա վերջում նվազեցվում է Մասնակցին հետ փոխանցվող Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողությունը.

53) **Արժեթղթի փոխարինում՝** Ռեպո զամբյուղում հաշվառվող Ընդունելի արժեթղթի մեկ տեսակի փոխարինում դրան համարժեք արժողությամբ այլ Ընդունելի արժեթղթի տեսակով.

54) **Աճուրդ՝** Կենտրոնական բանկի կողմից ռեպո գործարք կամ հակադարձ ռեպո գործարք կնքելու նպատակով կազմակերպվող մրցութային գործընթաց, որին Մասնակիցները ներկայացնում են Հայտեր.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

55) **Աճուրդի հայտարարման ամսաթիվ (օր)**՝ Կենտրոնական բանկի կողմից աճուրդի անցկացման վերաբերյալ հայտարարության հրապարակման օր.

56) **Աճուրդի իրականացում/անցկացում**՝ Մասնակիցների կողմից ուղարկված Հայտերի ամփոփում, արդյունքների հաստատում և Մասնակիցներին արդյունքների մասին տեղեկացում.

57) **Գործարքի հայտ կամ Հայտ**՝ Մասնակցի կողմից Կանոններով սահմանված կարգով և պայմաններով Կենտրոնական բանկին ներկայացված առաջարկություն՝ ռեպո գործարք կամ հակադարձ ռեպո գործարք կնքելու վերաբերյալ: Ընդ որում՝ մեկ Հայտը կարող է պարունակել ռեպո գործարք կամ հակադարձ ռեպո գործարք կնքելու մեկ կամ մեկից ավելի առաջարկ.

58) **Միջօրյա հայտ**՝ Մասնակցի կողմից Կենտրոնական բանկին ուղղված պահանջ՝ Միջօրյա ռեպո գործարքի կնքման դեպքում դրամական միջոցներ ստանալու վերաբերյալ.

59) **Հայտի առաջնահերթություն**՝ Մասնակցի կողմից Հայտին տրված առաջնահերթություն (ցանկացած թիվ 1-ից 99 միջակայքից), ըստ որի Կենտրոնական բանկի կողմից պետք է կատարվեն կնքված ռեպո, միջօրյա ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքները: Միջօրյա հայտը ունի ամենաբարձր առաջնահերթությունը, որը ավտոմատ սահմանվում է զրո.

60) **Հայտի ընդունում**՝ Մասնակցի կողմից Կենտրոնական բանկին ներկայացված Հայտը, Միջօրյա հայտը մշակման նպատակով Կենտրոնական բանկի կողմից ընդունելու վերաբերյալ ծանուցման (ՀՏ 534) ուղարկում Մասնակցին, որի միջոցով Մասնակիցը տեղեկացվում է ընդունված հայտի կարգավիճակի վերաբերյալ: Մինչև ուղարկված Հայտի վերաբերյալ Մասնակցի կողմից համապատասխան ծանուցում ստանալը (ՀՏ 534), ուղարկված Հայտը համարվում է Համակարգի կողմից չընդունված:

61) **Հայտի մերժում**՝ Կենտրոնական բանկի ծանուցումը Մասնակցին՝ վերջինիս կողմից ներկայացված Հայտը, դրանում առկա տեխնիկական սխալների պատճառով, Կենտրոնական բանկի կողմից մշակման նպատակով չընդունելու վերաբերյալ (ՀՏ 534 ըստ համապատասխան մոտիվի).

62) **Հայտի ակցեպտավորում**՝ Հայտը ստացողի ծանուցումը Հայտը ուղարկողին՝ վերջինիս կողմից ներկայացված առաջարկները ընդունելու (մասնակի ընդունելու) վերաբերյալ (ՀՏ 512 ըստ համապատասխան մոտիվի): Մասնակցի կողմից առաքված ցանկացած Հայտ հանդիսանում է գործարքի կնքման օֆերտա, որը պարունակում է Բանկի կողմից կնքվող գումարի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

առավելագույն սահմանաքանակ: Ընդ որում, առաջարկվող գումար է համարվում տվյալ Հայտում նշված Առաջարկությունների գումարների հանրագումարի առավելագույն չափը, ինչպես նաև մինչև այդ առավելագույն չափը ընկած ցանկացած դրական գումար, որի առավելագույն գումարի բավարարումը համարվում է լրիվ, իսկ մինչև առավելագույն գումարը ընկած ցանկացած դրական գումարի բավարարումը համարվում է մասնակի բավարարում, ինչը (հայտի հաստատումը կամ բավարարումը) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի իմաստով համարվում է ակցեպտ:

Հայտն ուղարկողի ներկայացված առաջարկները Հայտը ստացողի կողմից չընդունելու (մասնակի չընդունելու) դեպքում, Հայտ ստացողը այդ մասին ուղարկում է համապատասխան ծանուցում Հայտ ուղարկողին (ՀՏ 512 ըստ համապատասխան մոտիվի).

63) **Գործարքի կնքման ամսաթիվ (օր)**՝ այն Բանկային օրն է, երբ ռեպո, միջօրյա ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքը համարվում է կնքված:

Ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքը կնքված է համարվում Հայտը Կենտրոնական բանկի կողմից ակցեպտավորելու պահից: Ընդ որում՝ Հայտում նշված և Հայտի ակցեպտավորման արդյունքում ընդունված յուրաքանչյուր առաջարկ համարվում է կնքված առանձին գործարք:

Միջօրյա ռեպո գործարքը կնքված է համարվում Ռեպո զամբյուղում Ավելցուկային արժողության առաջանալու պահից:

Լոմբարդային ռեպո գործարքը կնքված է համարվում Կանոններով սահմանված դեպքերում և կարգով չմարված Միջօրյա ռեպո գործարքը Լոմբարդային ռեպո գործարքի վերածևակերպման պահից.

64) **Գործարքի կատարում**՝ կնքված ռեպո գործարքի կամ հակադարձ ռեպո Գործարքի կողմերի կողմից այդ գործարքով ստանձնած իրենց փոխադարձ պարտավորությունների կատարում, իսկ կնքված Միջօրյա ռեպո գործարքի դեպքում՝ Մասնակցի կողմից ներկայացված Միջօրյա հայտի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների վճարում.

65) **Գործարքի մասնակի կատարում**՝ կնքված ռեպո գործարքի կամ հակադարձ ռեպո Գործարքի կողմ հանդիսացող Մասնակցի կողմից այդ գործարքով ստանձնած պարտավորությունների մասնակի կատարում:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Գործարքի մասնակի կատարման դեպքում Մասնակիցը ենթարկվում է Կանոններով և Գլխավոր համաձայնագրով նախատեսված պատասխանատվության:

66) **Գործարքի կատարման ամսաթիվ (օր)**՝ այն օրը, երբ պետք է կատարվի կնքված ռեպո, լոմբարդային ռեպո, միջօրյա ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքը՝ այդ գործարքի պայմաններին համաձայն: Եթե Գործարքի կատարման ամսաթիվը հանդիսանում է ոչ Բանկային օր, ապա Գործարքի կատարման ամսաթիվ է համարվում այդ օրվան հաջորդող առաջին Բանկային օրը.

67) **Գործարքի կատարման հաստատում**՝ Կենտրոնական բանկի կողմից Մասնակցին ուղղված հաղորդագրություն (ՀՏ 514), որով հաստատվում է կնքված ռեպո, միջօրյա ռեպո, լոմբարդային ռեպո գործարքների և(կամ) հակադարձ ռեպո գործարքների կատարման արդյունքները (արդյոք դրանք կատարվել են ամբողջ ծավալով կամ մասնակի).

68) **Գործարքի մարում**՝ Գործարքի կողմերի միջև գործարքից ծագած փոխադարձ պարտավորությունների դադարում՝ Կանոններով և(կամ) Գլխավոր համաձայնագրով սահմանված կարգով այդ պարտավորությունների պատշաճ կատարման հետևանքով, այդ թվում՝ Կանոններով կամ Գլխավոր համաձայնագրով նախատեսված դեպքերում հաշվանցով կամ վերաձևակերպմամբ:

Յուրաքանչյուր ստորև նշված գործարքների դեպքում Գործարքի մարում հասկացությունն ունի հետևյալ իմաստը՝

1.Կնքված Միջօրյա ռեպո գործարքի դեպքում՝

Մասնակցի կողմից ներկայացված Միջօրյա հայտի հիման վրա Կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների վճարում, կամ

Մասնակցի կողմից Կենտրոնական բանկին փոխանցված Արժեթղթերի վերադարձ Մասնակցին՝ օրվա վերջում կամ օրվա ընթացքում, կամ

Կնքված միջօրյա ռեպո գործարքի վերաձևակերպում օրվա ընթացքում կնքված ռեպո գործարքի, կամ

Կնքված միջօրյա ռեպո գործարքի վերաձևակերպում՝ Կանոններով և(կամ) Գլխավոր ռեպո համաձայնագրով նախատեսված այլ դեպքերում:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

2. **Կատարված Ռեպո գործարքի դեպքում՝**

   Օրվա սկզբում Ռեպո և(կամ) Լոմբարդային ռեպո գործարքի վերաձևակերպում Միջօրյա ռեպո գործարքի.

3. **Կատարված Միջօրյա ռեպո գործարքի դեպքում՝**

   Կատարված Միջօրյա ռեպո գործարքով ստացված դրամական միջոցները Կանոններով նախատեսված կարգով Կենտրոնական բանկին վերադարձնելու և այդ Կատարված Միջօրյա ռեպո գործարքը Կանոններով սահմանված կարգով վերաձևակերպելու արդյունքում.

   Կատարված Միջօրյա ռեպո գործարքով ստանձնած պարտավորությունները կատարման ենթակա Ռեպո գործարքով ստանձնած պարտավորությունների դիմաց հաշվանցելու դեպքում, կամ

   Կատարված Միջօրյա ռեպո գործարքի վերաձևակերպում Լոմբարդային ռեպո գործարքի.

   Կատարված միջօրյա ռեպո գործարքի վերաձևակերպման՝ Կանոններով և(կամ) Գլխավոր ռեպո համաձայնագրով նախատեսված այլ դեպքերում.

4. **Կատարված Հակադարձ ռեպո գործարքի դեպքում՝** Հակադարձ ռեպո արժեթղթերի վերադարձ Կենտրոնական բանկին և համապատասխան դրամական միջոցների վերադարձ Մասնակցին:

69) **Գործարքի մարման ամսաթիվ (օր)**՝ այն օրը, երբ պետք է մարվի կատարված ռեպո, լոմբարդային ռեպո, միջօրյա ռեպո կամ հակադարձ ռեպո գործարքը՝ այդ գործարքի պայմաններին համաձայն: Եթե Գործարքի մարման ամսաթիվը հանդիսանում է ոչ բանկային օր, ապա Գործարքի մարման ամսաթիվ է համարվում այդ օրվան հաջորդող առաջին բանկային օրը.

70) **Ռեպո գործարքի լուծում**՝ Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքի կողմերի միջև այդ գործարքներից ծագած փոխադարձ պարտավորությունների դադարում՝ գործարքի կողմ հանդիսացող Մասնակցի կողմից այդ գործարքով, իսկ Կանոններով և(կամ) Գլխավոր համաձայնագրով սահմանված դեպքերում՝ նաև այլ գործարքներով ստանձնած իր պարտավորության խախտման հետևանքով: Ռեպո գործարքի լուծման դեպքերը, կարգը և հետևանքները սահմանվում են Կանոններով և(կամ) Գլխավոր համաձայնագրով: Կանոններով նախատեսված դեպքերում կարող են լուծվել կատարման ենթակա առանձին գործարքները և(կամ) լուծման պահին առկա բոլոր կատարված գործարքները.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

71) **Հակադարձ ռեպո գործարքի լուծում՝** Հակադարձ ռեպո գործարքի կողմ հանդիսացող Մասնակցի կողմից այդ գործարքով ստանձնած իր պարտավորության խախտման հետևանքով Կանոններով և(կամ) Գլխավոր համաձայնագրով սահմանված դեպքերում, կարգով և հետևանքների կիրառմամբ այդ գործարքի կողմերի միջև այդ գործարքից ծագած փոխադարձ պարտավորությունների դադարում:

72) **Զուտացում՝** կնքված մեկ կամ մեկից ավելի Ռեպո գործարքի և կատարված Միջօրյա ռեպո գործարքի և(կամ) Կանոններից և(կամ) Ռեպո գործարքների Գլխավոր համաձայնագրից ծագած Կենտրոնական բանկի և Մասնակցի փոխադարձ իրավունքների և պարտավորությունների հաշվանց.

73) **Չեղյալացում՝** Համակարգում Հայտարարված աճուրդի և(կամ) ընդունված Հայտի և(կամ) Միջօրյա հայտի անվավեր ճանաչելը:

74) **Էլեկտրոնային վճարումների համակարգ՝** Կենտրոնական բանկի միջբանկային վճարումների էլեկտրոնային համակարգ

75) **Փոխկապված համակարգեր՝** Էլեկտրոնային վճարումների համակարգ, «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ»:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

2. ԳԼՈՒԽ. «ՌԵՊՈ/ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ» ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

2.1 Համակարգում Լիազոր օգտագործողների գրանցումը, «Մոնիթորինգի» միջոցով գործառնությունների իրականացման համար իրավասությունների տրամադրումը, փոփոխումը

1. Ֆինանսական կազմակերպությունը կարող է դառնալ Համակարգի մասնակից Գլխավոր համաձայնագրի կնքումից և Համակարգում գրանցվելուց հետո: Համակարգին անդամակցելու համար Ֆինանսական կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ պահանջներին.
   1) Անդամակցություն Սի-Բի-Էյ-Նեթ միջբանկային համակարգչային ցանցին, այդ թվում Լիազոր օգտագործողի Համակարգչի միացում Սի-Բի-Էյ-Նեթ ցանցին,
   2) Կենտրոնական բանկում թղթակցային հաշվի կամ հաշվարկային հաշվի առկայություն,
   3) Անդամակցություն «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգին» և (կամ) Կենտրոնական դեպոզիտարիայի պահառուական համակարգին,
   4) Անդամակցություն «Էլեկտրոնային վճարումների համակարգին»,
   5) Լիազոր օգտագործողի համակարգչին ներկայացվող նվազագույն տեխնիկական չափանիշների (հավելված 2.1) բավարարում:
2. Համակարգում Մասնակիցների և վերջիններիս Լիազոր օգտագործողների գրանցումը, փոփոխումը կամ հեռացումը կատարվում է Համակարգի օպերատորի կողմից:
3. Միևնույն Մասնակիցը կարող է ունենալ Համակարգում գրանցված մի քանի Լիազոր օգտագործողներ, որոնց կարող են տրվել տարբեր իրավասություններ:
4. Համակարգում գրանցված յուրաքանչյուր Մասնակցի Լիազոր օգտագործողին տրվում է վերջինիս նույնականացնող կոդ-(ID), որը ունիկալ է և թույլ է տալիս տվյալ Լիազոր օգտագործողին մուտք գործել Համակարգ, կատարել համապատասխան գործառնություններ՝ ըստ իրեն վերապահված իրավասությունների:
5. Եթե Մասնակիցը (Լիազոր օգտագործողը) դեռ չի գրանցվել Համակարգին անդամակցող Մասնակիցների (Լիազոր օգտագործողների) ցանկում, ապա վերջինս չի կարող Համակարգի միջոցով գործառնություններ իրականացնել:
6. Համակարգում Մասնակցի և վերջինիս Լիազոր օգտագործողների գրանցման համար Մասնակիցը Համակարգի օպերատորին ներկայացնում է դիմում՝ համաձայն Կանոնների Հավելված 1-ի: Ընդ որում՝
   1) Մասնակիցը ներկայացնում է Լիազոր օգտագործողների և վերջիններիս կողմից իրականացվող գործառնությունների ցանկը, ըստ Լիազոր օգտագործողների:
   2) Յուրաքանչյուր լիազոր օգտագործողի հետ կապված իրավասությունների տրամադրման կամ հեռացման համար Մասնակիցը ներկայացնում է դիմում համաձայն Կանոնների Հավելված 2-ի:
   3) Համակարգի օպերատորի կողմից Մասնակցի, ինչպես նաև վերջինիս Լիազոր օգտագործողների գրանցման կամ մերժման դեպքում վերջինիս

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

տրվում է համապատասխան տեղեկացում այդ մասին (Սի-Բի-Էյ-Նեթ միջբանկային համակարգչային ցանցով կամ հեռախոսով):

4) Համակարգի օպերատորը մերժում է Մասնակցի, ինչպես նաև վերջինիս Լիազոր օգտագործողների գրանցումը, եթե Կանոններով սահմանված կարգով չեն ապահովվել ներկայացվող պահանջները, դիմումի լրացման ձևը ներկայացվել է ոչ ճշգրիտ կամ ներկայացվել են ոչ ամբողջական տվյալներ:

Սույն կետում նշված դիմումները՝ Կենտրոնական բանկ են ներկայացվում թղթային եղանակով: Համակարգի օպերատորի կողմից Համակարգում Մասնակցի և վերջինիս Լիազոր օգտագործողների գրանցումը (մերժումը) կատարվում է սույն կետում նշված յուրաքանչյուր համապատասխան դիմումի ընդունումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

3. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ «ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ» ՄԻՋՈՑՈՎ ՀԱՍԱՆԵԼԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ, ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

3.1 «Մոնիթորինգ» համակարգի միջոցով մասնակիցների կողմից իրականացվող գործառնությունները և հասանելի տվյալները

7. Յուրաքանչյուր Մասնակցի համար «Մոնիթորինգ» համակարգում առանձնացվում է համապատասխան աշխատանքային տիրույթ՝ ըստ իրեն տրված իրավասությունների: Համակարգը ապահովում է ըստ Մասնակիցների առանձնացված աշխատանքային տիրույթում առկա տվյալների հասանելիությունը միայն վերջինիս Լիազոր օգտագործողների համար:
8. Մասնակցի աշխատանքային տիրույթը Լիազոր օգտագործողին կարող է հասանելի լինել
   1) Մասնակցի մոտ տեղակայված Լիազոր օգտագործողի Համակարգչի միջոցով
   2) Կենտրոնական բանկում տեղակայված աշխատանքային կայանի միջոցով:
9. Համակարգում Մասնակցի կողմից Հայտերը, Միջօրյա հայտերը ներկայացվում են «Մոնիթորինգին» միացված Լիազոր օգտագործողի Համակարգչի միջոցով: Վերջինիս միջոցով նշված հայտերի ուղարկման անհնարինության դեպքում դրանք կարող են Կենտրոնական բանկ ներկայացվել ստորև նշված այլընտրանքային տարբերակով.
   Կենտրոնական բանկում տեղակայված աշխատանքային կայանի միջոցով:

   Ընդ որում, միևնույն Մասնակցի կողմից Մոնիթորինգի միջոցով ներկայացված Հայտերի, Միջօրյա հայտերի մշակման նկատմամբ առանձին առաջնահերթություն չի տրվում: Համակարգում մուտքագրված այդ հայտերի մշակումը կատարվում է ըստ դրանց ընդունման հաջորդականության:

10. Համակարգի Մասնակիցները «Մոնիթորինգի» միջոցով՝ ըստ Ռեպո, Միջօրյա ռեպո, Հակադարձ ռեպո գործարքների կարող են իրականացնել.

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ա/ Հայտերի, Միջօրյա հայտերի ներկայացման հետ կապված գործառնությունների իրականացում.

1) Հայտարարված աճուրդի տվյալների դիտարկում,
2) Աճուրդի միջոցով Հայտերի մուտքագրում/ներկայացում Կենտրոնական բանկ
3) Միջօրյա հայտերի մուտքագրում/ներկայացում Կենտրոնական բանկ,
4) Երկկողմանի գործարքների հայտերի մուտքագրում/ներկայացում Կենտրոնական բանկ,
5) Մասնակցի կողմից ուղարկված Հայտերի, Միջօրյա հայտերի և դրանց պատասխանների դիտարկում,
6) Կենտրոնական բանկի կողմից ընդունված Հայտերի, Միջօրյա հայտերի դիտարկում, դրանց փոխարինում կամ չեղարկում,

բ/ Համակարգով գործարքների կնքման և կատարման հետ կապված տեղեկատվության դիտարկում.

1) Ակցեպտավորված գործարքների դիտարկում,
2) Օրվա ընթացքում կատարման և մարման ենթակա Գործարքների դիտարկում
3) Բոլոր գործարքների դիտարկում (մարված, գործող, չեղարկված և այլն),
4) «Ռեպո զամբյուղի» մակարդակի դիտարկում
5) «Հակադարձ ռեպո զամբյուղի» դիտարկում
6) «Ռեպո զամբյուղի» բաղադրիչների դիտարկում
7) Կիրառված տույժերի/տուգանքների դիտարկում
8) Կնքված և չկատարված Միջօրյա ռեպո գործարքների դիտարկում

11. Մասնակցի կողմից Հայտերի, Միջօրյա հայտերի ներկայացումը կատարվում է ըստ սահմանված էլեկտրոնային հաղորդագրությունների: Ըստ իրականացվող գործարքների՝ ներկայացվող Հայտերն են.
    1) ռեպո աճուրդի հատ
    2) հակադարձ ռեպո աճուրդի հատ,
    3) երկկողմանի գործարքի հայտ, (ռեպո, հակադարձ ռեպո),
    4) Միջօրյա հայտ (կնքված Միջօրյա ռեպո գործարքի կատարման համար)
12. Հայտերը, Միջօրյա հայտերը կարող են ներկայացնել գրանցված այն Լիազոր օգտագործողները, որոնք ունեն համապատասխան իրավասություններ:
13. Համակարգի Մասնակիցների կողմից «Մոնիթորինգի» միջոցով ներկայացված Հայտերը, Միջօրյա հայտերը հիմք են հանդիսանում Համակարգի կողմից դրանց հետագա մշակման համար:
14. Ներկայացված Հայտերի, Միջօրյա հայտերի ընդունումը կատարվում է Համակարգի աշխատանքային ժամանակահատվածում մինչև դրանց ներկայացման համար սահմանված ժամանակահատվածի ավարտը :

3.2 Համակարգում Հայտերի, Միջօրյա հայտերի ներկայացումը Մոնիթորինգի միջոցով

15. Ռեպո գործարքը կարող է կնքվել հայտարարված աճուրդի միջոցով, երկկողմանի ռեպո գործարքով:
16. Հակադարձ ռեպո գործարքը կարող է կնքվել հայտարարված աճուրդի միջոցով,

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

երկկողմանի հակադարձ ռեպո գործարքով:

17. Աճուրդի Հայտերը մուտքագրվում և ընդունվում են տվյալ աճուրդի համար Համակարգում մուտքագրված ժամից սկսած մինչև այդ աճուրդի հետ կապված Հայտերի ընդունման համար մուտքագրված սահմանային ժամը: Համակարգում հայտարարված աճուրդի համար Մասնակիցներից Հայտերի ընդունումը դադարեցվում է ավտոմատ: Աճուրդին մասնակցելու համար սահմանված ժամից ուշ ներկայացված աճուրդի Հայտերը Համակարգում ավտոմատ մերժվում են:
18. Հայտերից և Միջօրյա հայտից բացի «Մոնիթորինգ» համակարգի միջոցով այլ հաղորդագրություններ չեն ներկայացվում:
19. Մասնակցի կողմից Մոնիթորինգ համակարգի միջոցով Հայտերը, Միջօրյա հայտերը ներկայացվում են իրական ժամանակում (on-line) առցանց սկզբունքով, ըստ Կենտրոնական բանկի կողմից սահմանված էլեկտրոնային հաղորդագրությունների:
20. Մասնակցի կողմից Հայտի ներկայացման ժամանակ տվյալ Հայտում նշված առաջարկությունների համար սահմանվում է առաջնահերթության կոդ, որը կարող է լինել 1-ից մինչև 99 ամբողջ թիվ: Եթե Մասնակցի կողմից Հայտի ներկայացման ժամանակ առաջնահերթության կոդը չի նշվում, ապա Համակարգի կողմից Հայտում ավտոմատ նշվում է 99 (ամենացածր առաջնահերթությունը), որը ընդհանուր է տվյալ Հայտում ներառված բոլոր առաջարկությունների համար:
21. Կնքված Միջօրյա ռեպոյի կատարման համար ներկայացվող Միջօրյա հայտում Մասնակցի կողմից առաջնահերթություն չի նշվում, այլ Համակարգի կողմից ավտոմատ եղանակով սահմանվում է 0-կան կոդ: Գործարքների կատարման ժամանակ, Միջօրյա հայտերը մյուս բոլոր Հայտերի նկատմամբ ունեն ամենաբարձր առաջնահերթությունը:
22. Համակարգում իրականացվում է Մասնակցի կողմից ուղարկված Հայտերի, Միջօրյա հայտերի ստուգում՝ ըստ սահմանված կանոնների (մասնակցի իրավասության, հայտում նշվող առաջարկության գումարի, տոկոսադրույքի և այլն): Համակարգում սահմանված ստուգման պահանջների ապահովման դեպքում Մասնակցի ուղարկված Հայտը, Միջօրյա հայտը ստանում է ընդունված կամ մերժված կարգավիճակ:
23. Մասնակցի կողմից ներկայացված Հայտերը, Միջօրյա հայտերը Համակարգի կողմից ընդունման դեպքում Մասնակիցը Մոնիթորինգ համակարգի միջոցով ստանում է համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն (ծանուցում) տվյալ հայտի ընդունման վերաբերյալ: Սխալ ներկայացված Հայտերը մերժվում են և Մոնիթորինգի միջոցով նույնպես տրվում է համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն (ծանուցում) այդ մասին:
24. Համակարգի կողմից ընդունված Հայտը աճուրդին մասնակցում է տվյալ հայտում նշված պայմաններով:
25. Մասնակիցը կարող է դիտարկել և փոփոխել ներկայացված աճուրդի Հայտի պայմանները, մինչև տվյալ աճուրդի Հայտերի ընդունման համար սահմանված ժամը, այն փոխարինելով նոր Հայտով: Երբ ընդունված Հայտում Մասնակիցը կատարում է փոփոխություններ՝ Համակարգի կողմից այն դիտարկվում է որպես ներկայացված նոր Հայտ, որի ընդունման հետ կապված վերջինիս տրվում է նոր ծանուցում: Յուրաքանչյուր նոր Հայտի ներկայացման դեպքում նախորդ Հայտը ստանում է չեղյալացված կարգավիճակ և այլևս չի մասնակցում աճուրդին:
26. Ներկայացված Երկկողմանի գործարքի Հայտի պայմանները Մասնակիցը կարող է փոփոխել մինչև այդ Հայտի ակցեպտավորումը Կենտրոնական բանկի կողմից: Այս Հայտի փոփոխումը Մասնակցի կողմից կարող է կատարվել ներկայացված նախորդ Հայտի պայմանները փոփոխելու միջոցով: Համակարգի կողմից այն դիտարկվում է որպես ներկայացված նոր Հայտ, որի ընդունման հետ կապված վերջինիս տրվում է նոր ծանուցում: Ընդ որում, երկկողմանի Հայտի

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

պայմանների փոփոխման դեպքում նախորդ Հայտը ավտոմատ կերպով չի չեղարկվում:

27. Մոնիթորինգ համակարգի միջոցով Մասնակցի կողմից կարող են չեղյալացվել (համապատասխան ստեղնով) ներկայացված աճուրդի Հայտերը և երկկողմանի Հայտերը:
28. Մասնակիցը կարող է դիտարկել և փոփոխել ներկայացված Միջօրյա հայտի պայմանները, եթե ավտոմատ ակցեպտավորված Միջօրյա հայտը դեռ չի կատարվել: Միջօրյա հայտում նշված պայմանների փոփոխման համար (նշված գումարի փոքրացում/մեծացում) պետք է ներկայացվի նոր Միջօրյա հայտ, որի արդյունքում նախորդ Միջօրյա հայտը ավտոմատ չեղյալացվում է:
29. Մասնակիցը կարող է չեղյալացնել իր դեռևս չկատարված Միջօրյա հայտը՝ վերջինիս փոփոխման միջոցով, ներկայացնելով նոր Միջօրյա հայտ, որի առաջարկության գումարը սահմանվում է զրո (0):
30. Մոնիթորինգի միջոցով Մասնակիցների կողմից Հայտերի, Միջօրյա հայտի ներկայացումը և ընդունումը Համակարգում իրականացվում է Մասնակիցների սպասարկման ժամանակահատվածում:

3.3 Համակարգին ուղղված Հայտերի, Միջօրյա հայտերի և հաղորդագրությունների ներկայացման այլընտրանքային տարբերակ

31. Որպես այլընտրանքային տարբերակ Մասնակցի Լիազոր օգտագործողը Հայտերը, Միջօրյա հայտերը կարող է ներկայացնել Կենտրոնական բանկում տեղակայված աշխատանքային կայանի միջոցով: Նշված հայտերի մուտքագրումը Համակարգ կատարվում է համապատասխան լիազորություններ ունեցող Մասնակցի Լիազոր օգտագործողի կողմից:
32. Լիազոր օգտագործողը, օգտվելով Կենտրոնական բանկում տեղակայված աշխատանքային կայանից, իր Հայտերը, Միջօրյա հայտերը կարող է մուտքագրել երկու եղանակով.
    1) «Մոնիթորինգ» համակարգում իրեն հասանելի աշխատանքային տիրույթում ձևավորում և հաստատում է իր Հայտը, Միջօրյա հայտը:
    2) «Մոնիթորինգ» համակարգում իրեն հասանելի աշխատանքային տիրույթի միջոցով իր էլեկտրոնային կրիչի վրայից Համակարգ է մուտքագրում նախօրոք ձևավորված Հայտը, Միջօրյա հայտը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված էլեկտրոնային հաղորդագրություններին համապատասխան:
33. Մասնակցի կողմից Հայտը, Միջօրյա հայտը թղթային եղանակով Կենտրոնական բանկ ներկայացնելու դեպքում այն Կենտրոնական բանկի կողմից չի ընդունվում: Թղթային եղանակող Հայտի, Միջօրյա հայտի ներկայացումը չի կիրառվում որպես այլընտրանքային տարբերակ:
34. Որպես այլընտրանքային տարբերակ Համակարգով գործարքների կատարման և մարման հետ կապված կարգադրությունները՝ դրամական միջոցների փոխանցման, արժեթղթերի փոխանցման, արժեթղթերի հետ փոխանցման վերաբերյալ, Մասնակիցների կողմից կարող են Կենտրոնական բանկ ներկայացվել թղթային եղանակով: Ընդ որում.

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

1) Թղթային եղանակով ներկայացվող կարգադրությունները ներկայացվում են.
ա/ դրամական միջոցների փոխանցման համար ներկայացվող վճարման հանձնարարականը, վերջինիս համար Կենտրոնական բանկի կողմից սահմանված իրավական ակտերին համապատասխան

բ/ արժեթղթերի փոխանցման հանձնարարականը (ՀՏ523), արժեթղթերի փոխանցման հանձնարարականի պատճենը (ՀՏ523 պատճենը), արժեթղթերի հետ փոխանցման հանձնարարականը (ՀՏ524) ներկայացվում են վերջիններիս համար սահմանված էլեկտրոնային հաղորդագրությունների դաշտերին և լրացման կարգին համապատասխան

2) Թղթային եղանակով կարգադրությունները ներկայացվում են մինչև վերջինիս համար՝ Համակարգով գործառնությունների իրականացման ժամանակացույցով սահմանված ժամը:
3) Մասնակիցը թղթային եղանակով կարգադրությունը Կենտրոնական բանկ է ներկայացնում առնվազն երկու և/կամ ավելի օրինակից, որոնցից մեկը պետք է ստորագրված և կնքված լինի (կնիքի առկայության դեպքում) Մասնակցի կողմից:
4) Ներկայացված կարգադրությունների բոլոր օրինակների տվյալները պետք է լինեն միևնույնը, լրացված լինեն առանց ջնջումների, պետք է բավարարեն և համապատասխանեն մուտքագրվող տվյալների նկատմամբ սահմանված պահանջներին: Եթե կարգադրությունը լրացվել և ներկայացվել է ջնջումներով կամ չի բավարարում սահմանված պահանջներին, այն մերժվում է և չի ընդունվում:
5) Ընդունված թղթային կարգադրության բոլոր օրինակների վրա նշվում է՝ ստացման ժամը (ժամ/րոպե) և վավերացվում ստացողի ստորագրությամբ: Թղթային եղանակով ներկայացված կարգադրության մեկ օրինակը մնում է Կենտրոնական բանկի մոտ, իսկ մյուսը ստորագրված և կնքված վերադարձվում է Մասնակցին:
6) Ժամանակացույցով սահմանված ժամից դուրս ներկայացված թղթային կարգադրությունը Կենտրոնական բանկի կողմից չի ընդունվում:

4. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

4.1 Համակարգում գործարքների կնքման վերաբերյալ հայտարարության իրականացումը

35. Աճուրդի միջոցով Ռեպո, Հակադարձ ռեպո գործարքների կնքման համար, Համակարգում նախապես մուտքագրվում են հայտարարվող աճուրդի հետ կապված տվյալներ:
36. Համակարգում հայտարարված աճուրդի վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը Լիազոր օգտագործողներին հասանելի է

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

1) Մոնիթորինգ համակարգի միջոցով
2) Կենտրոնական բանկի Վեբ-կայքի միջոցով
3) Սի-Բի-Էյ-Նեթ միջբանկային համակարգչային ցանցով՝ համապատասխան իրավասու հասցեների միջոցով:

37. Երկկողմանի գործարքների կնքման, ինչպես նաև Միջօրյա ռեպո գործարքների կնքման և Միջօրյա հայտերի կատարման համար Համակարգում այդ գործարքների հետ կապված առանձին չափանիշների հայտարարություն չի տրվում:

4.2 Համակարգում հայտարարված աճուրդի չեղյալացումը

38. Համակարգում հայտարարված աճուրդը ցանկացած պահի կարող է չեղյալացվել, մինչև աճուրդի Հայտերի ակցեպտավորումը: Հայտարարված աճուրդը կարող է չեղյալացվել անկախ Մասնակիցների կողմից Հայտերի ներկայացման հանգամանքից:
39. Համակարգում հայտարարված աճուրդը չեղյալ ճանաչվելու դեպքում Մասնակիցների կողմից այդ աճուրդի հետ կապված ներկայացված բոլոր Հայտերը համարվում են չեղյալ:
40. Եթե հայտարարված աճուրդը չեղյալացվել է, ապա Մասնակիցների կողմից տվյալ աճուրդի համար Հայտեր չեն կարող ներկայացվել:
41. Համակարգում հայտարարված աճուրդի չեղյալացման վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը Լիազոր օգտագործողներին կարող է հասանելի լինել
    1) Մոնիթորինգ համակարգի միջոցով
    2) Կենտրոնական բանկի Վեբ-կայքի միջոցով
    3) Սի-Բի-Էյ-Նեթ միջբանկային համակարգչային ցանցով՝ համապատասխան իրավասու հասցեների միջոցով:

5. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՀԱՅՏԻ ԵՎ ՄԻՋՕՐՅԱ ՀԱՅՏԻ ԱԿՑԵՊՏԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄԸ

5.1 Համակարգի միջոցով Հայտի ակցեպտավորումը և գործարքների կնքումը

42. Համակարգում Հայտերի ակցեպտավորումը և Ռեպո, Հակադարձ ռեպո գործարքի կնքումը կատարվում է համաձայն սույն կանոնների.
    1) Համակարգում Հայտերի ակցեպտավորումը կատարվում է այն Հայտերի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

համար, որոնք Համակարգի կողմից ընդունվել են և ստացել գործարքների կնքմանը մասնակցելու կարգավիճակ:

2) Համակարգի կողմից ընդունված Հայտերի ակցեպտավորումը՝ կնքվող գործարքի տեսակից կախված, կատարվում է սահմանված կանոնների համաձայն:
3) Հայտում առկա առաջարկությունների ակցեպտավորման փուլում՝ բավարարված, մասնակիորեն բավարարված և մերժված/չբավարարված առաջարկությունների վերաբերյալ համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության միջոցով (ՀՏ 512) Մասնակցին տրվում է տեղեկացում՝ արդյունքների վերաբերյալ:
4) Մասնակցի կողմից ներկայացված Հայտում նշված յուրաքանչյուր առաջարկություն Կենտրոնական բանկի կողմից ակցեպտավորվելուց հետո համարվում է կատարման ենթակա կնքված գործարք:
5) Յուրաքանչյուր կատարման ենթակա կնքված գործարքին Համակարգի կողմից ավտոմատ տրվում է համապատասխան համար, որով նույնականացվում է տվյալ գործարքը: Մասնակցին տրվող էլեկտրոնային հաղորդագրության միջոցով (ՀՏ 512) վերջինս տեղեկացվում է կատարման ենթակա Ռեպո, Հակադարձ ռեպո գործարքի գումարի, տոկոսադրույքի, կնքված գործարքի նույնականացման համարի վերաբերյալ:

43. Համակարգում և Ռեպո, Հակադարձ ռեպո գործարքի տեսակից կախված Հայտերի ակցեպտավորումը և կնքումը կատարվում է համաձայն սույն կանոնների.
    1) Աճուրդի Հայտերի ակցեպտավորումը և կնքումը իրականացվում է Համակարգում սահմանված Հայտերի ընդունման դադարեցման ժամից հետո: Եթե աճուրդի Հայտերը ներկայացվում են Համակարգում սահմանված ժամից ուշ, ապա դրանք մերժվում են և աճուրդի կնքման գործընթացին չեն մասնակցում:
    2) Աճուրդին ներկայացված Հայտերը կարող են բավարարվել համամասնորեն:
    3) Երկկողմանի գործարքի հայտերը (ռեպո, հակադարձ ռեպո հայտեր) չեն կարող ակցեպտավորվել մասնակի:
    4) Երկկողմանի գործարքի հայտերի (ռեպո, հակադարձ ռեպո հայտեր) ակցեպտավորումը և գործարքների կնքումը կատարվում է աճուրդի իրականացման ընթացակարգից դուրս:
    5) Երկկողմանի ռեպո Հակադարձ ռեպո գործարքները և աճուրդի միջոցով կնքվող Ռեպո, Հակադարձ ռեպո գործարքները կարող են կնքվել զուգահեռ, միմյանցից անկախ:
    6) Հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի մասին Մասնակիցը տեղեկացվում է միայն Հակադարձ ռեպո գործարքի կատարումից հետո: Հակադարձ ռեպո առաջարկության ակցեպտավորման ժամանակ գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերը դեռ չեն կապվում կնքված համապատասխան առաջարկությանը:

44. Համակարգում Միջօրյա ռեպո գործարքը կնքվում է Մասնակցի կողմից Ընդունելի արժեթղթերը Կենտրոնական բանկի համապատասխան դեպո հաշվին փոխանցելու արդյունքում, սահմանված Կանոնների համաձայն:
45. Միջօրյա ռեպո գործարքը կատարվում է Մասնակցի կողմից ներկայացված Միջօրյա հայտի հիման վրա:
46. Համակարգում Միջօրյա հայտերի ակցեպտավորումը կատարվում է հետևյալ

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

կանոնների համաձայն.

1) Միջօրյա ռեպո գործարքի կատարման համար Համակարգում ընդունված Միջօրյա հայտի ակցեպտավորումը կատարվում է ավտոմատ:
2) Ընդունված Միջօրյա հայտերի ակցեպտավորման արդյունքում, կատարման ենթակա գործարքին Համակարգի կողմից ավտոմատ տրվում է համապատասխան համար, որով նույնականացվում է տվյալ գործարքը:
3) Միջօրյա հայտերի ակցեպտավորման արդյունքում համապատասխան էլեկտրոնային հաղորդագրության միջոցով (ՀՏ 512) Մասնակցին որևէ տեղեկացում չի տրվում:

6. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների ընդհանուր բնութագրիչները

47. Մասնակցի հետ Ռեպո, Լոմբարդային ռեպո, Միջօրյա ռեպո գործարքներ կնքելիս, այդ գործարքների կատարման համար փոխանցվող արժեթղթերը չեն կապվում կոնկրետ Ռեպո, Լոմբարդային ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների հետ: Մասնակցի կողմից փոխանցված արժեթղթերի համար Համակարգում կիրառվում է «Ռեպո զամբյուղի» (pooling system) հաշվառման սկզբունքը ըստ Մասնակիցների:
48. Յուրաքանչյուր Մասնակցի «Ռեպո զամբյուղը» բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.
    1) պետական արժեթղթերի բաղադրիչ
    2) կորպորատիվ արժեթղթերի բաղադրիչ
    3) դրամական միջոցների բաղադրիչ
49. «Ռեպո զամբյուղի» բաղադրիչների միջոցով հաշվառվում են Մասնակցի և Կենտրոնական բանկի միջև գործող Ռեպո և Միջօրյա ռեպո գործարքների համար Կենտրոնական բանկին փոխանցված արժեթղթերը, ինչպես նաև այն դրամական միջոցները, որոնք փոխանցվել են (գանձվել են) զամբյուղի համալրման կամ կատարված Միջօրյա ռեպո գործարքների մարման համար:
50. Յուրաքանչյուր Մասնակցի կողմից «ռեպո զամբյուղ» փոխանցված արժեթղթերը հաշվառվում են Պահառուների մոտ վարվող Կենտրոնական բանկի համապատասխան «դեպո հաշվով»:
51. Ռեպո աճուրդի Հայտի, ինչպես նաև երկկողմանի ռեպո գործարքի Հայտի միջոցով կնքված ռեպո գործարքների կնքման և կատարման օրերը կարող են լինել տարբեր:
52. «Միջօրյա ռեպո» գործարքի համար կնքման, կատարման և մարման օրը միևնույն օրն է:
53. Այն դեպքում, երբ կնքվել են Ռեպո գործարքներ, որոնց «կատարման օրը» տարբերվում է «կնքման օրից», ապա այդ գործարքները կատարվում են նշված «կատարման օրը»՝ ռեպո գործարքների համար սահմանված ընդհանուր ընթացակարգով:
54. Եթե կնքված Ռեպո գործարքների կատարման օրը չի հանդիսանում Բանկային օր,

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ապա վերջինիս կատարման օր է հանդիսանում վերջինիս հաջորդող առաջին Բանկային օրը:

6.2 Միջօրյա ռեպո գործարքի հիմնական բնութագրիչներ

55. «Միջօրյա ռեպո» գործարքի հիմնական բնութագրիչներն են.
1) Միջօրյա ռեպոն ընթացիկ օրվա վճարահաշվարկային կարիքների համար իրացվելիության գործիք է:
2) Մասնակցի կողմից Կենտրոնական բանկին վաճառված Ընդունելի արժեթղթերի ավելցուկային արժողության չափով կնքվում է «Միջօրյա ռեպո» գործարք, որը կատարվում է մինչև օրվա վերջի ամփոփման փուլը, Մասնակցի կողմից ներկայացված համապատասխան Միջօրյա հայտի դեպքում:
3) Միջօրյա ռեպո գործարքը կատարվում է 3 եղանակով՝ մասնակցի կողմից ներկայացվող «Միջօրյա հայտի» հիման վրա, մարվող Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքները՝ որպես մեկ ընդհանուր գումարով կատարված Միջօրյա ռեպո գործարքի վերաձևակերպելու միջոցով, ինչպես նաեւ Կենտրոնական դեպոզիտարիայի նախաձեռնությամբ՝ սույն կանոնների գլուխ 16.1-ով սահմանված դեպքում և կարգով:
4) «Միջօրյա ռեպո» գործարքը կնքվում և կատարվում է անտոկոս (որևէ տոկոսներ չեն գանձվում կատարված միջօրյա գործարքի դիմաց):
5) «Միջօրյա ռեպո» գործարքների կատարման համար ներկայացված հայտում (ՀՏ 505 հայտ՝ INTD կոդով) նշվում է պահանջվող դրամական գումարի չափը, իսկ մուտքագրվող «տոկոսադրույքը» պետք է հավասար լինի զրոյի:
6) «Միջօրյա ռեպո» գործարքի կատարման հայտը ներկայացվում է միայն գործարքի կատարման օրը:
7) Միևնույն օրվա ընթացքում մասնակցի կողմից ներկայացվող «Միջօրյա ռեպո» կատարման հայտերի (ՀՏ 505 հայտ՝ INTD կոդով) քանակը չի սահմանափակվում:
8) Բանկային օրվա վերջում՝ սահմանված կանոնների համաձայն կատարված «Միջօրյա ռեպո» գործարքը կարող է ա/ մարվել՝ ամբողջությամբ կամ մասնակի, բ/ չմարված գումարի մասով զամբյուղում համապատասխան արժողության առկայության դեպքում, ավտոմատ ձևով վերակնքվել «Լոմբարդային ռեպո» գործարքի, գ/ չմարված գումարի մասով, զամբյուղում համապատասխան արժողության բացակայության դեպքում ձևակերպվել որպես չմարված պարտավորություն:
9) Բանկային օրվա վերջում Կնքված «Միջօրյա ռեպո» գործարքը չկատարված մասով մարվում է, իսկ դրան համապատասխան արժողությամբ արժեթղթերը հետ են փոխանցվում մասնակցին:

(55-րդ կետը փոխ. 24.12.13թ. թիվ 302 Ա)

6.3 Լոմբարդային ռեպո գործարքի հիմնական բնութագրիչներ

56. «Լոմբարդային ռեպո» գործարքի հիմնական բնութագրիչներն են.
1) «Լոմբարդային ռեպո» գործարքը կնքվում է մարման ենթակա կատարված

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

«Միջօրյա ռեպո» գործարքների վերաձևակերպման արդյունքում,

2) «Լոմբարդային ռեպո» գործարքը կնքվում և կատարվում է ավտոմատ եղանակով, օրվա վերջում:
3) «Լոմբարդային ռեպո» գործարք կնքելու համար առանձին Հայտ չի ներկայացվում:
4) «Լոմբարդային ռեպո» գործարքը կնքվում է վերջինիս համար Կենտրոնական բանկի կողմից սահմանված տոկոսով:
5) «Լոմբարդային ռեպո» գործարքը կնքվում է մեկօրյա տևողությամբ:
6) «Լոմբարդային ռեպո» գործարքը ավտոմատ մարվում է առավոտյան՝ մարման օրը:

6.4 Համակարգում ռեպո գործարքների կատարման համար ընդունելի արժեթղթերի ցանկի սահմանումը

57. Կենտրոնական բանկի կողմից սահմանվում է Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների համար ընդունելի արժեթղթերի ցանկը և վերջիններիս հեյրքաթը: Ընդ որում՝ Ռեպո գործարքների և Միջօրյա ռեպո գործարքների կնքման համար գործում է մեկ ընդհանուր արժեթղթերի ցանկ: Սահմանված Ընդունելի արժեթղթի անվանացանկը և դրանց Հեյրքաթը Կենտրոնական բանկի կողմից կարող է ցանկացած պահի փոփոխվել:
58. Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքի համար սահմանված Ընդունելի արժեթղթերի ցանկում ընդգրկվող Կորպորատիվ արժեթղթերը պետք է բավարարեն Հավելված 5-ով սահմանված չափանիշներին: Ընդ որում՝
սույն կետի պահանջները չեն տարածվում մինչեւ 30.10.2012թ. (ներառյալ) տեղաբաշխված կորպորատիվ արժեթղթերի վրա, որոնք մինչև Կանոնների ուժի մեջ մտնելը վաճառվել են (կարող էին վաճառվել) ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 22.08.2007թ. «Ռեպո գործարքների կնքման գլխավոր համաձայնագիրը (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից թողարկված պարտատոմսերի օգտագործմամբ) հաստատելու վերաբերյալ» թիվ 1/1118Ա որոշմամբ հաստատված և ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ տարածքում գործող բանկերի միջև կնքված գլխավոր համաձայնագրով սահմանված կարգով կնքված և/կամ կատարված ռեպո գործարքներով: Նշված արժեթղթերը կարող են լինել Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների առարկա:

6.5 Հակադարձ ռեպո գործարքի բնութագրիչները

59. Կնքված Հակադարձ ռեպո գործարքների կատարման համար Մասնակցին փոխանցված արժեթղթերը կապվում են կոնկրետ Հակադարձ ռեպո գործարքին:
60. Համակարգում յուրաքանչյուր Մասնակցի համար վարվում է «հակադարձ ռեպո զամբյուղ», որը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից.
    1) պետական արժեթղթերի բաղադրիչ
    2) դրամական միջոցների բաղադրիչ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

61. Համակարգում յուրաքանչյուր Մասնակցի «հակադարձ ռեպո զամբյուղի» բաղադրիչների միջոցով հաշվառվում են
    1) կնքված Հակադարձ ռեպո գործարքների կատարման օրը, այդ գործարքների կատարման համար Մասնակցի կողմից փոխանցվող դրամական միջոցները
    2) Մարվող հակադարձ ռեպո գործարքի մարման օրը, այդ գործարքների հետ կապված փաստացի փոխանցված արժեթղթերը:
62. Յուրաքանչյուր՝ Հակադարձ ռեպո գործարքի կատարման կամ մարման օրվա վերջում Մասնակցի «Հակադարձ ռեպո զամբյուղի» բաղադրիչները զրոյացվում են: Հակադարձ ռեպո գործարքի կատարման դեպքում Մասնակցին փոխանցված արժեթղթերը մինչև գործարքի մարումը Համակարգի «Հակադարձ ռեպո զամբյուղում» չեն հաշվառվում և չեն արտացոլվում:
63. Կատարված Հակադարձ ռեպո գործարքի հետ կապված Մասնակցին փոխանցված արժեթղթերը հաշվառվում են յուրաքանչյուր Մասնակցի սեփական «ազատ դեպո հաշվով»:
64. Հակադարձ ռեպո աճուրդի Հայտի, ինչպես նաև երկկողմանի հակադարձ ռեպո գործարքի Հայտի միջոցով կնքված Հակադարձ ռեպո գործարքների կնքման և կատարման օրերը կարող են լինել տարբեր:
65. Այն դեպքում, երբ կնքվել են հակադարձ ռեպո գործարքներ, որոնց «կատարման օրը» տարբերվում է «կնքման օրից», ապա այդ գործարքները կատարվում են նշված «կատարման օրը» Հակադարձ ռեպո գործարքների համար սահմանված ընդհանուր ընթացակարգով:
66. Եթե կնքված հակադարձ ռեպո գործարքների կատարման օրը չի հանդիսանում բանկային օր, ապա վերջինիս կատարման օր է հանդիսանում հաջորդող առաջին բանկային օրը:

6.6 Համակարգում Հակադարձ ռեպո գործարքի կատարման համար արժեթղթերի հետ կապված առանձնահատկություններ

67. Կենտրոնական բանկի կողմից Հակադարձ ռեպո գործարքների կատարման համար կարող են տրամադրվել միայն Պետական (Գանձապետական) պարտատոմսեր և Կենտրոնական բանկի չտեղաբաշխված պարտատոմսեր:
68. Հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի համար հեյրքաթ չի սահմանվում:
69. Կատարված հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի փոխարինում չի իրականացվում:
70. Կատարված հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի օրական վերագնահատում չի կատարվում:
71. Հակադարձ ռեպո գործարքների «կատարման օրը» Մասնակցին փոխանցվող արժեթղթերի համար հիմք է ընդունվում այդ գործարքների «կնքման օրվա» դրությամբ Արժեթղթերի ընթացիկ գինը: Նշված սկզբունքը կիրառվում է նաև այն դեպքում, երբ հակադարձ ռեպո գործարքների կնքման և կատարման օրերը տարբերվում են:

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

7. ԳԼՈՒԽ. «ՌԵՊՈ ԶԱՄԲՅՈՒՂԻ» ԱՐԺՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

7.1 Ռեպո զամբյուղի արժողության հաշվարկման և վերագնահատման իրականացումը

72. Համակարգի աշխատանքային ժամանակահատվածի ցանկացած պահի դրությամբ Մասնակցի կողմից կատարված Ռեպո գործարքների (այդ թվում կատարված Միջօրյա ռեպո) հանրագումարը պետք է ավելի չլինի Մասնակցի «ռեպո զամբյուղում» առկա արժեթղթերի ընդհանուր արժողությունից: Ընդ որում, այդ արժեթղթերի արժողությունը հաշվարկվում է Արժեթղթերի ընթացիկ գինը նվազեցնելով սահմանված Հեյրքաթ-ի չափով: Տվյալ անհավասարությունը պետք է պահպանվի Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների կատարման օրվանից մինչև մարման օրը:

- Lընդ (t)≤ Vընդ (t) + M (1) Vընդ (t) = ∑Vj = ∑(1-hj)*Cj,t Lընդ (t) =∑ Li,t

որտեղ՝

Lընդ (t) - Կենտրոնական բանկի և Մասնակցի միջև տվյալ պահին առկա ռեպո/կատարված միջօրյա ռեպո գործարքների հանրագումարն է (total liquidity) «ռեպո զամբյուղում», որին համարժեք Կենտրոնական բանկի կողմից Մասնակցին տրամադրվել են դրամական միջոցներ:

Vընդ (t) - Մասնակցի կողմից Կենտրոնական բանկին տրամադրված արժեթղթերի ընդհանուր արժողությունն է (total pooling value)

Vj - j տեսակի արժեթղթի արժողությունն է

hj - j տեսակի արժեթղթի հեյրքաթ-ն է

Cj,t - t-1 աշխատանքային օրվա j տեսակի արժեթղթի ընթացիկ գինն է՝ հիմք ընդունելով t-1 աշխատանքային օրվա եկամտաբերության կորը համաձայն հավելված 5.1-ի:

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Li,t - i-րդ ռեպո գործարքի, կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարն է

M - «ռեպո զամբյուղում» առկա դրամական միջոցներ: Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների կնքման համար ռեպո զամբյուղում դրամական միջոցներ պետք է առկա չլինեն:

(72-րդ կետը խմբ. 07.06.13թ. թիվ 143 Ա, փոխ. 07.10.14թ. թիվ 254 Ա)

73. Մասնակցի «ռեպո զամբյուղում» դրամական միջոցները (M) կարող են առաջանալ հետևյալ դեպքերում՝
    1) զամբյուղի արժեզրկման պարագայում վերջինիս համալրման հետևանքով, երբ
       ա/ համալրումը կատարվում է օրվա վերջին ամփոփման փուլում, Կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների անակնկալ գանձման միջոցով, կամ

       բ/ Մասնակցի կողմից զամբյուղ դրամական միջոցների փոխանցման միջոցով:

    2) Զամբյուղում առկա արժեթղթերի մարման կամ արժեկտրոնի վճարումների կատարման հետևանքով
    3) Կատարված Միջօրյա ռեպո գործարքների մարման հետ կապված Մասնակցի կողմից «ռեպո զամբյուղում» դրամական միջոցների փոխանցման արդյունքում:

74. Մասնակիցը կարող է փոխարինել իր «Ռեպո զամբյուղում» առկա արժեթղթերը այլ արժեթղթերով, երբ «Ռեպո զամբյուղը» համալրված է միայն արժեթղթերով (M=0), ամեն դեպքում պահպանելով «Ռեպո զամբյուղի» պահանջվող նվազագույն արժողությունը: «Ռեպո զամբյուղում» գտնվող արժեթղթի փոխարինման գործառնությունը կատարվում է երկու փուլով՝ սկզբում համապատասխան հաղորդագրության միջոցով նոր ընդունելի արժեթղթերը (փոխարինող արժեթղթեր) փոխանցվում են Մասնակցի «Ռեպո զամբյուղ», այնուհետև փոխարինվող արժեթղթերը Մասնակցի կողմից կարող են դուրս բերվել «Ռեպո զամբյուղից»՝ արժեթղթերի դուրս բերման հանձնարարականի ներկայացման միջոցով (ՀՏ524):
75. Մասնակցի «Ռեպո զամբյուղի» արժողությունը նվազեցվում է զամբյուղից արժեթղթերի դուրս բերման դեպո հանձնարարականը (ՀՏ524) Կենտրոնական բանկի կողմից ի կատարումն ընդունելու պահից: Մասնակիցը կարող է փոխարինել «Ռեպո զամբյուղում» առկա մարվող արժեթղթերը այլ արժեթղթերով: Մարվող արժեթղթերը «Ռեպո զամբյուղից» կարող են դուրս բերվել մինչև այդ արժեթղթերի «մարման օրը»: Եթե այդ արժեթղթերը չեն փոխարինվում, ապա «մարման օրը» այդ արժեթղթերը «Ռեպո զամբյուղում» կստանան զրոյական արժողություն՝ համաձայն սույն Կանոններով սահմանված դրույթների:
76. Եթե Մասնակիցը ներկայացրել է զամբյուղից արժեթղթերի դուրս բերման այնպիսի հանձնարարական, որի կատարման արդյունքում կառաջանա «Ռեպո զամբյուղի» բացասական արժողություն (խախտվում է **Lընդ (t) ≤ Vընդ (t)** անհավասարությունը), ապա Կենտրոնական բանկը մերժում է այդպիսի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

հանձնարարականի կատարումը:

77. Համակարգը յուրաքանչյուր օրվա համար՝ հիմք ընդունելով արժեթղթերի եկամտաբերության կորի տվյալները՝ վերահաշվարկում է Մասնակցի «ռեպո զամբյուղի» արժողությունը (տվյալ վերահաշվարկը ռեպո/հակադարձ ռեպո համակարգի t աշխատանքային ժամանակահատվածի համար կատարվում է t օրը՝ Համակարգի աշխատանքային ժամանակահատվածի սկզբում, հիմք ընդունելով (t-1) օրվա եկամտաբերության կորը):
(77-րդ կետը խմբ. 07.06.13թ. թիվ 143Ա, խմբ. 07.10.14թ. թիվ 254 Ա)

78. Մասնակցի «Ռեպո զամբյուղի» արժողության վերահաշվարկ կատարվում է նաև զամբյուղը նոր արժեթղթերով համալրման կամ Ռեպո, կատարված Միջօրյա ռեպո գործարքների մարման պարագայում: Մոնիթորինգ համակարգի միջոցով Մասնակիցը տեղեկացվում է «Ռեպո զամբյուղի» վերահաշվարկի արդյունքների մասին: Եթե վերահաշվարկի արդյունքում պարզվում է, որ զամբյուղում առկա է ավելցուկային արժողություն (Լընդ(t) ≤ Vընդ (t), որտեղ դրամական միջոցներ առկա չեն M=0), ապա մասնակիցը կարող է իր ընտրությամբ զամբյուղից հետ վերցնել ցանկացած արժեթուղթ Կենտրոնական բանկ ներկայացնելով՝ ռեպո զամբյուղից արժեթղթերի դուրս բերման հանձնարարական (ՀՏ524): Սակայն ցանկացած դեպքում պետք է պահպանվի «Ռեպո զամբյուղի» նվազագույն արժողությունը, որը հավասար է Լընդ(t) :

79. Եթե վերահաշվարկի արդյունքում պարզվում է, որ Մասնակցի «ռեպո զամբյուղը» արժեզրկվել է (Լընդ(t) > Vընդ (t)), ապա մասնակիցը պետք է համալրի իր զամբյուղը համապատասխան արժողությամբ ընդունելի արժեթղթերով (Կենտրոնական բանկին փոխանցի անհրաժեշտ ծավալով արժեթղթեր): Մասնակիցը կարող է «ռեպո զամբյուղի» համալրումը կատարել նաև դրամական միջոցներով (ՀՀ դրամով):
80. Եթե մինչև տվյալ օրվա Համակարգի աշխատանքային ժամանակահատվածի ավարտը Մասնակիցը չի կատարում անհրաժեշտ համալրումը, ապա Կենտրոնական բանկն իրավասու է անակցեպտ ձևով գանձել անհրաժեշտ գումարը (Q=Լընդ(t) - Vընդ (t)) Մասնակցի՝ Կենտրոնական բանկում վարվող դրամային թղթակցային հաշվից և համալրել Մասնակցի «Ռեպո զամբյուղը» դրամական միջոցներով (տվյալ դեպքում տուգանք չի գանձվում):
«Ռեպո զամբյուղի» համալրման համար Մասնակցի դրամային թղթակցային հաշվում անհրաժեշտ չափով գումարի բացակայության դեպքում, Համակարգի կողմից գանձվում է փաստացի առկա գումարը, իսկ «Ռեպո զամբյուղի» չհամալրված գումարի նկատմամբ հաշվարկվում է տուգանք: Համակարգը հաշվարկում է գանձվելիք տուգանքի չափը և Կենտրոնական բանկի կողմից կատարվում է այդ տուգանքի անակցեպտ գանձումը Մասնակցի թղթակցային հաշվից:

Այն դեպքում, երբ «Ռեպո զամբյուղում» գտնվող ընդունելի արժեթուղթը տվյալ օրը մարվում է կամ կատարվում է արժեկտրոնի վճարում, ապա նախ իրականացվում է վերջիններիս դիմաց համապատասխան դրամական միջոցների փոխանցումը «Ռեպո զամբյուղ», որից հետո չհամալրված մասով թղթակցային հաշվից կատարվում է զամբյուղի համալրումը:

81. «Ռեպո զամբյուղ» փոխանցված արժեթղթերը, որոնք ներառված չեն Ընդունելի արժեթղթերի ցանկում՝ մուտքագրվում են զրոյական արժեքով: Օրվա ընթացքում Համակարգի կողմից այդ արժեթղթերը ավտոմատ հետ չեն փոխանցվում Մասնակցին, ինչպես նաև դրանց դիմաց գործարք չի կնքվում:

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Մասնակիցը կարող է «ռեպո զամբյուղից» հետ վերցնել սխալ փոխանցված արժեթղթերը՝ ներկայացնելով համապատասխան հանձնարարական (ՀՏ524): Սակայն «ռեպո զամբյուղի» արժեզրկման դեպքում Մասնակիցը օրվա ընթացքում չի կարող հետ վերցնել զրոյական արժողություն ունեցող արժեթղթերը, մինչև զամբյուղի համալրումը:

82. Եթե Ընդունելի արժեթղթերի անվանացանկից հեռացվել է որևէ արժեթուղթ, որը առկա է «Ռեպո զամբյուղում», ապա այդ արժեթուղթը «Ռեպո զամբյուղում» ստանում է զրոյական արժողություն:
83. Ընդունելի կորպորատիվ արժեթղթերի ցանկում գտնվող արժեթղթերի համար սահմանվում է լրացուցիչ պայման, որտեղ ընդգրկված կորպորատիվ արժեթղթերը «արժեկտրոնի վճարման» և/կամ «արժեթղթի մարման» հետ կապված Համակարգում ավտոմատ եղանակով որոշակի ժամկետով բացառվում են ընդունելի արժեթղթերի ցանկից: Ընդ որում, սույն ցանկում գտնվող Ընդունելի արժեթղթերի համար իրականացվում են հետևյալ գործառնությունները.
    1) Համակարգում յուրաքանչյուր Գործառնական օրվա սկզբում սույն ցուցակում գտնվող Ընդունելի կորպորատիվ արժեթղթերի համար տարանջատվում և սահմանափակվում են այն կորպորատիվ արժեթղթերը, որոնց «արժեկտրոնի վճարման օրը» և/կամ «արժեթղթի մարման օրը» հանդիսանում է հաջորդ աշխատանքային օրը, կամ համընկնում է հաջորդող ոչ աշխատանքային օրերի հետ:
    2) Եթե տարանջատված և սահմանափակված Ընդունելի կորպորատիվ արժեթուղթը ունի արժեկտրոնի վճարում, ապա այն մնում է բացառված Ընդունելի արժեթղթերի ցանկում մինչև արժեկտրոնի վճարման օրը: Իսկ «արժեկտրոնի վճարման օրը» օրվա սկզբում Համակարգի կողմից նորից ավտոմատ եղանակով ընդգրկվում է Ընդունելի արժեթղթերի ցանկում:
    3) Եթե տարանջատված և սահմանափակված Ընդունելի կորպորատիվ արժեթուղթը պետք է մարվի, ապա այն մնում է բացառված Ընդունելի արժեթղթերի ցանկից մինչև արժեթղթի մարման օրը:
    4) Յուրաքանչյուր Գործառնական օրվա սկզբում տարանջատված և սահմանափակված կորպորատիվ արժեթղթերը Կանոններով սահմանված օրվա սկզբի գործառնությունների ընթացքում Կենտրոնական բանկի կողմից հետ են փոխանցվում Մասնակցին՝ հաշվի չառնելով Ռեպո զամբյուղի արժեզրկման հանգամանքը:
    5) Սույն կետի համապատասխան ենթակետերով նշված ժամանակահատվածով տարանջատված և սահմանափակված Ընդունելի կորպորատիվ արժեթղթերը ավտոմատ եղանակով հանդիսանում են այդ ժամկետով բացառված Ընդունելի արժեթղթերի ցանկից: Տվյալ ժամանակահատվածում այդ արժեթղթերի վրա տարածվում են Ընդունելի արժեթղթերի ցանկին չպատկանող արժեթղթերի համար սահմանված կանոնները: Ուստի, այդ ընթացքում Մասնակցի կողմից այդ արժեթղթերը «Ռեպո զամբյուղ» փոխանցելու դեպքում մուտքագրվում են զրոյական արժեքով և նորից հետ են փոխանցվում օրվա վերջին փուլում:

84. Եթե Մասնակցի «ռեպո զամբյուղում» առկա են դրամական միջոցներ, ապա կատարված Միջօրյա ռեպո գործարքի առկայության դեպքում դրանք Կանոններով սահմանված կարգով կարող են ուղղվել վերջինիս մարմանը: Իսկ կատարված Միջօրյա ռեպո գործարքի բացակայության դեպքում, եթե զամբյուղում առկա է ավելցուկային արժողություն (Լընդ (t) < Vընդ (t) + M), ապա Կենտրոնական բանկը անմիջապես ավտոմատ եղանակով վերադարձնում է ավելցուկային մասի դրամական միջոցները (FUNDreturn)՝ մուտքագրելով դրանք Մասնակցի՝

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Կենտրոնական բանկում վարվող թղթակցային հաշվին:

- FUNDreturn = M (if Լընդ (t)≤ Vընդ (t)) կամ
- FUNDreturn = Vընդ (t) + M - Լընդ (t) (if Լընդ (t)> Vընդ (t))

85. Օրվա ընթացքում յուրաքանչյուր պահի «ռեպո զամբյուղում» Ավելցուկային արժողության առկայության դեպքում Մասնակցի կողմից կնքված, սակայն չկատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը հավասար է այդ Ավելցուկային արժողությանը: Այսինքն՝

INT sum(չկատարված) = Vավելցուկ(t),

որտեղ Vավելցուկ(t) = Vընդ (t) - Լընդ (t)

Ավելցուկային արժողությունը և, հետևաբար Կնքված, սակայն չկատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը նվազում է Ռեպո, Կնքված Միջօրյա ռեպո գործարքների կատարման արդյունքում և ավելանում է Կատարված Միջօրյա ռեպո գործարքի մարման արդյունքում, ըստ Կանոններով սահմանված կարգով:

Յուրաքանչյուր օրվա վերջում կնքված, սակայն չկատարված Միջօրյա ռեպո գործարքը մարվում է և զամբյուղի Ավելցուկային արժողությունը հետ է փոխանցվում Մասնակցին՝ հաշվի առնելով Թրիգեր փոինթի արժողությունը:

86. Համակարգը ապահովում է Մասնակցի «Ռեպո զամբյուղ» մուտք եղած դրամական միջոցների առաջացման աղբյուրի տարանջատումը և այդ մասին տեղեկատվության տրամադրումը Մասնակցին Մոնիթորինգի միջոցով:
87. Կենտրոնական բանկը կրում է պատասխանատվություն «Ռեպո զամբյուղ» փոխանցված արժեթղթերը ըստ սահմանված Կանոնների հաշվառելու համար:
88. Ընդունելի արժեթղթերի ցանկում գտնվող արտարժութային կորպորատիվ արժեթղթերի արժողությունը Ռեպո զամբյուղի համար հաշվարկվում է արտահայտված ՀՀ դրամով:

7.2 Ռեպո զամբյուղում առկա ավելցուկային արժեթղթերի հետ փոխանցումը

89. Յուրաքանչյուր օրվա վերջում կատարվում է ռեպո զամբյուղում առկա ավելցուկային արժողությանը համապատասխան արժեթղթերի տարանջատում և հետ փոխանցում Մասնակցի սեփական «դեպո հաշվին»:
90. Մասնակցին հետ փոխանցվող զամբյուղի ավելցուկային արժողությունը նվազեցվում է Թրիգեր արժողության (Մարժա) չափով, որն իրենից ներկայացնում է սահմանված Թրիգեր փոինթի (Trigger point) տոկոսը, Ռեպո զամբյուղի նվազագույն (պահանջվող) արժողության նկատմամբ:

Tp արժող. (t) = (Lժընդ (t)*(k))/100 , Lժընդ (t) =∑ Li,t Vընդ (t) = ∑Vj = ∑(1-hj)*Cj,t

Vավելցուկ(t) = Vընդ (t) - Lժընդ (t)

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Եթե Tp արժող. (t) <= Vավելցուկ(t), ապա

Wփոխ.ավելցուկ(t) = Vընդ (t) –(Lընդ (t)+ Tp արժող. (t)),

Qընդ (t) = Lընդ (t)+ Tp արժող. (t)

որտեղ՝

Lընդ (t) - t օրվա վերջում Կենտրոնական բանկի և Մասնակցի միջև օրվա վերջի դրությամբ գործող Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքների հանրագումարն է:

Li,t – i-րդ ռեպո գործարքի, Լոմբարդային ռեպո գործարքի գումարն է

Vընդ (t) - Մասնակցի կողմից Կենտրոնական բանկին վաճառված արժեթղթերի ընդհանուր արժողությունն է (total pooling value)

Tp արժող. (t)- t օրվա վերջում Թրիգեր արժողությունը (Մարժա)

k - Թրիգեր փոինթի համար սահմանված տոկոսն է

Wփոխ.ավելցուկ(t)- t օրվա վերջում Մասնակցին հետ փոխանցվող ավելցուկային արժողություն

Qընդ (t) - t օրվա վերջում Կենտրոնական բանկի և Մասնակցի միջև օրվա վերջի դրությամբ գործող Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքների հանրագումարի դիմաց Կենտրոնական բանկին վաճառված Ընդունելի արժեթղթերի արժողությունն է «ռեպո զամբյուղում»:

91. Թրիգեր փոինթը հաշվի է առնվում միայն օրվա վերջում Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողությանը համապատասխան Ընդունելի արժեթղթերը Մասնակցին հետ փոխանցելու ժամանակ: Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների կատարման ժամանակ այն հաշվի չի առնվում:
92. «Ռեպո զամբյուղի» ավելցուկային արժողությունը օրվա վերջում Մասնակցին հետ է փոխանցվում հետևյալ կանոնների համաձայն.
    1) Եթե «Ռեպո զամբյուղը» արժեզրկված չէ, ապա հաշվարկվում է Թրիգեր արժողության չափը «Ռեպո զամբյուղի» նվազագույն արժողության համար,
    2) «Ռեպո զամբյուղի» ավելցուկային արժողությունը օրվա վերջում կարող է փոքր լինել ռեպո զամբյուղի նվազագույն արժողության նկատմամբ հաշվարկված Թրիգեր արժողությունից: Ընդ որում, երբ ռեպո զամբյուղի ավելցուկային արժողությունը փոքր է հաշվարկված Թրիգեր

Ֆինանսական հանձնարարի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

արժողության մեծությունից, ապա Մասնակցին ավելցուկային արժողությանը համապատասխան արժեթղթեր հետ չեն փոխանցվում:

3) երբ ռեպո զամբյուղի ավելցուկային արժողությունը մեծ է հաշվարկված Թրիգեր արժողությունից, ապա զամբյուղում առկա ավելցուկային արժողությունը նվազեցվում է Թրիգեր արժողության չափով և մնացած ավելցուկային արժողությանը համապատասխան արժեթղթերը հետ են փոխանցվում Մասնակցին:

93. Մասնակցին հետ փոխանցվող Ռեպո զամբյուղի Ավելցուկային արժողությանը համապատասխան արժեթղթերի տարանջատումը կատարվում է ըստ Կենտրոնական բանկի հայեցողության: Այդ թվում առաջնահերթորեն Մասնակցին հետ են փոխանցվում Ռեպո զամբյուղում զրոյական արժողություն ունեցող Արժեթղթերը՝ անկախ Ռեպո զամբյուղի արժեզրկման առկայությունից:

8. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

8.1 Համակարգում կնքված գործարքների համար Մասնակիցների կողմից կատարման հերթի առաջնահերթության կանոններ

94. Մասնակցի կողմից Հայտի ներկայացման ժամանակ կարևորվում է տվյալ գործարքի կատարման առաջնահերթությունը, որը Մասնակցի կողմից սահմանվում է Հայտի ներկայացման ժամանակ: Ընդունված Հայտերը Կենտրոնական բանկի կողմից ակցեպտավորելու դեպքում կնքված գործարքները դրվում են կատարման հերթի, ըստ Հայտում նշված առաջնահերթության: Գործարքների կատարման համար Հայտում նշված առաջնահերթության կոդը ընդհանուր է տվյալ Հայտում ներառված բոլոր առաջարկությունների համար:
95. Յուրաքանչյուր Մասնակցի Ռեպո և Հակադարձ ռեպո գործարքների համար Համակարգում կիրառվում է դրանց կատարման առանձին հերթեր: Ընդ որում՝ Ռեպո գործարքի հայտը և Միջօրյա Հայտը ընդգրկվում են միասնական հերթում:
96. Միջօրյա հայտը ունենալով ամենաբարձր առաջնահերթություն՝ ավտոմատ դրվում է առաջնահերթ կատարման:

    Սույն կետի պահանջը չի կիրառվում կնքված Միջօրյա հայտի կատարման համար, եթե Օրվա ընթացքում՝ տվյալ պահին իրականացվում է ռեպո գործարքների զուտացման գործընթաց, սույն Կանոններով սահմանված պայմանների համաձայն:

    (96-րդ կետը լրաց. 16.012.14թ. թիվ 348Ա)

97. Տվյալ օրը կատարման ենթակա Ռեպո և Հակադարձ ռեպո գործարքների կատարման հերթը ձևավորվում է հետևյալ կերպ՝ ըստ նշված սկզբունքների հաջորդական կիրառման.
    1) սկզբից տեղադրվում են տվյալ մասնակցի ամենաբարձր առաջնահերթության կոդ ունեցող Հայտի կնքված գործարքները, այնուհետև՝ ավելի ցածր առաջնահերթության կոդով Հայտի կնքված

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

գործարքները:

2) Եթե կնքված գործարքների հերթում որոշակի առաջնահերթություն ունեցող գործարքներ չեն կատարվել, այնուհետև ակցեպտավորվել է ավելի բարձր առաջնահերթությամբ նոր Հայտ, ապա գործարքների կատարման հերթը վերաձևակերպվում է (shift)՝ համապատասխան առաջնահերթությամբ (սկզբից) տեղադրելով նոր Հայտի կնքված գործարքները, այնուհետև ավելի ցածր առաջնահերթություն ունեցող Հայտի չկատարված գործարքները, ըստ իրենց առաջնահերթության:
3) Նշված առաջնահերթության հետ միասին գործում է նաև հետևյալ սկզբունքը՝ միևնույն առաջնահերթության կոդով մի քանի գործարքների կնքման դեպքում (այդ թվում տատանվող տոկոսադրույքով Հայտերի կնքված գործարքների համար), սկզբից կատարվում է ամենամեծ տոկոսադրույքով գործարքը, այնուհետ՝ ըստ տոկոսադրույքի նվազման: Իսկ միևնույն Հակադարձ ռեպո Հայտում նշված մի քանի գործարքների կատարման դեպքում սկզբից կատարվում է ամենափոքր տոկոսադրույքով գործարքը, այնուհետ՝ ըստ տոկոսադրույքի աճման:
4) Եթե միևնույն առաջնահերթության կոդով և նույն տոկոսադրույքով գործարքները մի քանիսն են, ապա վերջիններիս համար հերթում սկզբից տեղադրվում են Կենտրոնական բանկի կողմից ավելի շուտ ընդունված ժամկետով (ժամկետը ներառում է՝ dd/mm/yy /hh/mm) Հայտի կնքված գործարքները, այնուհետև նույն առաջնահերթությամբ և տոկոսադրույքով ավելի ուշ ընդունված Հայտի կնքված գործարքները:

98. Կնքված գործարքների կատարման հերթում գտնվող Ռեպո (Հակադարձ ռեպո) գործարքը կարող է կատարվել միայն այն դեպքում, եթե այդ հերթում իրեն նախորդող Ռեպո (Հակադարձ ռեպո) գործարքը կատարվել է:

8.2 Միջօրյա ռեպո գործարքի կնքումը և կատարումը

99. Միջօրյա ռեպո գործարք կնքելու նպատակով Մասնակիցը Կենտրոնական բանկին վաճառում է Ընդունելի արժեթղթեր:
100. Միջօրյա ռեպո գործարքի կնքման համար Ընդունելի արժեթղթերը փոխանցվում են Պահառուի մոտ վարվող Կենտրոնական բանկի դեպո հաշվին, «ազատ առաքման սկզբունքով», կիրառելով համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն:
101. Պետական արժեթղթերի փոխանցման համար Կենտրոնական բանկին ներկայացվում է արժեթղթերի փոխանցման հանձնարարական (ՀՏ523)՝ ըստ սահմանված Էլեկտրոնային հաղորդագրության: Իսկ Կորպորատիվ արժեթղթերի փոխանցման համար Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացվում է համապատասխան հանձնարարական ՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ձևով:

Մասնակցի հանձնարարականի կատարման արդյունքում՝ Արժեթղթերի փոխանցման հաստատումը պարունակող հաղորդագրությունը (ՀՏ523 պատճեն) ուղարկվում է Համակարգ, որը հիմք է հանդիսանում արժեթղթերը Մասնակցի «ռեպո զամբյուղում» ներառելու համար:

102. Միջօրյա ռեպո գործարքը կնքված է համարվում Ընդունելի արժեթղթերի փոխանցման հաստատումը Համակարգի կողմից ստանալու պահից:
103. Միջօրյա ռեպո գործարքի կնքման ժամանակ Համակարգը ստուգում է Ռեպո զամբյուղի արժողությունը:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

104. Եթե Միջօրյա ռեպո գործարքը կնքվելու պահին առկա է Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողություն (արդեն իսկ առկա է կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարք), ապա կնքված Միջօրյա ռեպո գործարքը համարվում է վերաձևակերպված նոր Միջօրյա ռեպո գործարքի՝ Ռեպո զամբյուղի նոր ավելցուկային արժողության չափով:

105. Եթե Միջօրյա ռեպո գործարքի կնքման պահին առկա է Ռեպո զամբյուղի բացասական արժողություն, ապա Մասնակցի կողմից փոխանցված (վաճառված) Ընդունելի արժեթղթերը նախ ուղղվում են «Ռեպո զամբյուղի» համալրմանը, որից հետո ավելցուկային արժողության առկայության դեպքում՝ վերջինիս չափով կնքվում է Միջօրյա ռեպո գործարք: (Իրավական տեսակետից սույն կետի կանոնը կայանում է հետևյալում՝ կնքված Միջօրյա ռեպո գործարքով Մասնակցի պահանջի իրավունքները հաշվանցվում են իր՝ Ռեպո զամբյուղը համալրելու պարտավորության կատարման հաշվին, որից հետո Մասնակցի՝ Ռեպո զամբյուղը համալրելու պարտավորությունը համարվում է դադարած, իսկ կնքված Միջօրյա ռեպո գործարքը համարվում է վերակնքված Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողության չափով՝ դրա առկայության դեպքում: Եթե հաշվանցի արդյունքում Ռեպո զամբյուղի ավելցուկային արժողություն չի առաջանում, ապա կնքված Միջօրյա ռեպո գործարքը համարվում է մարված):
Սույն կետի կանոնը չի գործում, եթե մինչև Ընդունելի արժեթղթերի վաճառքը առկա է Միջօրյա հայտ, որի դեպքում գործում է վերջինիս կատարման համար սահմանված կանոնը (տես Կետ 107-ը):

106. Կնքված Միջօրյա ռեպո գործարքը Կենտրոնական բանկի կողմից կատարվում է տվյալ օրվա ընթացքում, հիմք ընդունելով Մասնակցի կողմից ներկայացված Միջօրյա հայտը (ՀՏ 505 հայտ՝ INTD կոդով): Մասնակիցը՝ Միջօրյա ռեպո գործարքով վաճառված արժեթղթերի դիմաց Կենտրոնական բանկից դրամական միջոցները կարող է ստանալ ամբողջությամբ կամ մաս-մաս: Մասնակցի Միջօրյա հայտում նշված գումարը չի կարող գերազանցել Ռեպո զամբյուղի ավելցուկային (դրական) արժողությունը (առկա կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը): Եթե ներկայացված Միջօրյա հայտում նշված գումարը գերազանցում է Ռեպո զամբյուղի ավելցուկային (դրական) արժողությունը, ապա այդ Միջօրյա հայտը Համակարգի կողմից չի կատարվում, մինչև Ռեպո զամբյուղի համարժեք համալրումը:
Միջօրյա հայտի կատարման արդյունքում կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքը Միջօրյա հայտի գումարի չափով ձևակերպվում է, որպես կատարված Միջօրյա ռեպո, իսկ մնացած մասով կատարվում է ռեպո զամբյուղի համալրումը և ռեպո զամբյուղի ավելցուկային մասով ձևակերպվում է կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարք:

107. Եթե մինչև Միջօրյա ռեպո գործարքի կնքելը Մասնակիցը ներկայացնում է Միջօրյա հայտ, ապա Միջօրյա հայտը կատարվում է Ընդունելի արժեթղթերը Կենտրոնական բանկին վաճառելուց և դրա արդյունքում Միջօրյա ռեպո գործարքը կնքելուց հետո, նույնիսկ Մասնակցի Ռեպո զամբյուղի արժեզրկման պարագայում, եթե մեկ հաղորդագրության (ՀՏ523) միջոցով Կենտրոնական բանկին են փոխանցվում(վաճառվում) Ընդունելի արժեթղթեր, որոնց արժողությունը փոքր չէ Միջօրյա հայտի գումարից: Միջօրյա հայտի կատարման արդյունքում կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքը Միջօրյա հայտի գումարի չափով ձևակերպվում է, որպես կատարված Միջօրյա ռեպո, իսկ մնացած մասով կատարվում է ռեպո զամբյուղի համալրումը՝ վերջինիս արժեզրկման դեպքում, իսկ համալրման ապահովման դեպքում ավելցուկային մասով ձևակերպվում է կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարք:

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Ստացված Ընդունելի արժեթղթերի արժողությունը Միջօրյա հայտի գումարից փոքր լինելու դեպքում Միջօրյա հայտը չի կատարվում մասնակիորեն և փոխանցված Ընդունելի արժեթղթերը համալրում են Մասնակցի «ռեպո զամբյուղը»:

108. Միջօրյա հայտի կատարման արդյունքում Մասնակցին տրվում է համապատասխան հաղորդագրություն (ՀՏ514) այդ մասին, իսկ Կենտրոնական բանկի կողմից Մասնակցի թղթակցային հաշվին փոխանցվում է կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը:

109. Համակարգի աշխատանքային ժամանակահատվածի ընթացքում մի քանի Միջօրյա հայտերի կատարման դեպքում ձևակերպվում է փոփոխական գումարով մեկ կատարված Միջօրյա ռեպո գործարք, որի արժեքը ավելանում է յուրաքանչյուր Միջօրյա հայտի կատարման արդյունքում, և նվազում է կատարված Միջօրյա ռեպո գործարքի մարման/մասնակի մարման արդյունքում: Ընդ որում՝ տվյալ օրը մարվող Ռեպո գործարքը, որպես կատարված Միջօրյա ռեպո գործարք վերաձևակերպելու արդյունքում (տես Կետ 139-ը), այն նույնպես հանդիսանում է կատարված մեկ ընդհանուր Միջօրյա ռեպո գործարքի մի մասը: Կնքված Միջօրյա ռեպո գործարքի գումարը փոփոխվում է նաև «Ռեպո զամբյուղի» վերագնահատման արդյունքում: Յուրաքանչյուր պահի դրությամբ Մոնիթորինգի միջոցով Մասնակիցը կարող է դիտարկել Միջօրյա ռեպո գործարքի կնքման, կատարման, մարման պատմությունը:

110. Ներկայացված Միջօրյա հայտը մասնակի չի կատարվում: Միջօրյա հայտը, որը դեռ չի կատարվել, Համակարգում մնում են մինչև օրվա վերջի ամփոփման փուլի համար սահմանված t-ժամը:

Համակարգի աշխատանքային ժամանակահատվածի վերջում (օրվա վերջի ամփոփման փուլ՝ end of day procedure) չկատարված Միջօրյա հայտը չեղյալացվում է (այսինքն՝կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքի առկայության դեպքում, օրվա վերջում մասնակի ծածկույթ ունեցող Միջօրյա հայտը մասնակիորեն չի կատարվում, այլ չեղյալացվում է):

111. Համակարգում օրվա ընթացքում չկատարված Միջօրյա ռեպո հայտի, ինչպես նաև կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքի համար օրվա վերջում Մասնակցից տուգանք չի գանձվում:

8.3 Կնքված Ռեպո գործարքների կատարման կանոններ

112. Կնքված Ռեպո գործարքի կատարման համար Մասնակիցը ապահովում է մասնակցի «ռեպո զամբյուղում» Ավելցուկային արժողություն(կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքի առկայություն):
Օրվա ընթացքում կնքված Ռեպո գործարքը կատարվում է կնքված և չկատարված Միջօրյա ռեպո գործարքի շրջանակներում վաճառված Ընդունելի արժեթղթերի հաշվին, որոնց դիմաց Մասնակիցը դրամական միջոցներ դեռ չի ստացել:

Իրավական տեսակետից սույն կետում նշված պայմանների առկայության դեպքում Կանոններով սահմանված կարգով իրականացվում է կնքված երկու գործարքների հաշվանց, որի արդյունքում կատարվում է կնքված Ռեպո գործարքը: Վերջինիս արդյունքում նախկինում Կնքված Միջօրյա ռեպո գործարքը նվազեցվում և

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

վերաձևակերպվում է նոր պայմաններով կնքված և չկատարված Միջօրյա ռեպո գործարքի:

Կնքված Ռեպո գործարքը կարող է կատարվել միայն Ընդունելի արժեթղթերի արժողության հաշվին, այն չի կարող կատարվել Ռեպո զամբյուղ փոխանցված փողի հաշվին: Կնքված Ռեպո գործարքը ձևակերպվում է որպես կատարված, երբ Մասնակցի «ռեպո զամբյուղում» առկա է Ռեպո գործարքի գումարից ոչ պակաս արժեքով ավելցուկային արժողություն (այսինք կնքված, չկատարված Միջօրյա ռեպո):

Օրվա ընթացքում՝ մինչև օրվա վերջի ամփոփման փուլը, Համակարգում առկա կնքված և չկատարված Ռեպո գործարքները կատարվում են նաև Օրվա ընթացքում ռեպո գործարքների զուտացման գործընթացի իրականացման արդյունքում, սույն Կանոններով սահմանված պայմանների համաձայն:
(112-րդ կետը լրաց. 16.12.14թ. թիվ 348Ա)

113. Մասնակցի կողմից Ռեպո գործարքի կատարման պարտավորությունը համարվում է կատարված՝ կնքված ռեպո գործարքների համար «ռեպո զամբյուղում» պահանջվող ավելցուկային արժողությամբ Ընդունելի արժեթղթերի առկայության դեպքում:
114. «Ռեպո զամբյուղի» արժեզրկման, ինչպես նաև փողով համալրված լինելու պարագայում կնքված Ռեպո գործարքը չի կատարվում մինչև «Ռեպո զամբյուղի» ամբողջությամբ համալրումը համապատասխան արժողությամբ Ընդունելի արժեթղթերով:
115. Մասնակցի կողմից փոխանցված Ընդունելի արժեթղթերը նախ ուղղվում են արժեզրկված «Ռեպո զամբյուղի» համալրմանը, որից հետո կնքված Ռեպո գործարքը կատարվում է ավելցուկային արժողության չափով (այսինք կնքված, չկատարված Միջօրյա ռեպո գործարքի հաշվին՝ վերջինիս վերաձևակերպման միջոցով)՝ համաձայն Կանոնների:
116. «Ռեպո զամբյուղը» արժեթղթերով համալրման արդյունքում առկա դրամական միջոցները փոխանցվում են Մասնակցին, սահմանված կանոնների համաձայն:
117. Կնքված Ռեպո գործարքի կատարման արդյունքում Մասնակցին տրվում է համապատասխան հաղորդագրություն (ՀՏ514) այդ մասին, իսկ Կենտրոնական բանկի կողմից Մասնակցի թղթակցային հաշվին փոխանցվում է կատարված Ռեպո գործարքի գումարը (եթե այն չի կատարվել զուտացման միջոցով):
118. Համակարգում կնքված Ռեպո գործարքը օրվա ընթացքում մասնակի չի կատարվում: Կնքված Ռեպո գործարքները, որոնք դեռ չեն կատարվել, Համակարգում մնում են մինչև օրվա վերջի ամփոփման փուլի համար սահմանված t-ժամը:
119. Համակարգի աշխատանքային ժամանակահատվածի վերջում (օրվա վերջի ամփոփման փուլ՝ end of day procedure) կնքված և չկատարված Ռեպո գործարքները կատարվում են հետևյալ սկզբունքով.
    1) Զուտացման միջոցով կնքված Ռեպո գործարքների կատարում և կատարված Միջօրյա ռեպո գործարքների մարում, սույն Կանոններով սահմանված պայմանների առկայության դեպքում,
    2) Չկատարված Ռեպո գործարքների կատարում, ըստ իրենց կատարման հերթի՝ «ռեպո զամբյուղի» Ավելցուկային արժողության չափով (մեկ դրամի ճշտությամբ): Ընդ որում՝ մասնակի ծածկույթ ունեցող Ռեպո գործարքը կատարվում է մասնակի և ձևակերպվում է որպես մասնակի կատարված Ռեպո գործարք:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

I(մասնակի առաջարկ) = DIV(Vընդ (t) - ∑ L(առկա ռեպո,t))

120. Օրվա վերջում Մասնակցի կողմից չկատարված, մասնակի կատարված Ռեպո գործարքների մասով հաշվարկվում է տուգանք, որը կարող է դիտարկվել Մոնիթորինգ համակարգի միջոցով:

8.4 Կնքված Հակադարձ ռեպո գործարքների կատարման կանոններ

121. Կնքված Հակադարձ ռեպո գործարքի կատարման համար մասնակիցը պետք է ապահովի իր թղթակցային հաշվից համապատասխան դրամական միջոցների փոխանցումը Հակադարձ ռեպո Գլխավոր համաձայնագրով սահմանված համապատասխան հաշվին, ուղարկելով վճարային հաղորդագրություն (ՀՏ100): Մինչև Կենտրոնական բանկի կողմից Մասնակցի ներկայացված Հակադարձ ռեպո Հայտում նշված առաջարկության ակցեպտավորումը, Մասնակցի կողմից ուղարկված դրամական միջոցները չեն ընդունվում և անմիջապես հետ են փոխանցվում:
122. Հակադարձ ռեպո գործարքով նշված դրամական միջոցները ստանալուց հետո Կենտրոնական բանկը համապատասխան ծավալով արժեթղթերը ավտոմատ եղանակով փոխանցում է Մասնակցի ազատ «դեպո հաշվին»: Արժեթղթերի փոխանցումից հետո Կնքված Հակադարձ ռեպո գործարքը ձևակերպվում է որպես կատարված Հակադարձ ռեպո գործարք:
123. Մասնակցի կողմից Հակադարձ ռեպո գործարքի կատարման պարտավորությունը համարվում է կատարված՝ կնքված գործարքի համար Կենտրոնական բանկին պահանջվող ծավալով դրամական միջոցների փոխանցման դեպքում:
124. Կնքված Հակադարձ ռեպո գործարքի կատարման համար ընտրված արժեթղթերի ընդհանուր ծավալը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ընտրված համապատասխան Արժեթղթերի ընթացիկ գների հանրագումարը: Ընդ որում՝ Հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող արժեթղթի ընթացիկ գինը կարող է.
    - լինել հավասար կնքված գործարքի գումարին, կամ
    - հաշվի առնելով այդ արժեթղթի քայլը, վերջինիս չափով լինել փոքր կնքված գործարքի գումարից:
125. Հակադարձ ռեպո գործարքը օրվա ընթացքում մասնակի չի կատարվում: Կնքված Հակադարձ ռեպո գործարքի դիմաց համապատասխան դրամական միջոցները ամբողջությամբ Կենտրոնական բանկին չփոխանցելու դեպքում Մասնակցի կողմից չկատարված Հակադարձ ռեպո գործարքը մնում է մինչև օրվա վերջի համար սահմանված ժամանակահատվածը:
126. Համակարգում օրվա վերջին կատարվող գործառնությունների ժամանակահատվածում (Հակադարձ ռեպո գործարքների կատարման ամփոփման փուլում) չկատարված Հակադարձ ռեպո գործարքները կատարվում են մասնակիորեն՝ Մասնակցի կողմից փաստացի փոխանցված դրամական միջոցների սահմաններում: Եթե առկա են մի քանի կնքված Հակադարձ ռեպո գործարքներ, ապա դրանք կատարվում են ըստ Համակարգում գործող առաջնահերթության սկզբունքի:
127. Մասնակցի կողմից չկատարված, ինչպես նաև մասնակի կատարված Հակադարձ ռեպո գործարքների դիմաց, չկատարված գործարքի գումարի չափով հաշվարկվում է տուգանք, որը կարող է դիտարկվել Մոնիթորինգի միջոցով:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

128. Հակադարձ ռեպո գործարքների կատարման արդյունքում Մասնակցին տրվում է համապատասխան հաղորդագրություն (ՀՏ514), որտեղ նշվում է Մասնակցին փոխանցված Հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը:

129. Հակադարձ ռեպո գործարքների կատարման համար անհրաժեշտ արժեթղթերը որոշվում են Կենտրոնական բանկի կողմից, Հակադարձ ռեպո գործարքների կնքման ժամանակ: Հակադարձ ռեպո գործարքի առարկա կարող են հանդիսանալ այն արժեթղթերը (գործարքի կատարման ժամանակ մասնակիցներին փոխանցվող արժեթղթեր), որոնք չեն մարվում կնքվող Հակադարձ ռեպո գործարքի գործողության ընթացքում:

8.5 Համակարգով գործառնությունների իրականացման հետ կապված կատարվող կլորացումները

130. Համակարգով գործառնությունների իրականացման հետ կապված կլորացումները իրականացվում են նշված գործառնության համար սահմանված նիշերի ճշտությամբ՝ համաձայն թվաբանական կլորացման կանոնների, եթե տվյալ կլորացման հետ կապված այլ կանոն նշված չէ: Թվաբանական կլորացման կանոնի ներքո հարկ է հասկանալ կլորացման այն մեթոդը, որի դեպքում.

ա/ կլորացման ենթակա միավորը չի փոխվում՝ մնալով նույնը, եթե վերջինիս հաջորդող թիվը հավասար է 0-ից 4-ի, կամ

բ/ կլորացման ենթակա միավորը փոխվում է՝ մեծանալով մեկ միավորով, եթե կլորացման ենթակա միավորին հաջորդող թիվը հավասար է 5-ից 9-ի:

131. Ռեպո գործարքների կնքման, կատարման ժամանակ Համակարգում կլորացումները կատարվում է հետևյալ սկզբունքով.

1) Աճուրդի միջոցով ռեպո գործարքների կնքման ժամանակ Կենտրոնական բանկի կողմից Մասնակիցների առաջարկությունները համամասնորեն կնքելու դեպքում կլորացումը կատարվում է մեկ դրամի ճշտությամբ:
2) «Ռեպո զամբյուղ» պետական արժեթղթերի փոխանցման դեպքում՝ Մասնակցի կողմից փոխանցված պետական արժեթղթի համար

ա/ «Ռեպո զամբյուղ» մուտքագրված պետական արժեթղթի ծավալի դիմաց «ընթացիկ գնի» (արժեքի) հաշվարկման ժամանակ կլորացումը կատարվում է ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ: Զամբյուղ փոխանցված պետական արժեթղթերի ծավալը բաժանվում է 100-ի և բազմապատկվում այդ պետական արժեթղթի շուկայական գնով, որից հետո կատարվում է նշված կլորացումը:

բ/ «Ռեպո զամբյուղում» Արժեթղթի արժողության հաշվարկման ժամանակ, տվյալ արժեթղթի «ընթացիկ գնի» նկատմամբ կիրառվող հեյրքաթի նվազեցման արդյունքում՝ նույնպես կատարվում է կլորացում ստորակետից հետո 1 նիշ (առանց հաշվի առնելու արժեթղթի քայլը), հաշվի առնելով

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

լումայի նվազագույն չափը (10 լումա):

3) «Ռեպո զամբյուղ» կորպորատիվ արժեթղթերի փոխանցման դեպքում՝ այդ կորպորատիվ արժեթղթի համար ծավալային արժողության հաշվարկը կատարվում է.

ա/ Կորպորատիվ արժեթղթերի համար՝ «Ռեպո զամբյուղ» մուտքագրված կորպորատիվ արժեթղթերի քանակի դիմաց «ընթացիկ գնի» (արժեքի) հաշվարկման ժամանակ կլորացումը կատարվում է ստորակետից հետո 2 նիշի ճշտությամբ: Որտեղ

- Զամբյուղ փոխանցված դրամային, ինչպես նաև արտարժութային կորպորատիվ արժեթղթերի քանակը բազմապատկվում է այդ կորպորատիվ արժեթղթի 1 (մեկ) հատի շուկայական գնով (արտարժութային արժեթուղթը արտահայտված ՀՀ դրամով), որից հետո կատարվում է նշված կլորացումը:

բ/ «Ռեպո զամբյուղում» կորպորատիվ Արժեթղթի արժողության հաշվարկման ժամանակ, տվյալ արժեթղթի «ընթացիկ գնի» նկատմամբ կիրառվող հեյրքաթի նվազեցման արդյունքում՝ նույնպես կատարվում է կլորացում ստորակետից հետո 1 նիշ (առանց հաշվի առնելու արժեթղթի քայլը), հաշվի առնելով լումայի նվազագույն չափը (10 լումա):

գ/ Ռեպո գործարքների կատարման ժամանակ կնքված Ռեպո գործարքը կատարվում է մինչև մեկ դրամի ճշտությամբ՝ «Ռեպո զամբյուղում» գտնվող Արժեթղթերի արժողության չափով, առանց հաշվի առնելու ստորակետից հետո մինչև 1 նիշ ճշտությամբ զամբյուղի արժողության մասը (որը կատարման պահին՝ անկախ ստորակետից հետո թվի մեծությունից կլորացվում է դեպի ներքև մինչև մեկ դրամի ճշտությամբ):

դ/ Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների կատարման ժամանակ Կենտրոնական բանկի կողմից Մասնակցին դրամական միջոցների փոխանցումը կատարվում է Կանոնների համաձայն Մասնակցի կողմից կնքված գործարքի կատարման ծավալով՝ մեկ դրամի ճշտությամբ:

4) «Ռեպո զամբյուղից» Ընդունելի արժեթղթերի հետ փոխանցման դեպքում՝ արժեթղթերի կլորացումը կատարվում է հետևյալ կերպ.
ա/ Պետական արժեթղթի կլորացումները իրականացվում են հաշվի առնելով տվյալ արժեթղթի թողարկման պայմաններով սահմանված նվազագույն չափը(քայլը):

բ/ Կորպորատիվ արժեթղթի կլորացումները իրականցվում են հաշվի առնելով տվյալ արժեթղթի թողարկման պայմաններով սահմանված նվազագույն չափը(քայլը):

5) Ռեպո գործարքների հետ կապված հաշվեգրվող տոկոսագումարները տվյալ գործարքի մարման օրը կլորացվում են մեկ դրամի ճշտությամբ (ըստ թվաբանական կլորացման կանոնների) և հաշվեգրվում մարվող ռեպո գործարքի մայր գումարին:
6) Հակադարձ ռեպո գործարքների հետ կապված հաշվեգրվող տոկոսագումարները տվյալ գործարքի մարման օրը կլորացվում են մեկ դրամի (ըստ թվաբանական կլորացման կանոնների) ճշտությամբ, երբ կատարվում է հակադարձ ռեպո գործարքի մարման գործընթացը:

132. Հակադարձ ռեպո գործարքների կնքման, կատարման ժամանակ Համակարգում կլորացումները կատարվում է հետևյալ սկզբունքով.

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

1) Աճուրդի միջոցով հակադարձ ռեպո գործարքների կնքման ժամանակ Կենտրոնական բանկի կողմից Մասնակիցների առաջարկությունները համամասնորեն կնքելու դեպքում Համակարգում կլորացումը կատարվում է մեկ դրամի ճշտությամբ:
2) Հակադարձ ռեպո գործարքների կնքման ժամանակ Կենտրոնական բանկի կողմից Մասնակիցների առաջարկությունները կնքելու նպատակով համապատասխան արժեթղթերի առանձնացման դեպքում դրանց կլորացումը կատարվում է հաշվի առնելով առանձնացվող արժեթղթի քայլի մեծությունը: Ընդ որում՝ կնքվող Հակադարձ ռեպո գործարքի ընդհանուր ծավալի դիմաց առանձնացվող համապատասխան արժեթղթերի ծավալը կլորացվում է դեպի ներքև, որտեղ հաշվի չի առնվում կնքվող Հակադարձ ռեպո գործարքի այն մասը, որը չի բավարարում տվյալ արժեթղթի քայլին:
3) Հակադարձ ռեպո գործարքների կատարման ժամանակ Կենտրոնական բանկի կողմից Մասնակցին համապատասխան արժեթղթերի փոխանցման ժամանակ դրանց կլորացումը կատարվում է հաշվի առնելով փոխանցվող արժեթղթի քայլի մեծությունը: Ընդ որում՝ Մասնակցի հետ կնքված Հակադարձ ռեպո գործարքի այն մասը, որը չի բավարարում փոխանցվող արժեթղթի քայլին, փոխանցվող արժեթղթերի ծավալի համեմատ կլորացվում է դեպի ներքև:
4) Հակադարձ ռեպո գործարքների կատարման ժամանակ Մասնակցի կողմից Կենտրոնական բանկին դրամական միջոցների փոխանցումը կատարվում է կնքված գործարքի ծավալով՝ մեկ դրամի ճշտությամբ:

9. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

9.1 Կատարված Ռեպո և Միջօրյա ռեպո գործարքի, ինչպես նաև Կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքի մարման կանոններ

133. Ռեպո գործարքի մարման օրը նույնպես կատարվում է «ռեպո զամբյուղի» վերագնահատում:
134. Տվյալ օրը մարվող Ռեպո գործարքների առկայության դեպքում Համակարգի աշխատանքային ժամանակահատվածի սկզբում բոլոր մարվող Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքները վերաձևակերպվում են որպես կատարված մեկ Միջօրյա ռեպո գործարք՝ նշված բոլոր մարվող ռեպո գործարքների և վճարվելիք ռեպո տոկոսագումարների հանրագումարի չափով: Տվյալ վերաձևակերպումը կատարվում է անկախ Մասնակցի «ռեպո զամբյուղի» արժեզրկման առկայությունից:
135. Եթե Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքի մարման օրը չի հանդիսանում Բանկային օր, ապա մարման օր կհանդիսանա դրան հաջորդող առաջիկա Բանկային օրը, և ոչ աշխատանքային օրերի համար նույնպես կհաշվարկվեն տվյալ գործարքով սահմանված տոկոսները (Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքների տոկոսները հաշվարկվում են այդ գործարքի փաստացի օրերի քանակով):

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

136. Օրվա ընթացքում կատարված Միջօրյա ռեպո գործարքը Մասնակցի կողմից պետք է մարվի մինչև Համակարգում իրականացվող գործառնությունների ամփոփման փուլը, Կենտրոնական բանկին փոխանցելով համապատասխան դրամական միջոցները:

Կատարված Միջօրյա ռեպո գործարքը կարող է մարվել նաև Օրվա ընթացքում ռեպո գործարքների զուտացման գործընթացի իրականացման արդյունքում, սույն Կանոններով սահմանված պայմանների համաձայն:

(136-րդ կետը լրաց. 16.12.14թ. թիվ 348 Ա)

137. Համակարգի աշխատանքային ժամանակահատվածի ընթացքում Մասնակցի նախաձեռնությամբ կատարված Միջօրյա ռեպոյի մարումը (մասնակի մարումը) կատարվում է Մասնակցի կողմից ներկայացված համապատասխան վճարման հանձնարարականի/ների (ՀՏ100) հիման վրա, փոխանցված գումարի չափով:

138. Վճարման հանձնարարականում նշված գումարի չափով դրամական միջոցները ելքագրվում են մասնակցի՝ Կենտրոնական բանկում վարվող թղթակցային հաշվից և ուղղվում են կատարված Միջօրյա ռեպո գործարքի մարմանը (մասնակի մարմանը): Ստացված գումարի արդյունքում համաձայն սահմանված կանոնների (տես՝ Կետ 140), Կատարված Միջօրյա ռեպո գործարքը Կենտրոնական բանկին փոխանցված դրամական միջոցների չափով վերակնքվում է կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքը, և այդ չափով վերաձևակերպվում է(ավելացվում է) առկա Կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքը: Չվերադարձված դրամական միջոցների չափով՝ Կատարված Միջօրյա ռեպո գործարքը վերակնքվում է կնքված և կատարված Միջօրյա ռեպո գործարքի:

139. Եթե մասնակցի թղթակցային հաշվին առկա չեն վճարման հանձնարարականում նշված ամբողջ գումարի չափով համապատասխան միջոցներ, ապա վճարման հանձնարարականը մերժվում է և կատարված Միջօրյա ռեպո գործարքի մարում (մասնակի մարում) չի կատարվում:

140. Եթե «ռեպո զամբյուղում» առկա են/փոխանցվել են դրամական միջոցներ, ապա Համակարգի կողմից կարող է կատարվել մարման ենթակա կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարի և «ռեպո զամբյուղում» առկա դրամական միջոցների հաշվանց (զուտացում), եթե տվյալ օրը գործող բոլոր Ռեպո գործարքների հանրագումարի չափով (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարի), «ռեպո զամբյուղի» նվազագույն արժողության (արժեթղթերի և դրամական միջոցներ) ապահովումից հետո, զամբյուղում առկա են ավելցուկային դրամական միջոցներ:

Մասնակցի «ռեպո զամբյուղում» առկա կամ փոխանցված դրամական միջոցները առաջնահերթորեն օգտագործվում են գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպոյի) մասով զամբյուղի համալրման համար, որից հետո ավել մնացած դրամական միջոցների մասով իրականացվում է կատարված Միջօրյա ռեպոյի հաշվանց: Այնուհետև, կատարված Միջօրյա ռեպո գործարքը ամբողջությամբ մարելուց հետո, ավել մնացած դրամական միջոցների մնացած մասը փոխանցվում է Մասնակցի թղթակցային հաշվին: (տես օրինակ՝ Կետ 140)

141. Համակարգում «ռեպո զամբյուղի» արժողության յուրաքանչյուր փոփոխության դեպքում ստուգվում է Մասնակցի «ռեպո զամբյուղում» առկա կամ փոխանցված դրամական միջոցների ծավալը, ըստ սահմանված կանոնների (տես՝ Կետ 140) հաշվանց իրականացնելու համար:

142. Եթե օրվա ընթացքում իրականացվել է կատարված Միջօրյա ռեպո գործարքի մարում (մասնակի մարում), ապա Մասնակցի «ռեպո զամբյուղի»

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

նվազագույն (պարտադիր) արժողությունը նվազում է այնքանով, որ պահպանվի (1) անհավասարությունը: Մասնակիցը «ռեպո զամբյուղի» ավելցուկային արժողության (այսինք՝ կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքի) առկայության դեպքում կարող է հետ վերցնել ավելցուկային արժողությանը համապատասխան արժեթղթերը, պահպանելով (1) անհավասարությունը, որի համար Կենտրոնական բանկին ներկայացվում է արժեթղթերի հետ վերադարձի հանձնարարական (ՀՏ524):

∑ L(գործող ռեպո,t)+ Sum(mature,t) ≤ Vընդ (t) (1) որտեղ՝

∑ L(գործող ռեպո,t) - տվյալ օրը գործող առկա Ռեպո գործարքների հանրագումարն է (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպոյի)

Sum(mature,t) - տվյալ պահին առկա (դեռևս չմարված) կատարված Միջօրյա ռեպո գործարքների հանրագումարն է

Vընդ (t) - տվյալ պահի դրությամբ Մասնակցի «ռեպո զամբյուղում» առկա արժեթղթերի արժողությունն է:

(տես օրինակ՝ Կետ 142-ի)

143. Ընդունելի արժեթղթերը Կենտրոնական բանկի կողմից հետ փոխանցելու արդյունքում նախկինում կնքված և չկատարված Միջօրյա ռեպո գործարքը նվազեցվում է հետ փոխանցված Ընդունելի արժեթղթերի արժողության չափով, որից հետո Ռեպո զամբյուղի Ավելցուկային արժողության առկայության դեպքում և դրա չափով, վերաձևակերպվում է նոր պայմաններով կնքված և չկատարված Միջօրյա ռեպո գործարքի:
144. Երբ Համակարգի աշխատանքային ժամանակահատվածի ամփոփման փուլի սկզբի դրությամբ (end of day procedure) առկա է չմարված/մասնակի մարված կատարված Միջօրյա ռեպո գործարք, որը չի մարվել, կամ մարվել է մասնակի (եթե օրվա ընթացքում մասնակիցը իրականացրել է մարման ենթակա կատարված Միջօրյա ռեպոյի գումարի մասնակի վճարում կամ եթե ընդհանրապես չի կատարել մարման ենթակա գումարի վճարում), ապա գործում են հետևյալ սկզբունքները՝
    1) Եթե Մասնակցի «ռեպո զամբյուղը» արժեզրկված չէ, ապա կատարված Միջօրյա ռեպո գործարքի չմարված գումարի չափով՝ կատարված Միջօրյա ռեպոն վերաձևակերպվում է Լոմբարդային ռեպո գործարքի, Կենտրոնական բանկի կողմից սահմանված տոկոսով, Կատարված Միջօրյա ռեպո գործարքը մարվում է:
    2) Եթե Մասնակցի «ռեպո զամբյուղը» արժեզրկված է և Մասնակցի թղթակցային հաշվում առկա է բավարար մնացորդ, ապա սկզբից վերացվում է արժեզրկումը՝ գործող Ռեպո գործարքների և կատարված Միջօրյա ռեպո գործարքի չմարված գումարների համար՝ մասնակցի թղթակցային հաշվից դրամական միջոցների անակցեպտ գանձման եղանակով (տես՝ Կետ 80): Այնուհետև, համաձայն Կանոնների, հնարավորության դեպքում կատարվում է հաշվանց (տես՝ Կետ 140), իսկ կատարված Միջօրյա ռեպոյի չմարված՝ մնացած գումարի չափով՝ կատարված Միջօրյա ռեպոն վերաձևակերպվում է որպես Լոմբարդային ռեպո գործարք Կենտրոնական բանկի կողմից սահմանված տոկոսով: Նշված գործողությունների արդյունքում Կատարված Միջօրյա ռեպո գործարքը մարվում է:
    3) Եթե Մասնակցի «ռեպո զամբյուղը» արժեզրկված է և Մասնակցի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

թղթակցային հաշվում բավարար դրամական միջոցների բացակայության պատճառով անհնար է լրիվ չափով վերացնել արժեզրկումը (գործող Ռեպո գործարքների և կատարված Միջօրյա ռեպո գործարքի չմարված գումարների համար), ապա «ռեպո զամբյուղը» համալրվում է թղթակցային հաշվում առկա փողով, որից հետո, համաձայն Կանոնների, հնարավորության դեպքում կատարվում է հաշվանց (տես՝ Կետ 140): Այնուհետև, եթե «ռեպո զամբյուղում» առկա արժեթղթերի արժողությունը մեծ է գործող Ռեպո գործարքների հանրագումարից, ապա վերջիններիս տարբերության չափով կատարված Միջօրյա ռեպոն վերաձևակերպվում է որպես Լոմբարդային ռեպո գործարք՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված տոկոսով: Մնացած («ռեպո զամբյուղում» առկա արժեթղթերով չապահովված մասով) կատարված Միջօրյա ռեպո գործարքը վերաձևակերպվում է որպես Մասնակցի՝ Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն, որը Մասնակցի թղթակցային հաշվին միջոցների առաջին իսկ մուտքագրման դեպքում, անակցեպտ գանձվում է Կենտրոնական բանկի կողմից: Միաժամանակ հաշվարկվում են համապատասխան տուգանքներ (տես՝ Կետ 80 և Կետ 140): Նշված գործողությունների արդյունքում Կատարված Միջօրյա ռեպո գործարքը մարվում է:

145. Կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքը, որը դեռ չի կատարվել, Համակարգում մնում են մինչև օրվա վերջի ամփոփման փուլի համար սահմանված t-ժամը:
146. Համակարգում օրվա վերջին իրականացվող գործառնությունների ամփոփման փուլում Կենտրոնական բանկի կողմից մասնակցի հետ կնքված, չկատարված Միջօրյա ռեպո գործարքը մարվում է, իսկ կնքված և չկատարված Միջօրյա ռեպո գործարքներով Կենտրոնական բանկին վաճառված Ընդունելի արժեթղթերը Կենտրոնական բանկի կողմից, Կանոններով սահմանված կարգով, հետ են փոխանցվում Մասնակցին՝ սեփականության իրավունքով:

9.2 Հակադարձ ռեպո գործարքների մարման կանոններ

147. Հակադարձ ռեպո գործարքի մարումը նախաձեռնվում է Կենտրոնական բանկի կողմից, որը իրականացվում է Համակարգում օրվա սկզբի գործառնությունների ընթացքում: Օրվա ընթացքում Հակադարձ ռեպո գործարքի մարում չի իրականացվում:
148. Տվյալ օրը մարվող Հակադարձ ռեպո գործարքի մարման իրականացման նպատակով Համակարգը ձևավորում և «Պետական արժեթղթերի հաշվառման համակարգ» է ուղարկում արժեթղթերի փոխանցման համապատասխան հաղորդագրություն (ՀՏ 523)՝ VMT մոտիվով (հիմքով), Մասնակցի «դեպո-հաշվից» Հակադարձ ռեպո գործարքում նշված արժեթղթերը Կենտրոնական բանկի «դեպո-հաշվին» հետ փոխանցելու համար:
149. Եթե տվյալ օրը առկա են մարման ենթակա մի քանի Հակադարձ ռեպո գործարքներ, ապա, դրանց մարման գործընթացը դիտարկվում է միմյանցից առանձին: Մարվող գործարքները դասավորվում են ըստ գործարքի

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

մեծության՝ նվազման կարգով: Ըստ գործարքների նվազման հաջորդականության, յուրաքանչյուր Հակադարձ ռեպո գործարքի հետ կապված ուղարկվում է առանձին հաղորդագրություն (ՀՏ 523)՝ VMT մոտիվով (հիմքով), որտեղ նշվում են տվյալ Հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող բոլոր արժեթղթերը:

150. Եթե ուղարկված հաղորդագրության մեջ նշված բոլոր արժեթղթերը գանձվում են և փոխանցվում Կենտրոնական բանկի դեպո-հաշվին (Կենտրոնական բանկը ստանում է ՀՏ 523 պատճենը, որպես հաստատում), ապա կատարվում է մարման գործընթացը՝ Կենտրոնական բանկի կողմից համապատասխան դրամական միջոցները փոխանցվում են Մասնակցի թղթակցային հաշվին և Հակադարձ ռեպո գործարքը ձևակերպվում է մարված:

151. Եթե Հակադարձ ռեպո գործարքի մարման համար համապատասխան արժեթղթերը Մասնակցի հաշվին առկա չեն կամ առկա են մասնակի (ոչ ամբողջ ծավալով), ապա Հակադարձ ռեպո գործարքի արժեթղթերի փոխանցում չի կատարվում և Համակարգը ստանում է մերժման մասին համապատասխան հաղորդագրություն (ՀՏ 535):

152. Եթե Համակարգում իրականացվող օրվա սկզբի գործառնությունների ընթացքում Հակադարձ ռեպո գործարքի մարումը հնարավոր չէ իրականացնել, ապա կատարվում է տվյալ չմարված Հակադարձ ռեպո գործարքի լուծում (խզում): Լուծման հետ կապված ձևակերպումները տրվում են մինչև տվյալ օրվա վերջ:
Չմարված Հակադարձ ռեպո գործարքների մասով ըստ սահմանված կանոնների հաշվարկվում է համապատասխան տուգանք: Հաշվարկված տուգանքը Մասնակիցը կարող է դիտարկել Մոնիթորինգի միջոցով:

10. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԶՈՒՏԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

10.1 Օրվա ընթացքում ռեպո գործառնությունների զուտացման կանոնները, մինչև օրվա վերջին իրականացվող ամփոփման փուլը

153. Համակարգում, Օրվա ընթացքում ռեպո գործարքների զուտացման գործընթացն իրականացվում է հետևյալ կանոնների համաձայն.

1. Օրվա ընթացքում զուտացման գործընթացն իրականացվում է Համակարգում միաժամանակ առկա՝ Կատարված Միջօրյա ռեպո գործարքների և Կնքված ռեպո գործարքների միջև: Ընդ որում.
   1) «Ռեպո զամբյուղը» չպետք է համալրված լինի դրամով:
   2) Զուտացման դեպքում, տվյալ պահին Համակարգում առկա Միջօրյա հայտը չի մասնակցում Օրվա ընթացքում կատարվող զուտացման գործընթացին:
2. Համակարգում, Օրվա ընթացքում զուտացման համար հիմնական պայմանների առկայության դեպքում, կնքված ռեպո գործարքները զուտացման միջոցով կատարելու համար կիրառվում են հետևյալ սկզբունքները.
   1) Կնքված ռեպո գործարքների զուտացումը օրվա ընթացքում կատարվում է գործարք առ գործարք, պահպանելով դրանց կատարման համար

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Մասնակցի կողմից տրված առաջնահերթությունը: Այսինքն, եթե Համակարգում գրանցված բարձր առաջնահերթություն ունեցող ռեպո գործարքը չի կատարվել, ապա կատարման ենթակա հաջորդ ռեպո գործարքը (ըստ իր առաջնահերթության), չի կարող կատարվել, անկախ այդ գործարքի ծավալից:

2) Կնքված ռեպո գործարքները՝ օրվա ընթացքում զուտացման ժամանակ, մասնակի չեն կատարվում: Այդ թվում, Կնքված մեկ ռեպո գործարքը չի կարող կատարվել օրվա ընթացքում իրականացվող զուտացման տարբեր փուլերում:
3) «Օրվա ընթացքում զուտացման ժամանակ, զուտացվող գումարի չափով արժեթղթերի կամ դրամական միջոցների շարժ տեղի չի ունենում:

3. Օրվա ընթացքում, տվյալ պահին Համակարգում առկա՝ կնքված Ռեպո գործարքի և առկա՝ կատարված Միջօրյա ռեպո գործարքի միջև զուտացման գործընթացի իրականացման նպատակով, զուտացման ենթակա գումարի չափը հաշվարկվում է և այդ գործարքների զուտացումը իրականացվում է հետևյալ կերպ.

1) «Օրվա ընթացքում, տվյալ պահին զուտացման ենթակա առավելագույն գումարը հավասար է DNETT = min (SUM (Ac), SUM (maturity)), որտեղ
SUM (Ac) - աճուրդի կամ երկկողմանի հայտի հիման վրա կնքված և տվյալ օրը՝ ըստ առաջնահերթության կատարման ենթակա հերթական գործարքի գումարն է:

SUM (maturity)- կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքի գումարն է:

Հաշվարկվում է նաև զամբյուղի ավելցուկային արժողությունը՝ Vավելցուկ(t) = Vընդ (t) - Lընդ (t), (կանոնների կետ՝ 85, 72):

2) Այն դեպքում, երբ կնքված մեկ Ռեպո գործարքի գումարը > (մեծ է) կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքից, ապա.
ա) Օրվա տվյալ պահին զուտացումը իրականացվում է, եթե «ռեպո զամբյուղը» արժեզրկված չէ, և Համակարգում տվյալ պահին առկա չէ կնքված և չկատարված Միջօրյա հայտ (ՀՏ 505 հայտ՝ INTD կոդով), ինչպես նաեւ տվյալ Ռեպո գործարքի չզուտացվող մասը (dsum = (SUM(Ac)-SUM(maturity)) փոքր կամ հավասար է տվյալ պահին «ռեպո զամբյուղում» առկա ավելցուկային արժողությունից (dsum ≤ Vավելցուկ(t)): (Այսինքն, երբ SUM(Ac)>SUM(maturity), պետք է տեղի ունենա հետեյալ լրացուցիչ պայմանը (SUM (Ac) ≤ SUM (maturity)+ Vավելցուկ(t), որտեղ Sum(INTD)=0):

Զուտացման արդյունքում՝ կատարված Միջօրյա ռեպո գործարքը վերաձևակերպվում է մարված Միջօրյա ռեպո գործարքի, իսկ այդ Կնքված մեկ Ռեպո գործարքի մի մասը կատարվում է զուտացմամբ՝ (DNETT) զուտացման գումարով և միաժամանակ չզուտացված մասը կատարվում է

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ավելցուկային արժողության հաշվին (մեկ դրամի ճշտությամբ):

բ) Օրվա տվյալ պահին զուտացումը չի կատարվում, եթե

բ1) «ռեպո զամբյուղը» արժեզրկված չէ, սակայն օրվա տվյալ պահին Համակարգում առկա է կնքված և չկատարված Միջօրյա հայտ: Այս դեպքում, «ռեպո զամբյուղի» ավելցուկային արժեթղթերը առաջին հերթին կիրառվում են կնքված Միջօրյա հայտի կատարման համար, ըստ սահմանված Կանոնների:

բ2) օրվա տվյալ պահին Համակարգում առկա է «ռեպո զամբյուղի» արժեզրկում:

3) Այն դեպքում, երբ կնքված մեկ Ռեպո գործարքի գումարը ≤(փոքր է կամ հավասար) կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքից, ապա

ա) Օրվա տվյալ պահին զուտացումը կատարվում է, հետեյալ դեպքերում

ա1) Եթե Համակարգում «ռեպո զամբյուղը» արժեզրկված չէ, կամ

ա2) Եթե Համակարգում առկա է «ռեպո զամբյուղի» արժեզրկում, սակայն զուտացման ենթակա DNETT գումարը (տվյալ դեպքում՝ կնքված մեկ Ռեպո գործարքի գումարը) փոքր է (կամ հավասար) «ռեպո զամբյուղի» փաստացի արժողության և գործող Ռեպո գործարքների հանրագումարի (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպո գործարքի) տարբերությունից:

Նշված դեպքերում, զուտացման արդյունքում իրականացվում է՝ կնքված մեկ Ռեպո գործարքի կատարում (այս ռեպո գործարքի լրիվ գումարով), իսկ կատարված Միջօրյա ռեպո գործարքի չզուտացված մասը վերաձևակերպվում է նոր գումարով չմարված Միջօրյա ռեպո գործարքի: Ընդ որում.

զուտացման ժամանակ (անկախ այն հանգամանքից թե «ռեպո զամբյուղը» արժեզրկված է, կամ արժեզրկումը բացակայում է), Համակարգում տվյալ պահին կնքված չկատարված Միջօրյա հայտի առկայության դեպքում, այդ Միջօրյա հայտը չի չեղարկվում (անվավեր չի ճանաչվում), այլ Համակարգի կողմից անտեսվում է Միջօրյա հայտի առաջնահերթությունը և Համակարգը անցում է կատարում կնքված ռեպո գործարքների զուտացմանը, ըստ սույն ենթակետով սահմանված կանոնների:

բ) Օրվա տվյալ պահին զուտացում չի կատարվում, եթե արժեզրկման հետևանքով «ռեպո զամբյուղի» արժողությունը ավելի փոքր է, քան գործող Ռեպո գործարքների հանրագումարը (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպոյի):

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

4. Համակարգում, օրվա ընթացքում զուտացման համար սահմանված պայմանների առկայության հետ միաժամանակ, երբ «ռեպո զամբյուղում» առկա է նաև ավելցուկային արժողություն (կնքված Ռեպո գործարքին համապատասխան), ապա սկզբից կատարվում է զուտացման գործառույթը, ըստ սահմանված զուտացման կանոնների:
5. Օրվա ընթացքում զուտացման միջոցով Ռեպո գործարքների կատարման արդյունքում Մասնակցին անմիջապես տրվում է համապատասխան տեղեկացում (ուղարկվում է ՀՏ514 հաղորդագրությունը):
6. Համակարգով գործառնությունների իրականացման համար սահմանված ժամանակահատվածում «Օրվա ընթացքում զուտացման գործընթացի» իրականացման հնարավորության ստուգումը (մանրամասն տես՝ Հավելված 6.1) կատարվում է,
   1) Օրվա սկզբի համար Կանոններով սահմանված գործառնությունների իրականացման վերջում, երբ ստուգվում է նախորդ օրերի ընթացքում կնքված ռեպո գործարքների կատարման հնարավորությունը: Ինչպես նաեւ,
   2) Օրվա ընթացքում, մինչև օրվա վերջի ամփոփման փուլի գործառնությունների իրականացումը: Ընդ որում, օրվա ընթացքում զուտացման գործընթացը կարող է իրականացվել ցանկացած պահի՝ Համակարգում սահմանված համապատասխան գործողությունների (իրադարձությունների) կատարումից հետո:

10.2 Ռեպո գործառնությունների զուտացման կանոնները համակարգում օրվա վերջին իրականացվող ամփոփման փուլում

154. Համակարգում Զուտացումը կատարվում է կնքված, սակայն դեռևս չկատարված Ռեպո գործարքի և առկա՝ կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքի միջև, որոնք միաժամանակ առկա են օրվա վերջի դրությամբ: Միջօրյա հայտը, որը ավտոմատ ակցեպտավորվում է, չի մասնակցում Համակարգում իրականացվող զուտացմանը:

Զուտացման ժամանակ, զուտացվող գումարի չափով արժեթղթերի կամ դրամական միջոցների շարժ տեղի չի ունենում:

Զուտացման ենթակա առավելագույն գումարը հավասար է NETT = min (SUM (auction), SUM (maturity)), որտեղ

SUM (auction) - կնքված, սակայն դեռևս չկատարված Ռեպո գործարքների հանրագումարն է ,

SUM (maturity)- կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքի գումարն է:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

155. Օրվա վերջում իրականացվող ամփոփման փուլում, երբ **առկա չէ** Մասնակցի «ռեպո զամբյուղի» **արժեզրկում** (ընդ որում զամբյուղում դրամական միջոցներ չկան) զուտացումը կատարվում է հետևյալ ձևով՝

1) եթե կնքված Ռեպո գործարքների հանրագումարը ≤(փոքր է կամ հավասար) կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքից, ապա կնքված Ռեպո գործարքները կատարվում են լրիվ գումարով, իսկ կատարված Միջօրյա ռեպո գործարքի չզուտացված մասը վերաձևակերպվում է Լոմբարդային ռեպո գործարքի,
2) եթե կնքված Ռեպո գործարքների հանրագումարը > (մեծ է) կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքից, ապա կնքված Ռեպո գործարքները կատարվում են զուտացման գումարով (NETT), իսկ կատարված Միջօրյա ռեպո գործարքը վերաձևակերպվում է մարված Միջօրյա ռեպո գործարքի: Կնքված Ռեպո գործարքները չկատարված մասով լուծվում են:

Եթե ամփոփման փուլում «ռեպո զամբյուղում» առկա է կնքված Միջօրյա ռեպո գործարքին համապատասխան ավելցուկային արժողություն, ապա սկզբից կատարվում է զուտացման գործառույթը, ապա կնքված և չկատարված Ռեպո գործարքների կատարումը՝ այդ ավելցուկային արժողության չափով, համաձայն սահմանված կանոնների:

156. Ամփոփման փուլում, Զուտացման իրականացման պահին «ռեպո զամբյուղի» **արժեզրկման առկայության դեպքում** գործում են հետևյալ Զուտացման պայմանները՝

1) եթե արժեզրկման հետևանքով «ռեպո զամբյուղի» արժողությունը ավելի փոքր է, քան գործող Ռեպո գործարքների հանրագումարը (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպոյի), ապա Զուտացում չի կարող կատարվել
2) եթե սահմանված Կանոնների համաձայն (տես՝ Կետ 154-ում նշված բանաձևը) հաշվարկված զուտացման գումարը (NETT) փոքր է (կամ հավասար) «ռեպո զամբյուղի» փաստացի արժողության և գործող Ռեպո գործարքների հանրագումարի (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպո գործարքի) տարբերությունից, ապա զուտացումը կատարվում է NETT գումարի չափով:
3) եթե սահմանված Կանոնների համաձայն (տես՝ Կետ 154-ում նշված բանաձևը) հաշվարկված զուտացման գումարը (NETT) մեծ է «ռեպո զամբյուղի» փաստացի արժողության և գործող Ռեպո գործարքների հանրագումարի (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպո գործարքի) տարբերությունից, ապա զուտացումը կատարվում է «ռեպո զամբյուղի» փաստացի արժողության և գործող Ռեպո գործարքների հանրագումարի տարբերության չափով:

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Մասնակցի «ռեպո զամբյուղի» արժեզրկման առկայության դեպքում, մինչև Ջուտացումը կատարվում է Մասնակցի թղթակցային հաշվից դրամական միջոցների գանձում և ռեպո զամբյուղի համալրում, այնուհետև իրականացվում է դրամական միջոցների հնարավոր հաշվանցը:

10.3 Հակադարձ ռեպո գործառնությունների զուտացման հետ կապված դրույթներ

157. Համակարգում կնքվող և մարվող Հակադարձ ռեպո գործարքների զուտացում չի իրականացվում: Կնքվող և մարվող Հակադարձ ռեպո գործարքների հետ կապված գործառնությունները իրականացվում են միմյանցից անկախ, առանց վերջիններիս միջև որևէ առաջնահերթության:
158. Համակարգում «Ռեպո» գործառնությունների և «Հակադարձ ռեպո» գործառնությունների միջև զուտացում չի իրականացվում: «Ռեպո» և «Հակադարձ ռեպո» գործառնությունները իրականացվում են միմյանցից անկախ, առանց այդ գործառնությունների միջև որևէ առաջնահերթության:

(10-րդ գլուխը խմբ. 16.12.14թ. թիվ 348Ա)

11. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԱՌԿԱ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ԱՐԺԵԿՏՐՈՆԻ ՎՃԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

11.1 «Ռեպո զամբյուղում» առկա արժեթղթի մարման գումարների տնօրինումը

159. Արժեթղթերի մարման դիմաց գումարները վճարվում են, այն անձին, որը հանդիսանում է այդ արժեթղթերի սեփականատեր՝ **արժեթղթերի «մարման օրվան» նախորդող օրվա վերջի (ժամը 24:00) դրությամբ:**
160. Եթե «ռեպո զամբյուղում» առկա են մարվող արժեթղթեր, ապա Մասնակիցը կարող է մինչև այդ արժեթղթերի մարմանը նախորդող օրը դրանք փոխարինել այլ արժեթղթերով:
161. Արժեթղթերի մարման օրը՝ Համակարգում օրվա սկզբի գործառնությունների ընթացքում «Ռեպո զամբյուղում» գտնվող մարման ենթակա արժեթղթերի արժողությունը զրոյացվում է: Այդ արժեթղթերի մարման գումարները «մարման կատարման օրը» փոխանցվում են «Ռեպո զամբյուղ» օրվա վերջում:
162. Եթե արժեթղթերի մարմանը նախորդող օրը, մասնակիցը «Ռեպո զամբյուղից» հետ չի վերցրել մարվող արժեթղթերը, ապա մարման օրը այդ արժեթղթերը չեն կարող հետ վերցնել, իսկ մարման օրվա սկզբի դրությամբ այդ արժեթղթերի արժողությունը Մասնակցի «ռեպո զամբյուղում» հավասար է զրոյի:
163. Արժեթղթի մարման դեպքում «ռեպո զամբյուղում» առկա մարվող արժեթղթերի մարման գումարները ստացվում են Կենտրոնական բանկի կողմից և ընդգրկվում «ռեպո զամբյուղում» որպես զամբյուղի դրամական բաղադրիչ: Եթե արժեթղթի համար «մարման օր» և «մարման կատարման օր» տարբեր են, ապա մարման գումարները ստացվում և «ռեպո զամբյուղ» են փոխանցվում «մարման կատարման

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

օրը»:

164. «Ռեպո զամբյուղում» գտնվող արժեթղթերի մարման դեպքում՝ եթե այդ արժեթղթերի մարման գումարները «մարման կատարման օրը» չեն փոխանցվում Կենտրոնական բանկին, ապա ամեն դեպքում Կենտրոնական բանկը «մարման կատարման օրը» իր միջոցներից վճարում է մարման գումարները՝ փոխանցելով դրանք մասնակցի «ռեպո զամբյուղ», Համակարգում օրվա վերջին գործառնությունների ամփոփման փուլում:
Մարման գումարները Կենտրոնական բանկին են փոխանցվում սահմանված համապատասխան Էլեկտրոնային հաղորդագրության միջոցով:

165. Եթե Արժեթղթի «մարման կատարման օրը» բանկային օր չէ, ապա «Ռեպո զամբյուղի» համար արժեթղթերի մարման հետ կապված գործառնությունները իրականացվում են հաջորդ բանկային օրը:

166. Սույն բաժնում նշված կետերը չեն տարածվում Ընդունելի արժեթղթերի ցանկում գտնվող այն կորպորատիվ արժեթղթերի վրա, որոնք արժեթղթի մարման հետ կապված Կանոններով սահմանված կարգով Համակարգում ավտոմատ եղանակով բացառվում են Ընդունելի արժեթղթերի ցանկից և հետ են փոխանցվում Մասնակցին:

11.2 «Ռեպո զամբյուղում» առկա արժեթղթի արժեկտրոնի դիմաց վճարված գումարի տնօրինումը

167. Արժեթղթերի արժեկտրոնի գումարները վճարվում են այն անձին, որը հանդիսանում է այդ արժեթղթերի սեփականատեր՝ արժեթղթերի «արժեկտրոնի վճարման օրվան» նախորդող օրվա վերջի (ժամը 24:00) դրությամբ:

168. Եթե «ռեպո զամբյուղում» գտնվում է Ընդունելի արժեթուղթ, որն ունի արժեկտրոնի վճարում, ապա «վճարման օրը» Համակարգը, ըստ Մասնակիցների հաշվարկում է «ռեպո զամբյուղում» գտնվող արժեկտրոնի վճարում ունեցող արժեթղթերի դիմաց վճարվող գումարները:
Եթե արժեթղթի արժեկտրոնի դիմաց վճարումների համար «վճարման օրը» և «վճարման կատարման օրը» տարբեր են, ապա սույն կետով նշված հաշվառումը կատարվում է հիմք ընդունելով «վճարման օրը»:

169. «Ռեպո զամբյուղում» առկա ընդունելի արժեթղթերի արժեկտրոնի դիմաց վճարումները ստացվում են Կենտրոնական բանկի կողմից և ընդգրկվում են «ռեպո զամբյուղում»: Եթե արժեթղթի արժեկտրոնի դիմաց վճարումների համար «վճարման օրը» և «վճարման կատարման օրը» տարբեր են, ապա արժեկտրոնի դիմաց վճարվող գումարները «ռեպո զամբյուղ» են փոխանցվում «վճարման կատարման օրը», օրվա վերջում իրականացվող գործառնությունների ընթացքում:

170. Եթե «Ռեպո զամբյուղում» գտնվում է Ընդունելի արժեթուղթ, որն ունի արժեկտրոնի վճարում մասնակիցը կարող է ցանկացած ժամանակ (այդ թվում՝ «վճարման օրից» մինչև «վճարման կատարման օրը») այդ արժեթուղթը հետ վերցնել Ռեպո զամբյուղից:

171. «Ռեպո զամբյուղում» գտնվող Ընդունելի արժեթղթերի արժեկտրոնի վճարման դեպքում՝ եթե այդ արժեթղթերի արժեկտրոնի վճարման գումարները «վճարման կատարման օրը» չեն փոխանցվում Կենտրոնական բանկին, ապա ամեն դեպքում Կենտրոնական բանկը «վճարման կատարման օրը» իր միջոցներից վճարում է արժեթղթերի արժեկտրոնի դիմաց գումարները, փոխանցելով դրանք

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

մասնակցի «ռեպո զամբյուղ», Համակարգում օրվա վերջին գործառնությունների ամփոփման փուլում:
Մարման գումարները Կենտրոնական բանկին են փոխանցվում սահմանված համապատասխան Էլեկտրոնային հաղորդագրության միջոցով:

172. Եթե ընդունելի արժեթղթի արժեկտրոնի «վճարման օրը», «վճարման կատարման օրը» բանկային օր չէ, ապա «Ռեպո զամբյուղի» համար արժեթղթերի արժեկտրոնի վճարման հետ կապված գործառնությունները իրականացվում են հաջորդ բանկային օրը:
173. Սույն բաժնում նշված կետերը չեն տարածվում Ընդունելի արժեթղթերի ցանկում գտնվող այն կորպորատիվ արժեթղթերի վրա, որոնք արժեկտրոնի վճարման հետ կապված Կանոններով սահմանված կարգով Համակարգում ավտոմատ եղանակով բացառվում են Ընդունելի արժեթղթերի ցանկից և հետ են փոխանցվում Մասնակցին:

11.3 «Հակադարձ ռեպո» գործարքների առարկա հանդիսացող արժեթղթի արժեկտրոնի դիմաց վճարված գումարի տնօրինումը

174. Կատարված Հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի հետ կապված «արժեկտրոնի վճարման կատարման օրը» Կենտրոնական բանկը օրվա սկզբում հաշվարկում և օրվա վերջում՝ գործառնությունների ամփոփման փուլում անակցեպտ եղանակով գանձում է այդ արժեկտրոնների գումարը Մասնակցի թղթակցային հաշվից:
Իսկ Մասնակցի թղթակցային հաշվին միջոցների անբավարարության դեպքում Մասնակիցը ստանձնում է Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված պարտավորություն այդ գումարի չափով, որի մասին Մասնակիցը տեղեկացվում է Մոնիթորինգ համակարգի միջոցով:

175. Եթե Հակադարձ ռեպո գործարքի մարման օրը և «արժեկտրոնի վճարման կատարման օրը» համընկնում են, ապա Կենտրոնական բանկը ամեն դեպքում հաշվարկում և անակցեպտ ձևով Մասնակցի թղթակցային հաշվից գանձում է գործարքի առարկա հանդիսացող արժեթղթի հետ կապված արժեկտրոնների գումարը: Այդ գումարը գանձվում է նաև այն դեպքում, երբ կատարվում է Հակադարձ ռեպո գործարքի լուծում:
176. Եթե Հակադարձ ռեպո գործարքի «մարման օրը», կամ արժեկտրոնի «վճարման կատարման օրը» բանկային օր չէ, ապա դրանց հետ կապված գործառնությունները իրականացվում են հաջորդ բանկային օրը:

12. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՕՐՎԱ ՍԿԶԲՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

177. Համակարգում «օրվա սկիզբի» հետ կապված գործառնությունները սկսվում է Համակարգի Ժամանակացույցով սահմանված ժամին:

178. Եթե Համակարգին Փոխկապված համակարգերով արդեն իրականացվում են հաճախորդների սպասարկման հետ կապված գործառնություններ և առկա են Մասնակիցների կողմից Համակարգին ուղղված հաղորդագրություններ, ապա դրանք մշակվում են «օրվա սկզբի» հետ կապված գործառնությունների իրականացումից հետո:

179. Համակարգում՝ համաձայն սույն Կանոնների, «օրվա սկզբում» իրականացվում են ներքոհիշյալ գործառնությունները: Եթե որևէ գործառնության իրականացման համար սահմանված պայմանը/կանոնը չի գործում (կատարման անհրաժեշտությունը չկա), ապա անցում է կատարվում հաջորդ քայլին.

1) Ռեպո գործառնությունների հետ կապված իրականացվող քայլեր

ա/Գործող ռեպո գործարքների դիմաց տոկոսների հաշվարկում, այդ թվում նաև տվյալ օրը մարվող Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքների դիմաց տոկոսների հաշվարկում

բ/ Տվյալ օրը մարվող Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքների մարում, և դրանց մայր գումարի և հաշվարկված տոկոսների հանրագումարի չափով վերաձևակերպում կատարված «Միջօրյա ռեպո» գործարքի:

գ/ «Ռեպո զամբյուղում» գտնվող մարման ենթակա արժեթղթերի (արժեկտրոնի վճարման) դիմաց՝ ըստ մասնակիցների վճարման ենթակա գումարների հաշվարկում:

դ/ «Ռեպո զամբյուղի» արժողության վերագնահատում:

ե/ «Ռեպո զամբյուղում» դրամական միջոցների առկայության դեպքում, սույն Կանոնների համաձայն հաշվանցի իրականացում:

զ/Տվյալ օրը կատարման ենթակա կնքված Ռեպո գործարքների և կնքված Միջօրյա ռեպո գործարքների կատարում, ըստ սահմանված ընդհանուր կանոնների:

է/ Ընդունելի արժեթղթերի ցանկում գտնվող՝ արժեկտրոնի վճարման և/կամ արժեթղթի մարման հետ կապված լրացուցիչ սահմանափակում ունեցող կորպորատիվ արժեթղթերի բացառում Ընդունելի արժեթղթերի ցանկից՝ ըստ գործող կանոնների:

ը/ Համակարգի կողմից Ընդունելի արժեթղթերի ցանկից արժեկտրոնի վճարման և/կամ արժեթղթի մարման հետ կապված լրացուցիչ սահմանափակում ունեցող եւ «Ռեպո զամբյուղում» գտնվող կորպորատիվ արժեթղթերի հետ փոխանցում Մասնակցին՝ ըստ գործող կանոնների:

2) Հակադարձ ռեպո գործառնությունների հետ կապված իրականացվող քայլեր.

ա/ Գործող Հակադարձ ռեպո գործարքների դիմաց տոկոսների հաշվարկում, այդ թվում նաև տվյալ օրը մարվող Հակադարձ ռեպո գործարքների դիմաց տոկոսների հաշվարկում

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

բ/ Հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի արժեկտրոնների դիմաց վճարման ենթակա գումարների հաշվարկում, մասնակցի թղթակցային հաշվից օրվա վերջում գանձելու համար:

գ/ Տվյալ օրը մարման ենթակա Հակադարձ ռեպո գործարքների առանձնացում և դրանց հետ կապված արժեթղթերը Կենտրոնական բանկին փոխանցելու նպատակով համապատասխան հաղորդագրությունների ուղարկում: Վերջիններիս կատարման արդյունքների համաձայն՝ Հակադարձ ռեպո գործարքների մարում:

դ/ Մարված Հակադարձ ռեպո գործարքի դիմաց Կենտրոնական բանկի կողմից համապատասխան դրամական միջոցների փոխանցում Մասնակցի թղթակցային հաշվին:

ե/ Տվյալ օրը կատարման ենթակա կնքված Հակադարձ ռեպո գործարքների կատարում՝ ըստ սահմանված ընդհանուր կանոնների:

180. Համակարգում «օրվա սկզբի» գործառնությունների ավարտից հետո արդյունքների արտացոլում Մոնիթորինգ համակարգի հասանելի տվյալներում:

13. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՄՓՈՓՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ (end of day procedure) ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ

181. Համակարգում իրականացվող գործառնությունների հետ կապված ամփոփման փուլը (end of day procedure) սկսվում է Համակարգի Ժամանակացույցով սահմանված ժամին:
182. Եթե Համակարգում օրվա վերջի գործառնությունները սկսելուց հետո, փոխկապված համակարգերից կամ Կենտրոնական դեպոզիտարիայից ստացվում են Մասնակիցների հանձնարարականների հետ կապված հաղորդագրություններ (դրամական միջոցների կամ Արժեթղթերի փոխանցման մասին), ապա վերջիններս հաշվի չեն առնվում Համակարգում իրականացվող գործառնությունների ամփոփման փուլում և մշակվում են հաջորդ Բանկային օրը:

13.1 Ռեպո գործառնությունների հետ կապված ամփոփման փուլում իրականացվող քայլերը

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

183. Համակարգում Ռեպո գործառնությունների ամփոփման փուլում իրականացվում են ներքոհիշյալ գործառնությունները: Եթե որևէ գործառնության իրականացման համար սահմանված պայմանը/կանոնը չի գործում (կատարման անհրաժեշտությունը չկա), ապա անցում է կատարվում հաջորդ քայլին.

1) Չկատարված Միջօրյա հայտի չեղյալացում,
2) Կնքված չկատարված Միջօրյա ռեպո գործարքի մարում,
3) «Ռեպո զամբյուղում» առկա մարված արժեթղթերի դիմաց դրամական միջոցների (արժեկտրոնների հետ կապված վճարումների) մուտքագրում Մասնակիցների ռեպո զամբյուղներ, ինչպես նաև զամբյուղի արժողության վերահաշվարկի իրականացում,
4) Գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպոյի) հանրագումարի հաշվարկում,
5) Մարման ենթակա կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարի հաշվարկում,
6) «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողության հաշվարկում (առկա արժեթղթերի արժողություն և դրամական միջոցներ)
7) Կնքված, սակայն չկատարված Ռեպո գործարքների հանրագումարի հաշվարկում,
8) «Ռեպո զամբյուղի» բացասական արժողության ստուգում,
9) Արժեզրկման դեպքում «Ռեպո զամբյուղի» համալրում դրամական միջոցներով՝ Մասնակցի թղթակցային հաշվից:
10) «Ռեպո զամբյուղի» արժեզրկման վերացման պահանջի ստուգում,
11) «Ռեպո զամբյուղում» դրամական միջոցների և Կատարված միջօրյա ռեպո գործարքի առկայության դեպքում հաշվանցի իրականացման հնարավորության ստուգում և կատարում:
12) Կատարված Միջօրյա ռեպո գործարքի և կնքված Ռեպո գործարքի առկայության դեպքում օրվա վերջին ամփոփման փուլի Ճուտացման ընթացակարգի իրականացում (մանրամասն տես՝ Հավելված 6),
13) Կատարված Միջօրյա ռեպո գործարքի առկայության դեպքում վերջինիս մարում ըստ սահմանված կանոնների:
14) Կնքված Ռեպո գործարքների առկայության դեպքում վերջիններիս կատարում կամ լուծում ըստ սահմանված կանոնների:
15) Կնքված չկտարված Միջօրյա ռեպո գործարքի մարում և ավելցուկային արժողությանը համապատասխան արժեթղթերի հետ փոխանցում՝ հաշվի առնելով Թրիգեր արժողությունը, ըստ սահմանված կանոնների:
16) Կանոններով սահմանված դեպքերում համապատասխան տուգանքների հաշվարկում:
17) Համակարգում օրվա վերջին ամփոփման փուլի վերջում ռեպո, լոմբարդային ռեպո գործարքների լուծման համար սահմանված պայմանների առկայության ստուգում, և վերջիններիս առկայության դեպքում Համակարգի կողմից բոլոր գործող Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքների ավտոմատ կերպով լուծում:

(183-րդ կետը լրաց. 16.12.14թ. թիվ 348 Ա)

Ֆինանսական հանակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

13.2 Հակադարձ ռեպո գործառնությունների հետ կապված ամփոփման փուլում իրականացվող քայլերը

184. Սույն Կանոնների համաձայն կնքված Հակադարձ ռեպո գործարքների կատարման ժամանակ ամփոփման փուլում իրականացվում են հետևյալ քայլերը.

ա/ Մասնակիցների կողմից ուղարկված դրամական միջոցների չափով համապատասխան Հակադարձ ռեպո գործարքների կատարում: Կնքված Հակադարձ ռեպո գործարքները կարող են ամփոփման փուլում կատարվել մասնակի, եթե Մասնակիցը համապատասխան դրամական միջոցներ չի փոխանցել:

բ/ Կնքված, սակայն չկատարված Հակադարձ ռեպո գործարքների ձևակերպում որպես չկատարված Հակադարձ ռեպո գործարք, և չկատարված մասով տուգանքի հաշվարկում: Չկատարված մասով Հակադարձ ռեպո գործարքների լուծում:

գ/ Կատարված Հակադարձ ռեպո գործարքների դիմաց Կենտրոնական բանկի կողմից արժեթղթերի փոխանցում Մասնակիցների ազատ դեպո հաշիվներին:

185. Հակադարձ ռեպո գործարքի մարման օրը տվյալ գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի գծով՝ Մասնակցի թղթակցային հաշվից «արժեկտրոնի գումարի» անակցեպտ գանձում:

186. Օրվա սկզբում չմարված Հակադարձ ռեպո գործարքները լուծվում են և դրանց չափով հաշվարկվում է տուգանք Մասնակցի նկատմամբ:

14. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՆՈՆՆԵՐ

14.1 Ռեպո գործարքների լուծման հետ կապված կանոններ

187. Եթե «Ռեպո գործարքի գլխավոր համաձայնագրով» սահմանված քանակով հաջորդական Բանկային օրերի ընթացքում անընդմեջ առաջանում է սույն Կանոններով (տես Կետ՝ 188) նշված իրավիճակներից գոնե մեկը, ապա սահմանված ժամանակահատվածի վերջին օրը (գործառնությունների ամփոփման փուլում) Կենտրոնական բանկը ավտոմատ լուծում է մասնակցի գործող (կատարված) բոլոր Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքները:

188. Սույն Կանոնների համաձայն Կենտրոնական բանկը լուծում է տվյալ Մասնակցի հետ գործող բոլոր Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքները, եթե

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

սահմանված հաջորդական Բանկային օրերի ընթացքում՝ մինչև օրվա վերջին իրականացվող ամփոփման փուլը, մասնակիցը ունի.

1) Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված պարտավորություն, և/կամ
2) Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված (մասնակի մարված) տուգանք:

189. Համակարգում Մասնակցի հետ Ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքների լուծումը կատարվում է ավտոմատ կերպով:

190. Համակարգում Մասնակցի հետ Ռեպո գործարքների լուծման դեպքում «Ռեպո զամբյուղում» առկա Արժեթղթերը ելքագրվում են:

14.2 Հակադարձ ռեպո գործարքների լուծման հետ կապված կանոններ

191. Համակարգում մասնակցի հետ Հակադարձ ռեպո գործարքների լուծումը կատարվում է ավտոմատ կերպով: Հակադարձ ռեպո գործարքը լուծվում է տվյալ գործարքի մարման օրը (օրվա սկզբում իրականացվող գործառնությունների ընթացքում), Կենտրոնական բանկի կողմից ուղարկված հաղորդագրության համաձայն՝ Հակադարձ ռեպո գործարքի առարկա հանդիսացող արժեթղթերի փոխանցումը Կենտրոնական բանկին անհնար լինելու դեպքում:

192. Մարման ենթակա Հակադարձ ռեպո գործարքի հետ կապված, Մասնակցի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում լուծվում է միայն տվյալ գործարքը: Իսկ եթե առկա են այդ Մասնակցի հետ գործող այլ Հակադարձ ռեպո գործարքներ, ապա դրանք չեն լուծվում: Մասնակցի հետ կնքված այն Հակադարձ ռեպո գործարքները, որոնք պետք է կատարվեն տվյալ օրվան հաջորդող այլ Բանկային օրերի ընթացքում, չեն լուծվում:

15. ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

15.1 Մասնակիցների կողմից Կենտրոնական բանկին ուղղված էլեկտրոնային հաղորդագրությունների ներկայացումը

193. Ռեպո/Հակադարձ ռեպո գործարքների կատարման և մարման հետ կապված՝ Մասնակիցների կողմից դրամական միջոցների փոխանցման, արժեթղթերի փոխանցման, արժեթղթերի հետ փոխանցման հաղորդագրությունների ներկայացումը կատարվում է էլեկտրոնային եղանակով, ըստ Կենտրոնական բանկի կողմից սահմանված էլեկտրոնային հաղորդագրությունների: Սույն հաղորդագրությունների ներկայացումը Մասնակիցների կողմից կատարվում է էլեկտրոնային հաղորդագրությունների առաքման համակարգի միջոցով,

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

որոնք ներկայացվում են փոխկապված համակարգերով գործառնությունների կատարման համար սահմանված ժամանակահատվածում:

194. Համակարգում գործունեության համար սահմանված աշխատանքային ժամից դուրս Փոխկապված համակարգերից ներկայացված հաղորդագրությունները չեն մշակվում տվյալ օրը, Համակարգով կատարված գործառնությունների ամփոփման փուլի ընթացքում:

15.2 Կորպորատիվ արժեթղթերի հետ կապված էլեկտրոնային հաղորդագրությունների ներկայացումը Համակարգին

195. Կենտրոնական բանկի և Մասնակիցների միջև ռեպո գործառնությունների իրականացման հետ կապված Մասնակիցների կողմից փոխանցված կորպորատիվ արժեթղթերի հաշվառումը ապահովում է Կենտրոնական դեպոզիտարիան: ՀՀ Կենտրոնական բանկի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև փոխհարաբերությունները կարգավորվում են սույն Կանոններով և միմյանց միջև կնքված համապատասխան պայմանագրով:

196. Կորպորատիվ արժեթղթերը «Ռեպո զամբյուղ» փոխանցվում են Մասնակցի կողմից անմիջապես Կենտրոնական դեպոզիտարիային արժեթղթերի փոխանցման համապատասխան հաղորդագրություն ներկայացնելու միջոցով, համաձայն Կենտրոնական դեպոզիտարիայի և Մասնակցի միջև սահմանված կարգի:

197. Կենտրոնական դեպոզիտարիան, Մասնակցի կողմից սահմանված արժեթղթերը ՀՀ Կենտրոնական բանկի համապատասխան «դեպո հաշվին» փոխանցելու դեպքում անմիջապես Կենտրոնական բանկ է ուղարկվում համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն (ՀՏ 523 պատճեն), ըստ Կենտրոնական բանկի կողմից սահմանված էլեկտրոնային հաղորդագրությունների, որը հաստատում է Մասնակցի կողմից «Ռեպո զամբյուղ» կորպորատիվ արժեթղթերի փոխանցումը:

198. «Ռեպո զամբյուղ» ուղղված կորպորատիվ արժեթղթերի փոխանցման մասին համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունը Կենտրոնական դեպոզիտարիայից Համակարգը ընդունում է մինչև «օրվա վերջին գործառնությունների իրականացումը» սկսելը՝ ըստ սահմանված Ժամանակացույցի:

199. «Ռեպո զամբյուղից» կորպորատիվ արժեթղթերի դուրս բերման համար Մասնակցի կողմից համապատասխան էլեկտրոնային հաղորդագրությունը (ՀՏ 524) անմիջապես ուղարկվում է դեպի Համակարգ (Կենտրոնական բանկ):

200. «Ռեպո զամբյուղից» արժեթղթերի դուրս բերման հաղորդագրության կատարման դեպքում, նշված արժեթղթերը Կենտրոնական բանկի «դեպո հաշվից» Մասնակցին հետ փոխանցելու համար Համակարգի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային ներկայացվում է համապատասխան էլեկտրոնային հաղորդագրություն (ՀՏ 523 համապատասխան մոտիվով):

201. Արտառոց իրավիճակներում, երբ Կենտրոնական բանկի և Կենտրոնական դեպոզիտարիայի միջև էլեկտրոնային եղանակով հաղորդագրությունների ներկայացումը անհնար է, դրանք կարող են ներկայացվել թղթային եղանակով, համաձայն այդ գործունեության կատարման համար սահմանված կանոնների:

202. Էլեկտրոնային հաղորդագրությունների ընդունումը կամ թղթային եղանակով դրանց ներկայացումը կատարվում է Համակարգով գործառնությունների իրականացման Ժամանակացույցի համաձայն:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

16.ԳԼՈՒԽ. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՅԼ ԿԱՆՈՆՆԵՐ

203. Կենտրոնական բանկի կողմից Մասնակիցների հետ կնքվող՝ Ռեպո, Հակադարձ ռեպո, Միջօրյա ռեպո, Լոմբարդային ռեպո գործարքների կատարման, մարման, ինչպես նաև սույն Կանոններով սահմանած պայմանների չկատարման դեպքում կիրառվում են սահմանված համապատասխան տուգանքներ:
204. Համակարգի միջոցով կատարվող Ռեպո, Միջօրյա ռեպո, Հակադարձ ռեպո գործարքների հետ կապված սույն Կանոններով սահմանված պարտավորությունների/պայմանների չկատարման դեպքում կիրառված տուգանքների վերաբերյալ Համակարգը ձևավորում է համապատասխան տեղեկատվություն, որը Մասնակիցներին հասանելի է Մոնիթորինգի միջոցով՝ Համակարգում օրվա վերջին իրականացվող ամփոփման փուլից հետո:
205. Համակարգում կիրառվող տուգանքների և դրանց չափը սահմանվում է Կողմերի միջև կնքված Գլխավոր համաձայնագրի համաձայն:
206. Համակարգի միջոցով գործառնությունները իրականացվում են «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի միջոցով գործառնությունների իրականացման հետ կապված ժամանակացույցի» համաձայն (տես՝ Հավելված 7):
207. Կենտրոնական բանկի կողմից Համակարգում կարող են կատարվել Կանոններով, ինչպես նաև Գլխավոր համաձայնագրով սահմանված փոփոխություններ/ սահմանափակումներ: Կենտրոնական բանկի կողմից կիրառվող սահմանափակումները (փոփոխությունները) Համակարգում մուտքագրման պահից անմիջապես ազդում են կատարվող գործարքների վրա: Ընդ որում՝ այդ սահմանափակումները (փոփոխությունները) հետադարձ ուժ չունեն Համակարգում արդեն իսկ կատարված գործարքների վրա:
208. Համակարգի օպերատորի մոտ առաջացած տեխնիկական խնդիրների հետևանքով սույն Կանոններով սահմանված գործառնությունների իրականացման անհնարինության դեպքում, կարող է դադարեցվել Համակարգի աշխատանքը, Մասնակիցների կողմից ներկայացվող Հայտերը, հաղորդագրությունները կարող են մերժվել և/կամ չընդունվել Կենտրոնական բանկի կողմից:

16.1 Մասնակցի մոտ Համակարգով գործառնությունների իրականացման անհնարինության, միջադեպերի առաջացման և անվտանգության հետ կապված կանոններ

209. Մասնակցի կողմից պետք է կատարվի տեղեկացում (սեղմ ժամկետներում) Կենտրոնական Բանկին՝ Համակարգի հետ կապված տեղեկատվական անվտանգության միջադեպերի մասին, այն է.
1) Մասնակցին տրամադրված տեղեկատվական ակտիվների վնասում, կորուստ, փոփոխում, ոչնչացում, հափշտակում,
2) Մասնակցին տրամադրված գաղտնաբառերի, էլեկտրոնային բանալիների

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

կորուստ կամ վարկաբեկում,

3) կոնֆիդենցիալ տեղեկատվության արտահոսք,
4) Համակարգում Մասնակցին (Լիազոր օգտագործողներին) տրամադրված իրավասությունների տիրապետում այլ անձանց կողմից, կամ այդպիսի կասկածների առաջացում:

210. Համակարգում տեղեկատվական անվտանգության միջադեպերի մասին տեղեկացումը կատարվում է Սի-Բի-Էյ-Նեթ միջբանկային համակարգչային ցանցով՝ սահմանված էլեկտրոնային հասցեների կիրառմամբ:

211. Մասնակցի կողմից Համակարգով գործառնությունների իրականացման անհնարինության դեպքում նույնպես կատարվում է տեղեկացում Կենտրոնական բանկին, եթե վերջինիս առաջացումը կապված չէ Մասնակցի ներքին համակարգերում առկա խնդիրների հետ:

Գլուխ.16.1. Ժամկետային վարկային հարթակում գործարքների կնքման երաշխիքային արժեթղթերով «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի Մասնակցի անունից միջօրյա ռեպո գործարքի կնքումը և կատարումը

212. Ժամկետային վարկային հարթակում կնքված գործարքների արդյունքում վարկառու բանկի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում, դրանք մարելու նպատակով, Կենտրոնական դեպոզիտարիան կարող է վարկառու բանկի անունից նախաձեռնել և վարկառու բանկի երաշխիքային արժեթղթերով կնքել Միջօրյա ռեպո գործարք: Ընդ որում.

1) Ժամկետային վարկային հարթակում կնքված գործարքներ են հանդիսանում «ՆԱՍԴԱՔ-Օ-ԷՄ-ԷՔՍ Արմենիա» ԲԲԸ կողմից սահմանված կանոնների համաձայն Ժամկետային վարկային հարթակում կնքված գործարքները:

2) Ժամկետային վարկային հարթակի երաշխիքային արժեթղթեր են հանդիսանում (այսուհետ՝ Երաշխիքային արժեթղթեր) վարկառու բանկի կողմից Կենտրոնական դեպոզիտարիայի համապատասխան դեպո հաշվի վրա փոխանցված և երաշխիքային հիմնադրամում հաշվառվող արժեթղթերը, որոնց դիմաց Ժամկետային վարկային հարթակում կնքվել են համապատասխան գործարքներ:

213. Ժամկետային վարկային հարթակի երաշխիքային արժեթղթերով Միջօրյա ռեպո գործարքների կնքման և կատարման համար գործում են «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգում գործառնությունների կատարման հետ կապված սույն Կանոններով սահմանված սկզբունքները և կանոնները:

214. Ժամկետային վարկային հարթակի երաշխիքային արժեթղթերով Համակարգում միջօրյա ռեպո գործարքի կնքման համար կիրառվող ՀՏ523 համապատասխան հաղորդագրությունը (LRP (LOAN RESOURCES PLAT-

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

FORM)–փոխանցման հիմքով) ուղարկվում է միայն Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից: Այդ թվում.

1) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից համապատասխան հաղորդագրությունների ընդունումը և ուղարկումը կատարվում է Կենտրոնական դեպոզիտարիային նույնականացնող 86300-կոդի կիրառմամբ:

2) Կենտրոնական դեպոզիտարիայի նախաձեռնությամբ միջօրյա ռեպո գործարքի կնքման համար ՀՏ523 հաղորդագրության «փոխանցման հիմք» դաշտում պետք է նշվի միայն LRP -կոդը:

3) Միջօրյա ռեպո գործարքի կնքման համար ներկայացվող ՀՏ523 հաղորդագրության մեջ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից պարտադիր նշվում է Ժամկետային վարկային հարթակում պարտավորություններ ունեցող վարկառու բանկի տվյալները, որի անունից Կենտրոնական դեպոզիտարիան կնքում է միջօրյա ռեպո գործարք:

4) Ներկայացվող հաղորդագրության մեջ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից նշվում են միայն վարկառու հանդիսացող Մասնակցի երաշխիքային արժեթղթերի վերաբերյալ տվյալները, նշելով փոխանցվող արժեթղթի ծավալը և այդ արժեթուղթը նույնականացնող պետական գրանցման համարը:

5) Էլեկտրոնային եղանակով, հաղորդագրությունները ուղարկվում են ըստ Էլեկտրոնային հաղորդագրությունների կիրառման համար սահմանված պահանջների:

6) Թղթային եղանակով կարգադրությունները ներկայացվում են Կանոններով սահմանված ընթացակարգով և ժամկետներում:

215. Կենտրոնական դեպոզիտարիայի նախաձեռնությամբ Միջօրյա ռեպո գործարքի կնքման համար LRP-«փոխանցման հիմքով» ներկայացվող հաղորդագրությունը (ՀՏ523) նախատեսված է երաշխիքային արժեթղթերը Մասնակցի «ռեպո-զամբյուղ» փոխանցելու և վերջինիս արդյունքում Միջօրյա ռեպո գործարք կնքելու և կատարելու համար:

216. Միջօրյա ռեպո գործարքի կնքման համար Մասնակցի «ռեպո-զամբյուղ» փոխանցվող Ժամկետային վարկային հարթակի երաշխիքային արժեթղթերի վրա տարածվում են Ընդունելի արժեթղթերի համար Կանոններով սահմանված պահանջները: Ինչպես նաև կիրառվում են ստորև նշված լրացուցիչ պահանջները.

1) Կենտրոնական դեպոզիտարիայի նախաձեռնությամբ Միջօրյա ռեպո գործարք կնքելու համար կարող են կիրառվել Ընդունելի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

պետական արժեթղթերը, իսկ Ընդունելի կորպորատիվ արժեթղթերով գործարք չի կնքվում:

2) Ժամկետային վարկային հարթակի երաշխիքային արժեթղթերով Միջօրյա ռեպո գործարքը կնքվում և կատարվում է LRP-«փոխանցման հիմքով» ՀՏ523 հաղորդագրության ընդունման օրը: Միջօրյա ռեպո գործարքի կնքման և կատարման ամսաթվերը չեն կարող լինել տարբեր:

3) Կենտրոնական բանկ ներկայացված ՀՏ523 հաղորդագրության մեջ նշված երաշխիքային արժեթուղթը չպետք է մարվի Միջօրյա ռեպո գործարքի կնքման օրը: Սույն պայմանը չի կիրառվում արժեթղթի արժեկտրոնի վճարման օրը այդ արժեթղթով գործարք կնքելու ժամանակ:

4) Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ներկայացվող ՀՏ523 հաղորդագրության մեջ պետք է նշվի միայն մեկ վարկառու հանդիսացող Բանկի երաշխիքային արժեթղթերի վերաբերյալ տվյալներ:

5) Ժամկետային վարկային հարթակի երաշխիքային արժեթղթերը Մասնակցի «ռեպո-զամբյուղ» փոխանցվելու դեպքում չեն օգտագործվում.

ա. «Ռեպո-զամբյուղի» համալրման նպատակով, երբ այդ Մասնակցի «ռեպո-զամբյուղը» արժեզրկված է

բ. Ռեպո կամ Միջօրյա ռեպո գործարքների կատարման համար, երբ «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգում առկա է այդ Մասնակցի կողմից տվյալ օրը կատարման ենթակա ռեպո գործարք և(կամ) առկա է կնքված, սակայն չկատարված Միջօրյա ռեպո գործարքի հայտ (ՀՏ505):

217. Ժամկետային վարկային հարթակում պարտավորություններ ունեցող վարկառու մասնակիցը, որի երաշխիքային արժեթղթերը Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից փոխանցվում են ռեպո-զամբյուղ, պետք է հանդիսանա «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի Մասնակից:

218. Երաշխիքային արժեթղթերի միջոցով Միջօրյա ռեպո գործարք կնքելու և կատարելու համար Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից համապատասխան (ՀՏ523) հաղորդագրությունը ուղարկվում է «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ»: Սույն հաղորդագրության ընդունումը և մշակումը կատարվում է ըստ Կենտրոնական բանկի կողմից այդ համակարգով գործառնությունների կատարման համար սահմանված ժամանակացույցի:

219. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ուղարկված հաղորդագրությունը (ՀՏ523, LRP–փոխանցման հիմքով) ստանալու դեպքում իրականացվում է Կանոններով սահմանված համապատասխան պահանջների ստուգում: Ընդ որում, առնվազն ստուգվում են

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

1) Համակարգի Մասնակցի հետ կապված պահանջները

2) Ընդունելի արժեթղթերի հետ կապված պահանջները

3) Ռեպո-զամբյուղում արժեթղթերի հաշվառման վերաբերյալ պահանջները

4) Միջօրյա ռեպո գործարք կնքելու և կատարելու վերաբերյալ սահմանված պահանջները:

220. Եթե ստացված հաղորդագրության (ՀՏ523, LRP-փոխանցման հիմքով) ստուգման արդյունքները չեն բավարարում սահմանված պահանջներին, ապա այդ հաղորդագրության ընդունումը, Միջօրյա ռեպո գործարքի կնքումը և կատարումը մերժվում է: Ընդ որում, մերժման դեպքում Կենտրոնական դեպոզիտարիային ուղարկվում է երկրորդային շուկայի ծանուցման հաղորդագրությունը (ՀՏ 535):

221. «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում» ընդունված հաղորդագրության (ՀՏ523) կատարման արդյունքում, նշված երաշխիքային արժեթղթերը Կենտրոնական դեպոզիտարիայի համապատասխան դեպո հաշվից փոխանցվում են Կենտրոնական բանկի ռեպո-դեպո հաշվին (Մասնակցի «ռեպո- զամբյուղ»):

222. «Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում» ընդունված հաղորդագրության (ՀՏ523, LRP-փոխանցման հիմքով) կատարման արդյունքում, ձևավորվում է այդ հաղորդագրության պատճենը՝ 2 (երկու) օրինակից, որից.

1) Առաջին օրինակը ուղարկվում է «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգ՝ Միջօրյա գործարքի կնքման և կատարման նպատակով:

2) Երկրորդ օրինակը ուղարկվում է ժամկետային վարկային գործառնությունների հարթակում այն վարկառու Մասնակցին, որի արժեթղթերը փոխանցվել են վերջինիս «ռեպո-զամբյուղ»:

3) Արժեթղթերի փոխանցման արդյունքների մասին Կենտրոնական դեպոզիտարիային ուղարկվում է երկրորդային շուկայի ծանուցման հաղորդագրությունը (ՀՏ 535):

223. «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգը ստանալով արժեթղթերի փոխանցումը հաստատող հաղորդագրության պատճենը (ՀՏ523, LRP-«փոխանցման հիմքով»), իրականացվում է Կանոններով սահմանված համապատասխան պահանջների ստուգում, Միջօրյա ռեպո գործարքի գրանցում, կնքում և կատարում: Ընդ որում՝ Միջօրյա ռեպո հայտի գրանցումը, կնքումը, կատարումը, երաշխիքային արժեթղթերի հաշվառումը «ռեպո-զամբյուղում» և դրամական միջոցների փոխանցումը իրականացվում է մեկ

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ընդհանուր փուլով, որպես ամբողջական գործընթաց:

224. Միջօրյա ռեպո գործարքի կնքման համար «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգում ընդունված (ՀՏ523) հաղորդագրության ստուգման գործընթացում հաշվի չի առնվում.

1) Մասնակցի «ռեպո զամբյուղի» արժեզրկման հետևանքով զամբյուղի համալրման պահանջը,

2) Կանոններով սահմանված դեպքերում՝ Մասնակցի «ռեպո զամբյուղում» որոշակի չափով դրամական միջոցների առկայությունը,

3) Մասնակցի կողմից այլ պարտավորությունների մարման անհրաժեշտությունը:

225. «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգում Միջօրյա ռեպո գործարքի (LRP-«փոխանցման հիմքով») գրանցման, կնքման և կատարման գործընթացի հետ կապված, սույն Կանոններով սահմանված պահանջների ապահովման հետ միասին իրականացվում են նաև ստորեւ նշված գործառնությունները.

1) Հաշվարկվում է Մասնակցի «ռեպո-զամբյուղ» փոխանցված երաշխիքային արժեթղթերի արժողությունը, հաշվի առնելով յուրաքանչյուր փոխանցված արժեթղթի «ընթացիկ գինը», ինչպես նաև տվյալ արժեթղթի համար Կենտրոնական բանկի կողմից սահմանված հեյրքաթը: Ընդ որում, «Ռեպո զամբյուղ» պետական արժեթղթերի փոխանցման դեպքում (LRP-«փոխանցման հիմքով») կիրառվում են Համակարգի կանոններով կլորացումների կատարման համար սահմանված կանոնները:

2) Համակարգում ձևավորվում և գրանցվում է Միջօրյա ռեպո գործարքի հայտ (ՀՏ505), որը փոխկապված է (LRP-«փոխանցման հիմքով») համապատասխան ՀՏ523 հաղորդագրության հետ: Ընդ որում.

ա. LRP-«փոխանցման հիմքով» ձևավորված Միջօրյա ռեպո գործարքի հայտի (ՀՏ505) գումարը, հաշվարկվում է ավտոմատ կերպով՝ «ռեպո-զամբյուղի» փոխանցված երաշխիքային արժեթղթերի արժողության չափով (գումարը դրամային արտահայտությամբ): Իսկ

բ. Միջօրյա ռեպո գործարքի հայտի գումարը կլորացվում է մեկ դրամի ճշտությամբ, առանց հաշվի առնելու ստորակետից հետո առկա մասը (որը, անկախ ստորակետից հետո թվի մեծությունից կատարման պահին կլորացվում է դեպի ներքև, մինչև մեկ դրամի ճշտությամբ):

3) LRP-«փոխանցման հիմքով» ձևավորված Միջօրյա ռեպո հայտին (ՀՏ505) Համակարգի կողմից ավտոմատ տրվում է (-1) մինուս մեկ առաջնահերթություն, և անմիջապես իրականացվում է տվյալ գործարքի կնքման և կատարման գործընթացը: Սույն հայտը (ՀՏ505) Համակարգում կատարվում է առաջնահերթ և անկախ Մասնակցի կողմից

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ուղարկված Միջօրյա ռեպո հայտից (ՀՏ505), որը ունի 0 (զրո) առաջնահերթություն:

4) Համակարգում գրանցված Միջօրյա ռեպո գործարքը (LRP-«փոխանցման հիմքով») անմիջապես կնքվում է և ստանում կատարման ենթակա՝ SAT կարգավիճակ: «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգում կնքված այս Միջօրյա ռեպո գործարքը չի հայտնվում գործարքների կատարման համար նախատեսված համապատասխան հերթում:

5) «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգում (LRP-«փոխանցման հիմքով») Միջօրյա ռեպո գործարքի հայտ (ՀՏ505) գրանցվելու արդյունքում.

   ա. չեն փոփոխվում մինչև այդ գործարքի գրանցման պահը Մասնակցի կողմից ուղարկված և Համակարգում կատարման ենթակա Միջօրյա ռեպո հայտի (ՀՏ505) պայմանները,

   բ. չեն փոփոխվում այդ գործարքի գրանցումից հետո Մասնակցի կողմից ուղարկված Միջօրյա ռեպո հայտի (ՀՏ505) պայմանները, ինչպես նաև չեն փոփոխվում (LRP-«փոխանցման հիմքով») նոր ձևավորված Միջօրյա ռեպո գործարքի պայմանները:

6) Կատարված Միջօրյա ռեպո գործարքը (LRP-«փոխանցման հիմքով») դիտարկվում է որպես տվյալ օրը Մասնակցի կողմից մարման ենթակա Միջօրյա ռեպո գործարքի մի մաս, որի ընդհանուր գումարին ավելացվում է (LRP-«փոխանցման հիմքով») կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը:

7) Միջօրյա ռեպո գործարքի (LRP-«փոխանցման հիմքով») կատարման արդյունքում ընդունված հաղորդագրության (ՀՏ523) մեջ նշված ընդունելի երաշխիքային արժեթղթերը հաշվառվում են որպես Մասնակցի «ռեպո զամբյուղի» տարր: Վերջինիս արդյունքում համաձայն Համակարգի կանոնների «ռեպո զամբյուղի» պահանջվող մակարդակը ավելացվում է կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարի չափով (որը կատարվում է անմիջապես Միջօրյա ռեպո գործարքի կատարումից հետո):

8) Համակարգում կատարված Միջօրյա ռեպո գործարքը ավտոմատ կերպով անմիջապես ստանում է կատարված՝ EXC կարգավիճակ:

9) Միջօրյա ռեպո գործարքի (LRP-«փոխանցման հիմքով») կատարման արդյունքում ձևավորվում է ՀՏ514 հաղորդագրությունը (INTD- փոխանցման հիմքով) 2(երկու) օրինակից, որից.

   ա. Առաջին օրինակը (ՀՏ514) ուղարկվում է համապատասխան վարկառու Մասնակցին, իսկ

   բ. Երկրորդ օրինակը (ՀՏ514) ուղարկվում է Կենտրոնական դեպոզիտարիային:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

226. Կենտրոնական բանկի «Գործառնական օր» համակարգը գործարքի կատարման վերաբերյալ Համակարգից համապատասխան հաղորդագրություն (ՀՏ055) ընդունելու դեպքում՝ «Գործառնական օր» համակարգում տրվում են համապատասխան ձևակերպումներ կապված՝ վարկառու Մասնակցի Միջօրյա ռեպո գործարքով պարտավորության հետ:

227. Միջօրյա ռեպո գործարքի կատարման արդյունքում դրամական միջոցները փոխանցվում են միայն Կենտրոնական դեպոզիտարիային: Ընդ որում, գործարքի կատարման հետ միաժամանակ, Միջօրյա ռեպո գործարքի գումարը փոխանցվում է՝ Կենտրոնական դեպոզիտարիայի երաշխիքային դրամային հաշվին:

228. Երաշխիքային դրամային հաշվին միջոցների մուտքագրման արդյունքում Կենտրոնական բանկի «Գործառնական օր» համակարգի կողմից Կենտրոնական դեպոզիտարիային ուղարկվում է տեղեկացում (ՀՏ 910)՝ միջոցների մուտքագրման մասին:

229. Միջօրյա ռեպո գործարքի կատարումից հետո «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգը կատարում է Մասնակցի «ռեպո զամբյուղի» և Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների հաշվառման համար Համակարգի կանոններով սահմանված գործառնությունները (այդ թվում, «ռեպո-զամբյուղում» դրամական միջոցների առկայության դեպքում, իրականացվում է հաշվանցի հնարավորության ստուգում՝ կատարված միջօրյա ռեպո գործարքի և «ռեպո-զամբյուղի» միջոցների միջև, և այլն):

(Գլուխ 16.1-ը լրաց. 24.12.13թ. թիվ 302 Ա)

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

17. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

ՀՀ Կենտրոնական Բանկին

Դիմում ՀՀ Կենտրոնական բանկ «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգին և Մոնիթորինգ համակարգին Մասնակիցների միացման մասին

Սույնով խնդրում ենք

_____

(ընկերության անվանումը)

1. Միացնել

☐ ՀՀ կենտրոնական բանկի «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգին

☐ «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի Մոնիթորինգին

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

2. Մասնակցին ուղղված տեղեկատվության ուղարկման հասցե

ա. _____

CBANet էլեկտրոնային հասցե 1

բ. _____

CBANet էլեկտրոնային հասցե 2

գ. _____

CBANet էլեկտրոնային հասցե 3

3. Միաժամանակ հավաստում ենք, որ ընդունում ենք «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի կանոնների պահանջները, ինչպես նաև հաստատում ենք ՀՀ օրենքին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի որոշումներին համապատասխան գործելու մեր համաձայնությունը:
4. Հեռախոս՝ ա) _____, բ) _____, գ) _____

Գործադիր

մարմնի ղեկավար՝ _____ _____

(պաշտոնը) (անուն, ազգանուն) (ստորագրություն)

«_____» _____ _____թ.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Հավելված 2

ՀՀ Կենտրոնական Բանկին

Դիմում ՀՀ Կենտրոնական բանկ «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի Մոնիթորինգում Լիազոր օգտագործողների գրանցման (հեռացման), նրանց իրավասությունների տրամադրման մասին

Սույնով խնդրում ենք

☐ թույլատրել (տրամադրել) սահմանված իրավասությունները

☐ արգելել նախկին իրավասությունները

«Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի Մոնիթորինգում

_____ _____

___ -ին

(Լիազոր օգտագործողի անուն ազգանուն)

հանդես գալ _____
Մասնակցի

(ընկերության՝ որպես Մասնակից անվանումը)

անունից, որպես Լիազոր օգտագործող:

Լիազոր օգտագործողին տրամադրել միայն նշված իրավասությունները, որոնք հանդիսանում են ամբողջական և վերջնական:

Սույն դիմումով ներկայացված իրավասությունների ցանկը հիմք է հանդիսանում նշված Լիազոր օգտագործողի համար նախկինում սահմանված իրավասությունների փոխարեն նորը սահմանելու համար:

☐ Տրամադրել Մուտքի անուն _____

(login name)

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Իրավասության անվանումը	Թույլատրվող իրավասություններ
Տվյալ օրվա Կատարումների և Մարումների դիտում	☐
Ռեպո Հայտերի մուտքագրում	☐
Ռեպո Երկկողմանի գործարքների հայտի մուտքագրում	☐
Ռեպո Ընդունված հայտերի դիտում	☐
Ռեպո Ակցեպտավորված առաջարկների դիտում	☐
Ռեպո Գործարքների դիտում	☐
Հակադարձ Ռեպո Հայտերի մուտքագրում	☐
Հակադարձ Ռեպո Երկկողմանի գործարքների հայտի մուտքագրում	☐
Հակադարձ Ռեպո Ընդունված հայտերի դիտում	☐
Հակադարձ Ռեպո Ակցեպտավորված առաջարկների դիտում	☐
Տուգանքների դիտում	☐
Միջօրյա Ռեպո Հայտերի մուտքագրում	☐
Միջօրյա Ռեպո Ընդունված հայտերի դիտում	☐
Միջօրյա Ռեպո Ակցեպտավորված առաջարկների դիտում	☐
Միջօրյա Ռեպո Գործարքների դիտում	☐
Հակադարձ Ռեպո Գործարքների դիտում	☐
Ուղարկված հայտերի դիտում	☐
Գործարքների դիտում	☐
Ռեպո զամբյուղի դիտում	☐
Հակադարձ ռեպո զամբյուղի դիտում	☐

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Հեռախոս՝ ա) _____, բ) _____, գ) _____

Գործադիր

մարմնի ղեկավար՝ _____ _____

(պաշտոնը) (անուն, ազգանուն) (ստորագրություն)

« _____» _____ _____թ.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Հավելված 2.1

Լիազոր օգտագործողի համակարգչին ներկայացվող նվազագույն պահանջներ

Անվանում	Նվազագույն ցուցանիշ
Ցանցային քարտ	Ethernet 10 ՄԲիտ
Օպերացիոն համակարգ	Windows Professional XP, Vista, կամ Windows 7 TCP/IP կանխագրերի աջակցում
Բրոուզեր	IE7 և բարձր, Mozila 2.0 և բարձր, Opera
silverlight	installed
Javascript	Enabled
ՍԻ-ԲԻ-Էյ-Նեթ ցանց	Լիազոր օգտագործողի համակարգչի միացում ՍԻ-ԲԻ-Էյ-Նեթ ցանցին

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Հավելված 3

«Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգում Հայտերի,Միջօրյա հայտի ընդունման հետ կապված կիրառվող կարգավիճակներ

Հայտի կարգավիճակի նույնացուցիչ՝

- **IB00** (համակարգ մուտքագրված,սկզբնական կարգավիճակ)- կարգավիճակը ստանում է նոր մուտքագրված հայտը, որը դեռ չի մշակվել

- **IB01** (միջանկյալ կարգավիճակ)- հայտը գտնվում է մշակման ընթացքում

- **NORG** (մերժված (տվյալ հաղորդագրության ուղարկման իրավունքի բացակայություն, վերջնական կարգավիճակ)- կարգավիճակը ստացվում է իրավունքների բացակայության դեպքում,ձևավորվում է 534 հաղորդագրություն,

- **NOPR** (մերժված (իրականացվող գործարքի պարամետրի սխալ արժեք, վերջնական կարգավիճակ)- կարգավիճակը ստացվում է հայտերի դաշտերի արժեքների սխալ պարամետրերի դեպքում, ձևավորվում է 534 հաղորդագրություն

- **NOTM** (մերժված (հայտի ստացման սահմանված ժամկետի խախտում, վերջնական կարգավիճակ)-կարգավիճակը ստացվում է աճուրդին ուղարկված 505 հայտի դեպքում, երբ աճուրդի ժամը անցել է կամ դեռ չի սկսել, ձևավորվում է 534 հաղորդագրություն

- **NOIC** (մերժված – աճուրդի նախնական պայմանի սխալ արժեք, վերջնական կարգավիճակ) -կարգավիճակը ստացվում է աճուրդին ուղարկված 505 հայտի առաջարկությունների քանակի խախտման դեպքում, ձևավորվում է 534 հաղորդագրություն

- **NOAC** (մերժված (աճուրդի անցկացման պայմանի սխալ արժեք, վերջնական կարգավիճակ) -կարգավիճակը ստացվում է աճուրդին ուղարկված 505 հայտի դեպքում, երբ հայտի որևէ դաշտի արժեք չի համապատասխանում հայտարարված աճուրդի պայմաններին, ձևավորվում է 534 հաղորդագրություն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

- **ACOK** (գործարքի կնքմանը թույլատրված)-հայտը, որը բավարարում է բոլոր պայմաններին և պարամետրերին ստանում է նախնական ACOK կարգավիճակը, ձևավորվում է 534 հաղորդագրություն

- **DUOK** (երկկողմանի գործարքի կնքում)-երկկողմանի հայտը ,որը ունի ACOK կամ REFS կարգավիճակները նախնական հաստատելուց հետո ստանում է DUOK կարգավիճակը

- **IBOK** (գործարքի կատարմանը թույլատրված, վերջնական կարգավիճակ)- կարգավիճակը ստացվում է հետևյալ դեպքերում.
  1. Աճուրդը վերջնական հաստատելուց հետո
  2. Երկկողմանի հայտը վերջնական հաստատելուց հետո
  3. Ցանկացած միջօրյա հայտ մշակվելուց հետո, որի դաշտերի արժեքները բավարարում են բոլոր պարամետրերին

  ձևավորվում է 512 հաղորդագրություն

- **REFS** (երկկողմանի գործարքի մերժում)- երկկողմանի հայտը ,որը ունի ACOK կամ DUOK կարգավիճակները նախնական մերժելուց հետո ստանում է REFS կարգավիճակը

- **RFOK** (երկկողմանի գործարքի մերժման հաստատում, վերջնական կարգավիճակ)- REFS կարգավիճակով հայտը, երկրորդ անգամ հաստատելուց հետո ստանում են RFOK կարգավիճակ, ձևավորվում է 512 հաղորդագրություն

- **RECL** (չեղյալացված հաղորդագրություն, վերջնական կարգավիճակ)- կարգավիճակը ստացվում է հետևյալ դեպքերում.
  1. Նույն աճուրդին երկրորդ հայտի ուղարկման դեպքում, առաջինը ստանում է RECL կարգավիճակ
  2. Սեփական հայտը չեղյալացնելու դեպքում
  3. Հայտարարված աճուրդը չեղյալացնելու դեպքում, բոլոր նշված աճուրդին ուղարկած հայտերը ստանում են RECL կարգավիճակ

  ձևավորվում է 534 հաղորդագրություն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Հավելված 4

Հայտում նշված առաջարկությունների կատարման արդյունքի հետ կապված կիրառվող կարգավիճակներ

Հայտում նշված յուրաքանչյուր առաջարկության կատարման արդյունքի հետ կապված կարգավիճակի նույնացուցիչը՝

- **SAT** [Satisfied](բավարարված)-կարգավիճակը ստացվում է հետևյալ դեպքերում.
  1. Աճուրդը հաստատելուց հետո, բոլոր այն առաջարկները, որոնք ամբողջությամբ բավարարվել են
  2. Երկկողմանի հայտը հաստատելուց հետո, համապատասխան հայտի առաջարկը
  3. Դեռևս չկատարված միջօրյա հայտի առաջարկը

- **STP** [Satisfied Partly] (մասնակիորեն բավարարված)-կարգավիճակը ստացվում է աճուրդը անցկացնելուց հետո, այն առաջարկները, որոնք բավարարվել են մասնակի

- **NST** [Not Satisfied] (չբավարարված)- կարգավիճակը ստացվում է հետևյալ դեպքերում.
  1. Աճուրդը անցկացնելուց հետո, բոլոր այն առաջարկները, որոնք չեն բավարարվել
  2. Երկկողմանի հայտը մերժելուց հետո

- **ANL** [Annuled] (չեղյալացված)- կարգավիճակը ստացվում է աճուրդը չեղյալացնելուց հետո,տվյալ աճուրդին ուղարկած հայտերի առաջարկները

- **NEX** [Not Executed] (չկատարված)-օրվա վերջում, բոլոր այն առաջարկները, որոնց կատարման ամսաթիվը այսօր է և օրվա ընթացքում չեն կատարվել ստանում են NEX կարգավիճակ

- **EXC** [Executed] (կատարված)-կարգավիճակը ստանում են այն առաջարկները, որոնց համապատասխան գործարքը կատարվել է ամբողջությամբ

- **EPT** [Executed Partly] (մասնակիորեն կատարված)- կարգավիճակը ստանում են այն առաջարկները, որոնց համապատասխան գործարքը կատարվել է մասնակի

- **RDM** [Redeemed] (մարված, վերջնական կարգավիճակ)-համապատասխան գործարքը մարվելուց հետո , առաջարկը ստանում է RDM կարգավիճակ

- **TMP** [Terminated] (խզված/լուծված, վերջնական կարգավիճակ)- համապատասխան գործարքը խզվելուց հետո , առաջարկը ստանում է TMP կարգավիճակ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Հավելված 5

«Ռեպո/Հակադարձ ռեպո» համակարգում գործառնությունների իրականացման ժամանակ ոչ պետական պարտատոմսերի նկատմամբ կիրառվող չափանիշները

1. ՀՀ ԿԲ «Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգում գործառնությունների համար ընդունելի պարտատոմսը պետք է՝

1.1. թողարկված լինի Կենտրոնական բանկի կողմից բարձր՝ «Ա +»-ից «Գ -» վարկանիշ ստացած առևտրային կազմակերպությունների կողմից (որոնք ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա բորսայում ցուցակված են հիմնական ցուցակում),

1.2. թույլատրված լինի Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

2. Յուրաքանչյուր պարտատոմսի համար պետք է առկա լինի հետևյալ տեղեկատվությունը.

2.1. թողարկողի անվանումը,

2.2. տարբերակիչ ծածկագիրը,

2.3. պարտատոմսի արժույթը,

2.4. պարտատոմսերի քանակը (հատերով) և մեկ պարտատոմսի անվանական արժեքը, եթե թողարկումը ծավալային չէ,

2.5. ծավալային արժեթղթերի համար գնման նվազագույն ծավալը, քայլի չափը (առկայության դեպքում) և թողարկման ծավալը,

2.6. պարտատոմսի տեսակը (զեղչատոկոսային, ֆիքսված արժեկտրոնով, լողացող արժեկտրոնով),

2.7. պարտատոմսի թողարկման ամսաթիվը (dd/mm/yyyy),

2.8. առաջին արժեկտրոնի կուտակման ամսաթիվը (dd/mm/yyyy),

2.9. պարտատոմսի տեղաբաշխման ամսաթիվը (dd/mm/yyyy),

2.10. առաջին արժեկտրոնի մարման (վճարման) ամսաթիվը (dd/mm/yyyy),

2.11. պարտատոմսի մարման ամսաթիվը (dd/mm/yyyy),

2.12. արժեկտրոնի մարման (վճարման) հաճախականությունը (ամսական, եռամսյակային, կիսամյակային, տարեկան),

2.13. արժեկտրոնային տոկոսադրույքը (%, ստորակետից հետո 4 նիշ ճշգրտությամբ):

3. Պարտատոմսերի նկատմամբ կիրառվում են հետևյալ չափանիշները.

3.1 Արտարժութային պարտատոմսի արժույթը պետք է լինի միայն ԱՄՆ դոլար կամ ԵՎՐՈ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

3.2. Պարտատոմսի մարման և մարման կատարման (վճարման) ամսաթվերը չպետք է տարբեր լինեն:

3.3. Պարտատոմսի արժեկտրոնի մարման և արժեկտրոնների վճարման ամսաթվերը (յուրաքանչյուր ժամկետի համար) չպետք է տարբեր լինեն՝ բացառությամբ կետ 3.17-ում նշված դեպքի:

3.4. Պարտատոմսի արժեկտրոնը թողարկման արժույթից տարբերվող այլ արժույթով վճարվելու դեպքում պարտադիր պետք է վճարվի ՀՀ դրամով, իսկ պարտատոմսի արժույթի փոխակերպման փոխարժեքը պետք է լինի արժեկտրոնի վճարման օրվա նախորդ օրը ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքը:

3.5. Պարտատոմսի տեսակը պետք է լինի զեղչատոկոսային, արժեկտրոնային՝ ֆիքսված կամ լողացող, պարտատոմսը չպետք է լինի մասնակի մարումներով կամ օպցիոնով պարտատոմս:

3.6. Լողացող արժեկտրոնով պարտատոմսի դեպքում հղման դրույքը (reference rate) պետք է լինի թափանցիկ, հանրային, ձևավորված ՀՀ ֆինանսական շուկայում, անընդհատ, վստահելի և մատչելի հնարավոր ներդրողներին:

3.7. Լողացող արժեկտրոնով պարտատոմսի օրերի հաշվարկման պայմանականությունը և արժեկտրոնի հղման դրույքի օրերի հաշվարկման պայմանականությունը պետք է լինի նույնը:

3.8. Լողացող արժեկտրոնով պարտատոմսի արժեկտրոնի դրույքը, հղման դրույքից կախված, պետք է վերասահմանվի արժեկտրոնի կուտակման ամսաթվից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ, սակայն այն չի կարող գերազանցել հինգ աշխատանքային օրը:

3.9. Լողացող արժեկտրոնով պարտատոմսի դեպքում պետք է առկա լինի առնվազն երկու հղման տոկոսադրույք՝ հիմնական և երկրորդային: Եթե հիմնական հղման տոկոսադրույքը ցանկացած պատճառով դառնում է անհասանելի և անհնարին է դառնում լողացող արժեկտրոնի սահմանումը հաջորդ ժամանակահատված(ներ)ի համար, ապա լողացող արժեկտրոնը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է հիմք ընդունելով մյուս հղման դրույքները՝ ըստ նախօրոք սահմանված առաջնայնության սկզբունքի:

3.10. Լողացող արժեկտրոնով պարտատոմսի արժեկտրոնի սահմանման նպատակով հղման դրույքին գումարվող մեծությունը՝ հղման դրույքի մարժան (Reset Margin-RM), պետք է լինի հաստատուն անվանական մեծություն:

3.11. Արժեկտրոնային տոկոսադրույքը պետք է լինի անվանական տոկոսադրույք և չի կարող լինել բացասական մեծություն:

3.12 Արժեկտրոնների վճարման ժամանակահատվածները պետք է լինեն կանոնավոր:

3.13. Արժեկտրոնի վճարումը պետք է իրականացվի տարեկան կիսամյակային, եռամսյակային կամ ամսական պարբերականությամբ:

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչության + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

3.14. Օրերի հաշվարկման պայմանականությունը պետք է լինի $Act/365$, Act/Act, $Act/360$ կամ $30/360$, որոնց սահմանումները տրված են ստորև բերված աղյուսակում՝

$\frac{ACT}{ACT}$	DCS = Օրերի իրական քանակը $D2M2Y2 - D1M1Y1$
	DCC = Օրերի իրական քանակը $D3M3Y3 - D1M1Y1$
	$D3N$ = Օրերի իրական քանակը $D3M3Y3 - D2M2Y2$
$\frac{ACT}{365}$	DCS = Օրերի իրական քանակը $D2M2Y2 - D1M1Y1$
	$DCC = \frac{365}{f}$
	$D3N$ = Օրերի իրական քանակը $D3M3Y3 - D2M2Y2$
$\frac{ACT}{360}$	DCS = Օրերի իրական քանակը $D2M2Y2 - D1M1Y1$
	$DCC = \frac{360}{f}$
	$D3N$ = Օրերի իրական քանակը $D3M3Y3 - D2M2Y2$
$\frac{30}{360}$	$DCS = 360(Y2 - Y1) + 30(M2 - M1) + D2 - D1$ եթե $D1(D2) = 31$, ապա $D1(D2) = 30$
	$DCC = \frac{360}{f}$
	$D3N = 360(Y3 \quad Y2) \mid 30(M3 \quad M2) \mid D3 \quad D2$ եթե $D2(D3) = 31$, ապա $D2(D3) = 30$

DCS	գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում
$D3N_{\#}$	գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա միջև եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

DCC	փուլի օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում
D2M2Y2	գործարքի կատարման ամսաթիվն է
D1M1Y1	գործարքի կատարման օրվան նախորդող արժեկտրոնի մարման/արժեկտրոնի կուտակման սկզբի ամսաթիվն է
D3M3Y3	գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման/անվանական արժեքի մարման ամսաթիվն է
f	արժեկտրոնի վճարման հաճախականությունն է *(զեղչատոկոսային պարտատոմսի համար վերցվում է 1)*
Բոլոր ամսաթվերը ներկայացված են օր/ամիս/տարի պայմանականությամբ:	

3.15. Փուլի ընթացքում իրականացվում է արժեկտրոնի հավասարաչափ կուտակում (100 միավոր անվանական արժեքի դիմաց հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ # $AI = 100 * \frac{c}{f} * \frac{DCP}{DCC}$, C-արժեկտրոնի տարեկան անվանական դրույքն է):

3.16. Ֆիքսված արժեկտրոնով պարտատոմսերի դեպքում արժեկտրոնների վճարումները հավասար են ($100 * C/f$ յուրաքանչյուր ժամանակահատվածում 100 միավոր անվանական արժեքի դիմաց):

3.17. Եթե պարտատոմսի մարման կամ արժեկտրոնների վճարման օրը ոչ աշխատանքային օր է (անկախ նրանից հայտարարված է բանկային օր, թե ոչ), ապա այդ պարտատոմսի մարումը, արժեկտրոնի վճարումը պետք է կատարվի տվյալ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

3.18. Լողացող արժեկտրոնով պարտատոմսի դեպքում՝ արժեկտրոնների գումարները որոշվում են նախապես սահմանված արժեկտրոնային ժամանակահատվածներին և պարտատոմսի՝ օրերի հաշվարկման պայմանականության համապատասխան:

3.19. Պարտատոմսի մարման և/կամ արժեկտրոնի գումարները վճարվում են այն անձին, որը հանդիսանում է այդ արժեթղթերի սեփականատեր՝ արժեթղթերի «մարման օրվան» և/կամ «արժեկտրոնի վճարման օրվան» նախորդող օրվա վերջի (ժամը 24:00) դրությամբ:

(Հավելված 5-ը խմբ. 07.06.13թ. թիվ 143 Ա, 11.02.14թ. թիվ 32 Ա)

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Հավելված 5.1.

Ռեպո/հակադարձ ռեպո գործառնությունների համար ընդունելի պարտատոմսի գնի հաշվարկման մեթոդաբանություն

1. Մինչև 1 տարի ժամկետայնությամբ զեղչատոկոսային պարտատոմսի դեպքում գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$P = \frac{100}{1 + \frac{y}{100}\frac{DSN}{DCC}}$$

որտեղ՝

DSN - գործարքի կատարման օրից (settle date) մինչև մարում մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության[1] դեպքում,

DCC- տարվա օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

y - մինչև մարում եկամտաբերություն:

2. Ֆիքսված արժեկտրոնով պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$DP = \frac{C}{f}\sum_{i=1}^{N}\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+\tau}}$$

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

որտեղ՝

[1] Օրերի հաշվարկման թույլատրելի պայմանականությունների համար տես՝ **Հավելված 5**

Ֆինանսական հանձնարարի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

DSN-գործարքի կատարման օրից (settle date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC-գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

f-արժեկտրոնի վճարման հաճախականություն,

N-հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվ,

C- տարեկան արժեկտրոն 100 միավոր անվանական արժեքի դիմաց,

y- մինչև մարում եկամտաբերություն:

3. Լողացող արժեկտրոնով պարտատոմսի դեպքում յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի համար լրիվ գինը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$P^F = \sum_{i=1}^{n} \frac{100 \times (I_{i-1} + RM) \times (T_i - T_{i-1}) \times \frac{1}{DCC}}{\prod_{k=1}^{i} D_k} + \frac{100}{\prod_{k=1}^{n} D_k}$$

$$D_1 = 1 + \frac{1}{DCC} \times DSN \times (r + DM)$$

$$D_k = 1 + \frac{1}{DCC} \times (T_k - T_{k-1}) \times (I_{k-1} + DM), k \neq 1$$

որտեղ՝

n- հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների քանակ,

I- արժեկտրոնի հղման դրույք,

RM- արժեկտրոնի հղման դրույքի մարժա,

DM- (Discount Margin) դիսկոնտավորման մարժա, որը դիսկոնտային գործակիցների հաշվարկման համար գումարվում է համապատասխան տոկոսադրույքներին,

$T_i - T_{i-1}$- i-րդ արժեկտրոնի փուլի օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

DSN- հաշվարկման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի վճարման օրը համապատասխան պայմանականության դեպքում,

DCC- տարվա օրերի քանակը համապատասխան պայմանականության դեպքում (կիրառվում է զեղչատոկոսային պարտատոմսի սկզբունով),

r- մինչև առաջին արժեկտրոնի վճարման օրվա համապատասխան եկամտաբերության կորի համապատասխան ժամկետայնության ինտերպոլացված տոկոսադրույք,

D- դիսկոնտավորման գործակից:

3.1. Ընթացիկ օրվա դրությամբ արժեկտրոնների հաշվարկման համար անհրաժեշտ հղման դրույքների անհայտ մեծությունները՝ I, վերցվում են հավասար՝ հայտարարված հղման դրույքի պարամետրերին համապատասխանող, ընթացիկ տվյալին:

4. Թափանցիկ, հանրային, վստահելի, մատչելի գնային աղբյուրի առկայության դեպքում թույլատրելի պարտատոմսի գինը կամ եկամտաբերությունը (սպրեդը, լողացող արժեկտրոնի դեպքում և/կամ դիսկոնտավորման մարժան) վերցվում է տվյալ աղբյուրից:
5. ՀՀ դրամով թողարկված ՀՀ պետական զեղչատոկոսային կամ ֆիքսված արժեկտրոնային (առանց մասնակի մարումների) պարտատոմսի գինը հաշվարկվում է պետական պարտատոմսերի համապատասխան եկամտաբերության կորից, ըստ «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի կառուցման կարգի» (ՀՀ ԿԲ նախագահի որոշում N1/467Ա, 07.06.2013):
6. ՀՀ ԿԲ նախագահի որոշմամբ, պարտատոմսի՝ պետական պարտատոմսերի կորի նկատմամբ գնանշման դեպքում, մինչև մարում եկամտաբերությունը բաժանվում է երկու բաղադրիչի՝

$$y=r+s,$$

որտեղ՝

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

r - թողարկման պահին պետական պարտատոմսերի համապատասխան եկամտաբերության կորի համապատասխան ժամկետայնության ինտերպոլացված տոկոսադրույքն է: Զեղչատոկոսային պարտատոմսերի դեպքում դիտարկում է պետական կարճաժամկետ պարտատոմսերի կորը, արժեկտրոնային պարտատոմսերի դեպքում՝ պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորը, իսկ այն դեպքում, երբ պարտատոմսի ժամկետայնությունը թողարկման պահին գերազանցում է 1 տարին և այն արժեկտրոն չի վճարում՝ պետական պարտատոմսերի սփոթ տոկոսադրույքների կորը: Եթե պարտատոմսի օրերի հաշվարկման պայմանականությունը/կուտակաման հաճախականությունը տարբերվում է պետական պարտատոմսերի համապատասխան կորի օրերի հաշվարկման պայմանականությունից/կուտակման հաճախականությունից, ապա գնանշման համար օգտագործվում է ճշգրտված եկամտաբերության կորը:

s - թողարկման պահին թողարկման մինչև մարում եկամտաբերության սփրեդն է պետական կորի համապատասխան ժամկետայնության ինտերպոլացված տոկոսադրույքի նկատմամբ:

6.1. 6-րդ կետում նշված պարտատոմսերի դեպքում թողարկման օրվան հաջորդող օրերի համար պարտատոմսի գնի հաշվարկն իրականացվում է անփոփոխ թողնելով s-ը, իսկ r-ը վերցվում է տվյալ օրվա եկամտաբերության կորի համապատասխան ժամկետայնության ինտերպոլացված մինչև մարում եկամտաբերությունը:

7. Միջազգային վարկանշող կազմակերպությունների կողմից (Moody's, S&P, Fitch) բարձր վարկանիշ ստացած միջազգային ֆինանսական կազմակերպության կողմից թողարկված ՀՀ դրամով պարտատոմսի գնի եկամտաբերությունը վերցվում է ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի նկատմամբ սպրեդով (ըստ սույն հավելվածի 4 և 6 կետերի):
8. Այլ պարտատոմսի դեպքում մինչև մարում եկամտաբերությունը տեղաբաշխման պահին ձևավորված եկամտաբերությունն է:
9. Եթե պարտատոմսի ժամկետայնությունը թողարկման պահին գերազանցում է 1 տարին և այն արժեկտրոն չի վճարում, ապա գինը թողարկման արժույթով յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց հաշվարկվում է 2-րդ կետում ներկայացված բանաձևով՝ տարեկան արժեկտրոնի դրույքը վերցնելով զրո:
10. Պարտատոմսի գինը հաշվարկելիս հաշվի են առնվում աշխատանքային օրերի պայմանականությունը (business day convention), արժեկտրոնի հաշվարկման և վճարման պայմանականությունները (coupon calculation period, coupon payment date), տոնական և հիշատակի օրերը՝ սահմանված «Հայաստանի Հանրապետության տոների և հիշատակի օրերի մասին» ՀՀ օրենքով, ինչպես

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

նաև տաղավար տոները՝ սահմանված «Աշխատանքային օրերը տեղափոխելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ:

10.1. Զեղչատոկոսային պարտատոմսի դեպքում մարման օրը փոխարինվում է անվանական արժեքի վճարման օրով:

10.2. Արժեկտրոնային պարտատոմսի դեպքում ճշգրտումն իրականացվում է այն դեպքում, երբ պարտատոմսի մարմանը մնացել է մեկ արժեկտրոնային փուլ. մարման օրը փոխարինվում է անվանական արժեքի վճարման օրով:

11. Պարտատոմսի գինը հաշվարկվում է թողարկման արժույթով: Արտարժույթով թողարկման դեպքում պարտատոմսի դրամային գինը հաշվարկվում է որպես արտարժույթով գնի և նախորդ օրվա՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքի արտադրյալ:

12. Պարտատոմսի դրամային լրիվ գինը 100 միավոր անվանական արժեքի դիմաց ոչ ամբողջական մասով կլորացվում է 7 նիշի ճշտությամբ, իսկ վճարվելիք արժեկտրոնը՝ տասնորդական ճշտությամբ:

13. Տոկոսադրույքների ինտերպոլացիան իրականացվում է գծային մեթոդով՝

$$y(t) = y_i + \frac{t - T_i}{T_{i+1} - T_i}(y_{i+1} - y_i)$$

որտեղ՝

$T_i, (T_{i+1})$ Ժամկետայնություններ, ընդ որում $T_i < T_{i+1}$

$y_i, (y_{i+1})$ Ժամկետայնություններին համապատասխան տոկոսադրույքեր

t Այն ժամկետայնությունն է, որի համար հաշվարկվում է ինտերպոլացված տոկոսադրույքը, ընդ որում $T_i < t < T_{i+1}$

Երբ t մեծ (փոքր) է ամենամեծ (ամենափոքր) ժամկետայնությունից, իրականացվում է էքստրապոլացիա՝ վերցնելով $T_{i+1}(T_i)$ ամենամեծ (ամենափոքր) ժամկետայնությունը, որի արդյունքում $t > T_{i+1}$ $(t < T_i)$:

13.1. Ինտերպոլացված տոկոսադրույքները ստանալու համար արժեկտրոնային պարտատոմսերի t տարիներով արտահայտված ժամկետայնությունները հաշվարկվում են ըստ համապատասխան պայմանականության հետևյալ բանաձևով՝

$$t = \frac{(N-1) + \min\left(1, \frac{DSN}{DCC}\right)}{Freq}$$

որտեղ՝

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

N- Գործարքի կատարման օրվա դրությամբ վճարվելիք արժեկտրոնների քանակ

DSN- Գործարքի կատարման օրից մինչև հաջորդ արժեկտրոնի/մարման օրը օրերի քանակը համապատասխան պայմանականության դեպքում

DCC- Գործարքի օրին նախորդող արժեկտրոնի/թողարկան օրվա և հաջորդ արժեկտրոնի/մարման օրվա միջև օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում

Freq- Տարեկան արժեկտրոնների քանակ:

Սփոթ տոկոսադրույքների ինտերպոլացիայի դեպքում կառուցվում են հիպոթետիկ արժեկտրոնային ժամանակահատվածներ հիպոթետիկ պարտատոմսի համար, որի մարման ամսաթիվը հավասար է սփոթ տոկոսադրույքի ամսաթվին: Այնուհետև տարիներով արտահայտված ժամկետայնությունը հաշվարկվում է վերը ներկայացված մեթոդաբանությամբ:

Զեղչատոկոսային պարտատոմսերի դեպքում t հաշվարկվում է հետևյալ կանոնով՝

$$t=\frac{DSN}{DCC}$$

DSN - գործարքի կատարման օրից (settle date) մինչև մարում մնացած օրերի քանակն է՝ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC- տարվա օրերի քանակն է՝ համապատասխան պայմանականության դեպքում:

(Հավելված 5.1-ը լրաց. 07.06.13թ. թիվ 143 Ա, խմբ. 11.02.14թ. թիվ 32 Ա)

Հավելված 6

Օրվա վերջին իրականացվող ամփոփման փուլում Համակարգում Զուտացման իրականացման ընթացակարգի նկարագրությունը

(Վերնագիրը լրաց. 16.12.14թ. թիվ 348Ա)

1. Զուտացման իրականացման պայմանների ստուգում. զուտացում իրականացվում է եթե միաժամանակ առկա են՝ կնքված, դեռևս

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

չկատարված Ռեպո գործարքներ և մարման ենթակա կատարված Միջօրյա ռեպո գործարքներ: Այսինքն

- եթե «Ռեպո զամբյուղի» արժեզրկումը վերացված է, զուտացումը պետք է կատարվի ա) ենթակետում նշված քայլերի համաձայն, իսկ

- եթե «Ռեպո զամբյուղի» արժեզրկումը չի վերացվել զուտացումը պետք է կատարվի բ) ենթակետում նշված քայլերի համաձայն:

- Իսկ եթե Զուտացման պայմանը տեղի չունի, ապա անցում է կատարվում գ) ենթակետից նշված քայլերի իրականացմանը:

ա) արժեզրկման բացակայության դեպքում զուտացման ընթացքում կատարվում են I) ենթակետում նշված գործողությունները եթե Ռեպո զամբյուղը համալրված է դրամով, կամ II) ենթակետի գործողությունները եթե Ռեպո զամբյուղը համալրված է արժեթղթերով.

I) եթե Ռեպո զամբյուղի արժեզրկումը համալրված է դրամով, ապա զուտացման դեպքում իրականացվում է

- գործող Ռեպո գործարքների համար նվազագույն արժողությունից բացի, «Ռեպո զամբյուղում» առկա դրամական միջոցների և կատարված Միջօրյա ռեպո գործարքի հաշվանցվում (ըստ Կետ 140-ի): Կատարված գործողության արդյունքում հաշվարկված տվյալների (auction, maturity) թարմացում:
- Զուտացման իրականացման պայմանների պահպանման ստուգում
- Զուտացման ենթակա առավելագույն գումարի հաշվարկում NETT = min (SUM (auction), SUM (maturity)) (Կետ 154): Հաշվարկվում է «Ռեպո զամբյուղի» արժողության և գործող Ռեպո գործարքների հանրագումարի տարբերությունը (Y-փոփոխական): Հաշվարկված NETT մինիմալ գումարը համեմատում է Y-փոփոխականին: Զուտացումը կատարվում է այն արժեքի չափով, որն ավելի փոքր է:
  - Եթե կնքված, դեռ չկատարված ռեպո գործարքների հանրագումարը փոքր է կատարված Միջօրյա ռեպոյից՝ NETT = (SUM (auction), ապա կնքված Ռեպո գործարքները կատարվում են լրիվ գումարով, իսկ կատարված Միջօրյա ռեպոն նվազեցվում(մարվում) է այդ չափով: Կատարված Միջօրյա ռեպոյի չզուտացված մասը վերաձևակերպվում է որպես «Լոմբարդային ռեպո»:
  - Եթե կնքված, դեռ չկատարված Ռեպո գործարքների հանրագումարը մեծ է կատարված Միջօրյա ռեպոյից՝ NETT = (SUM (maturity), ապա կնքված Ռեպո գործարքները կատարվում են զուտացման մինիմալ (NETT) գումարով, իսկ կատարված Միջօրյա ռեպոն վերաձևակերպվում է որպես մարված Միջօրյա ռեպո: Չկատարված Ռեպո գործարքների մասով ձևակերպվում է չկատարված պարտավորություն: Տվյալ դեպքում կնքված Ռեպո գործարքը կարող է կատարվել մասնակի, ըստ առկա արժեթղթերի ավելցուկային արժողության: Հաշվարկվում է տուգանք չկատարված պարտավորությունների մասով:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

II) եթե Ռեպո զամբյուղը համալրված է և առկա են ավելցուկային արժողություն, ապա զուտացման դեպքում կատարվում է

- գործող Ռեպո գործարքների համար նվազագույն արժողությունից բացի «Ռեպո զամբյուղում» առկա դրամական միջոցների և կատարված Միջօրյա ռեպո գործարքի հաշվանցվում (ըստ Կետ 140-ի): Կատարված գործողության արդյունքում հաշվարկված տվյալների (auction, maturity) թարմացում:
- գործող Ռեպո գործարքների համար արժեթղթերի անհրաժեշտ արժողությունից բացի «Ռեպո զամբյուղում» առկա դրամական միջոցների փոխանցում Մասնակիցների հաշիվներին,
- զուտացման իրականացման պայմանների պահպանման ստուգում,
- զուտացման ենթակա առավելագույն գումարի հաշվարկում NETT = min (SUM (auction), SUM (maturity)) (Կետ 154): Հաշվարկվում է «Ռեպո զամբյուղի» արժողության և գործող Ռեպո գործարքների հանրագումարի տարբերությունը (Y-փոփոխական): Հաշվարկված NETT մինիմալ գումարը համեմատում է Y-փոփոխականին: Զուտացումը կատարվում է այն արժեքի չափով, որն ավելի փոքր է:
  - Եթե կնքված, դեռ չկատարված Ռեպո գործարքների հանրագումարը փոքր է չմարված Միջօրյա ռեպոյից՝ NETT = (SUM (auction), ապա կնքված Ռեպո գործարքները կատարվում են լրիվ գումարով, իսկ կատարված Միջօրյա ռեպոն նվազեցվում(մարվում) է այդ չափով: Կատարված Միջօրյա ռեպոյի չզուտացված մասը վերաձևակերպվում է որպես «Լոմբարդային ռեպո»:
  - Եթե կնքված, դեռ չկատարված Ռեպո գործարքների հանրագումարը մեծ է կատարված Միջօրյա ռեպոյից՝ NETT = (SUM (maturity), ապա կնքված Ռեպո գործարքները կատարվում են զուտացման մինիմալ (NETT) գումարով, իսկ կատարված Միջօրյա ռեպոն վերաձևակերպվում է որպես մարված Միջօրյա ռեպո: «Ռեպո զամբյուղում» առկա արժեթղթերի ավելցուկային արժողության չափով նորից կատարվում են կնքված Ռեպո գործարքները: Որից հետո մնացած չկատարված Ռեպո գործարքների մասով ձևակերպվում է Մասնակցի կողմից չկատարված պարտավորություն: Հաշվարկվում է տուգանք չկատարված պարտավորությունների մասով:

բ) արժեզրկման առկայության դեպքում զուտացման ընթացքում կատարվում են հետևյալ գործողությունները(Կետ 156).

- ✓ Ստուգվում է «Ռեպո զամբյուղի» արժողությունը (առկա արժեթղթեր և դրամական միջոցներ), եթե այն ավելի փոքր է կամ հավասար, քան գործող Ռեպո գործարքների հանրագումարը (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպոյի) զուտացում չի կատարվի (Կետ 156-ի I ենթակետ):
- ✓ կատարված Ռեպո գործարքների համար անհրաժեշտ նվազագույն արժողությունից բացի, «Ռեպո զամբյուղում» առկա դրամական միջոցների և կատարված Միջօրյա ռեպո գործարքի հաշվանցվում (ըստ Կետ 140-ի): Կատարված գործողության արդյունքում հաշվարկված տվյալների (auction, maturity) թարմացում:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

- ✓ Զուտացման իրականացման պայմանների պահպանման ստուգում
- ✓ Զուտացման ենթակա առավելագույն գումարի հաշվարկում NETT = min (SUM (auction), SUM (maturity)) (Կետ 154)
- ✓ Հաշվարկվում է «Ռեպո զամբյուղի» արժողության և կատարված Ռեպո գործարքների հանրագումարի տարբերությունը (Y-փոփոխական): Այնուհետև «Ռեպո զամբյուղի» արժեզրկման առկայության դեպքում Հաշվարկված զուտացման NETT մինիմալ գումարը համեմատում է Y-փոփոխականի հետ: Զուտացումը կատարվում է այն արժեքի չափով, որն ավելի փոքր է (Y-ի կամ NETT մինիմալի չափով):
- ✓ Այն դեպքում, երբ Զուտացումը կատարվում է NETT մինիմալ գումարով՝
  - Եթե զուտացումը կատարվում է NETT = (SUM (auction) մինիմումով, ապա բոլոր կնքված Ռեպո գործարքները կատարվում են լրիվ գումարով, իսկ կատարված Միջօրյա ռեպոն նվազեցվում(մարվում) է այդ չափով: Կատարված Միջօրյա ռեպոյի մնացած չզուտացված մասը նվազեցվում է նաև գործող Ռեպո գործարքների դիմաց «Ռեպո զամբյուղում» առկա ավելցուկային արժեթղթերի չափով կնքելով «Լոմբարդային ռեպո» գործարք: Կատարված «Միջօրյա ռեպոյի» այն մասը, որի դիմաց ռեպո զամբյուղում չկան համապատասխան արժողությամբ արժեթղթեր, չի վերածվում «Լոմբարդային ռեպոյի» այլ վերաձևակերպվում է որպես Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված պարտավորություն:
  - Եթե զուտացումը կատարվում է NETT = (SUM (maturity) մինիմումով, ապա կնքված Ռեպո գործարքները կատարվում են NETT գումարով, իսկ կատարված Միջօրյա ռեպոն ամբողջությամբ վերաձևակերպվում է որպես մարված «Միջօրյա ռեպո»: Կնքված ռեպո գործարքների Մնացած մասը կատարվում է նաև «Ռեպո զամբյուղում» առկա ավելցուկային արժողության չափով: Կնքված այն Ռեպո գործարքները, որոնց դիմաց Ռեպո զամբյուղում չկան համապատասխան արժողությամբ արժեթղթեր, վերաձևակերպվում են որպես չկատարված ռեպո գործարք և դրանց չափով հաշվարկվում է տուգանք:
- ✓ Այն դեպքում, երբ զուտացումը կատարվում է Y-փոփոխականի չափով, ապա այդ Y-գումարի չափով իրականացվում է 1) կնքված Ռեպո գործարքների կատարում և միաժամանակ 2) կատարված Միջօրյա ռեպոյի գործարքի մարում այդ չափով: Կատարված Միջօրյա ռեպոն, որի դիմաց Ռեպո զամբյուղում չկա համապատասխան արժողություն, կվերաձևակերպվի որպես Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն և այդ չափով կհաշվարկվի տուգանք: Իսկ Կնքված, սակայն չկատարված Ռեպո գործարքների համար կվերաձևակերպվի որպես չկատարված Ռեպո գործարք և դրանց չափով կհաշվարկվի տուգանք:

- գ) Եթե «Ռեպո զամբյուղի» արժեզրկում չկա և Զուտացում չի իրականացվում, ապա պետք է կատարվեն a) ենթակետում նշված քայլերը՝ կատարված Միջօրյա ռեպո գործարքի առկայության դեպքում, կամ b) ենթակետում նշված քայլերը, եթե առկա են միայն կնքված Ռեպո գործարքներ.

  a) եթե առկա է միայն կատարված Միջօրյա ռեպո գործարք, ապա կատարվում է

Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

- գործող Ռեպո գործարքների համար նվազագույն արժողությունից բացի «Ռեպո զամբյուղում» առկա դրամական միջոցների և Միջօրյա ռեպո գործարքի հաշվանցում (ըստ Կետ 140-ի): Կատարված գործողության արդյունքում հաշվարկված տվյալների (Միջօրյա ռեպո գործարքի գումարի) թարմացում:
- Համապատասխան արժողություն ունեցող կատարված Միջօրյա ռեպո գործարքի վերակնքում Լոմբարդային ռեպո գործարքի:
- հաշվարկվում է կատարված Միջօրյա ռեպոյի չափը, որի դիմաց Ռեպո զամբյուղում չկա համապատասխան արժողություն և չի մարվել, այն վերաձևակերպվում է որպես Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն, այդ չափով հաշվարկելով տուգանք:

b) եթե առկա են միայն կնքված Ռեպո գործարքներ, ապա կատարվում է

- գործող Ռեպո գործարքների համար նվազագույն արժողությունից բացի «Ռեպո զամբյուղում» առկա դրամական միջոցների փոխանցում Մասնակիցների թղթակցային հաշիվներին (ըստ Կետ 140-ի):
- գործող Ռեպո գործարքների համար նվազագույն արժողությունից բացի «Ռեպո զամբյուղում» առկա արժեթղթերի ավելցուկային արժողության դիմաց կնքված գործարքների մասնակի կատարում: Դրանց դիմաց դրամական միջոցների փոխանցում Մասնակցի թղթակցային հաշվին:
- «Ռեպո զամբյուղում» համապատասխան արժողություն չունենալու պատճառով կնքված, սակայն չկատարված Ռեպո գործարքները կվերաձևակերպվեն որպես չկատարված Ռեպո գործարք և դրանց չափով կհաշվարկվի տուգանք:

Հավելված 6.1. Համակարգում օրվա ընթացքում իրականացվող զուտացման ընթացակարգի նկարագրությունը

I. Համակարգում, Օրվա տվյալ պահին Ռեպո գործարքների զուտացման հետ կապված, եթե ստորեւ նշված որևէ գործառնության իրականացման համար սահմանված պայմանի/կանոնի կատարման անհրաժեշտությունը չկա, ապա անցում է կատարվում հաջորդ գործընթացին.

II. Համակարգում, որոշակի գործառնությունների իրականացման դեպքում (կետ՝ 153), կատարվում է Օրվա ընթացքում տվյալ պահին Զուտացման իրականացման պայմանների ստուգումը: Ընդ որում, իրականացվում է.

1) «Ռեպո զամբյուղը» արժեզրկված չլինելու պայմանի ստուգումը, (ըստ համակարգի Կանոնների, կետ 72) այդ թվում.
   a) «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողության հաշվարկում (առկա արժեթղթերի արժողություն և դրամական միջոցներ),
   b) Գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպոյի) հանրագումարի հաշվարկում:
   c) «Ռեպո զամբյուղը» ամբողջությամբ արժեթղթերով համալրված լինելու

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

պայմանի ստուգում (զամբյուղում դրամական միջոցներ պետք է չլինեն):

2) Մարման ենթակա կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարի հաշվարկում, (SUM(maturity)): Սույն տվյալը հաշվարկվում է նաեւ յուրաքանչյուր անգամ, կնքված ռեպո գործարքի զուտացման կատարումից հետո:
3) Կնքված, սակայն չկատարված Ռեպո գործարքների հաշվարկում, ըստ առաջնահերթության (Sum (Ac)),
4) Անցում, Զուտացման գործընթացի կատարման հաջորդ քայլերին (կատարվում է սույն կետի III ենթակետի գործողությունները).

ա) եթե «Ռեպո զամբյուղը» համալրված է արժեթղթերով (արժեզրկումը բացակայում է), և միաժամանակ առկա են՝ կնքված, դեռևս չկատարված Ռեպո գործարքներ և մարման ենթակա կատարված Միջօրյա ռեպո գործարքներ:

բ) եթե «Ռեպո զամբյուղը» արժեզրկված է, սակայն այդ արժեզրկման արդյունքում, Ռեպո զամբյուղում առկա ապահովվածության մակարդակը մեծ է բոլոր գործող Ռեպո գործարքների հանրագումարից (բացառությամբ՝ կատարված Միջօրյա ռեպո գործարքի), ինչպես նաեւ տվյալ պահին առկա են՝ կնքված, դեռևս չկատարված Ռեպո գործարքներ և մարման ենթակա կատարված Միջօրյա ռեպո գործարքներ:

5) Անցում հաջորդ քայլերին, որտեղ Օրվա տվյալ պահին Զուտացման գործընթացը չի կատարվում (մինչեւ հաջորդ իրադարձությունը), եթե «Ռեպո զամբյուղը» Մասնակցի կողմից համալրվել է դրամով, կամ բացակայում են կնքված ռեպո գործարքները և կատարված Միջօրյա ռեպո գործարքը, կամ չեն ապահովվել զուտացման պայմանները:
6) Օրվա (տվյալ պահին) զուտացման ընթացքում չկատարված ռեպո գործարքները մնում են Կնքված Ռեպո գործարքների կատարման հերթում, և կարող են կատարվել ըստ սահմանված կանոնների:

III. Այն դեպքում, երբ Օրվա տվյալ պահին կատարվել է զուտացման հիմնական պայմանների առկայության ստուգում, որոնք բավարարում են սահմանված պահանջներին, ապա կատարվում է.

1) Կնքված Միջօրյա հայտի առկայության ստուգում (ՀՏ 505 հայտ՝ INTD կոդով), եթե տվյալ պահին այդպիսի հայտ առկա է, ապա այն չի մասնակցում զուտացմանը և հիշվում է առանձին:
2) «Ռեպո զամբյուղի» ավելցուկային արժողության ստուգում և հաշվարկում, տվյալ պահին (Vավելցուկ(t)): «Ռեպո զամբյուղի» ավելցուկային արժողությունը չի կիրառվում չզուտացված ռեպո գործարքի կատարման համար, Մինչեւ Միջօրյա հայտի կատարումը, կամ վերջինիս չեղարկումը Մասնակցի կողմից: ((SUM (Ac) ≤ SUM (maturity)+ Vավելցուկ(t), որտեղ Sum(INTD)=0) պայմանը տեղի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

ունենալու դեպքում Vավելցուկ(t)-ի մասով կարող են կատարվել կնքված ռեպո գործարքները):

3) Կնքված ռեպո գործարքների զուտացման համար, դրանք դիտարկվում են առանձին-առանձին (Sum (Ac)), ըստ առաջնահերթության:
4) Զուտացման ենթակա առավելագույն գումարի հաշվարկում DNETT = min (Ac (auction), SUM (maturity)) (տես՝ Կետ 153): Հաշվարկվում է յուրաքանչյուր կնքված ռեպո գործարքի զուտացման դեպքում:
5) «Ռեպո զամբյուղի» արժողության, ինչպես նաեւ բոլոր գործող Ռեպո գործարքների հանրագումարի (բացառությամբ մարման ենթակա Միջօրյան) տարբերության (Y-փոփոխական) հաշվարկում, որի արժեքը զուտացման դեպքում պետք է լինի դրական:
6) Հաշվարկված DNETT մինիմալ գումարը համեմատում է նաեւ Y-փոփոխականի դրական արժեքին: Զուտացումը կատարվում է այն արժեքի չափով, որն ավելի փոքր է՝ min ((DNETT), SUM (Y)):
7) Երբ min = DNETT, Հաշվարկված DNETT– գումարի չափով Զուտացումը պետք է կատարվի հետեյալ կերպ.
   a) եթե կնքված տվյալ մեկ Ռեպո գործարքի գումարը > (մեծ է) կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքից, (Այսինքն՝ (Sum (Ac) > SUM (maturity)), ապա DNETT = SUM (maturity)): Այս դեպքում կնքված Ռեպո գործարքը կարող է կատարվել զուտացման (DNETT) գումարով, միայն այն դեպքում, եթե տեղի ունի հետեյալ լրացուցիչ պայմանը (SUM (Ac) ≤ SUM (maturity)+ Vավելցուկ(t), որտեղ Sum(INTD)=0): Նշված պայմանները տեղի ունենալու դեպքում այդ կնքված Ռեպո գործարքը կատարվում է զուտացման (DNETT = SUM (maturity)), գումարի չափով, իսկ տվյալ Ռեպո գործարքի չզուտացված մասը (dsum =(SUM(Ac)-SUM(maturity)), կատարվում է զամբյուղի ավելցուկային արժողության հաշվին (որը արդեն ստուգվել է եւ dsum ≤ Vավելցուկ(t)): Սույն գործընթացի արդյունքում կատարված Միջօրյա ռեպո գործարքը ամբողջությամբ վերաձևակերպվում է մարված Միջօրյա ռեպո գործարքի, իսկ Կնքված Ռեպո գործարքը կատարվում է միաժամանակ զուտացմամբ և ավելցուկային արժողության հաշվին: Զամբյուղի ավելցուկային արժողության հաշվին կատարված ռեպո գործարքի չափով մասնակցին փոխանցվում են համապատասխան դրամական միջոցներ:
   b) եթե կնքված տվյալ մեկ Ռեպո գործարքի գումարը ≤ (փոքր է կամ հավասար) կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքից (Այսինքն՝ (Sum (Ac) ≤ SUM (maturity)), ապա DNETT = (SUM (Ac)) որի համար զամբյուղում առկա է ապահովվածություն: Այս դեպքում կնքված Ռեպո գործարքը կատարվում է լրիվ գումարով, իսկ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

կատարված Միջօրյա ռեպո գործարքի չզուտացված մասը վերաձևակերպվում է նոր գումարով չմարված Միջօրյա ռեպո գործարքի (SUM (maturity)= SUM (maturity)- (Sum (Ac)):

8) Երբ min = Y, դա նշանակում է որ չմարված Միջօրյա ռեպո գործարքի դիմաց ռեպո զամբյուղում առկա է մասնակի ապահովվածություն (առկա է արժեզրկում): Վերջինիս հետեւանքով չմարված Միջօրյա ռեպո գործարքների գումարը նվազեցվում է զամբյուղի արժեզրկման չափով և օրվա տվյալ պահին Զուտացումը պետք է կատարվի Հաշվարկված Y գումարի չափով: Մասնավորապես.

a) եթե կնքված մեկ Ռեպո գործարքի գումարը < (փոքր է) կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքի այն գումարից, որի դիմաց զամբյուղում առկա է մասնակի ապահովվածություն (Այսինքն՝ (Sum (Ac) ≤ Sum (Y)), ապա DNETT = (SUM (Ac)): Այս դեպքում կնքված Ռեպո գործարքը կատարվում է լրիվ գումարով, իսկ կատարված Միջօրյա ռեպո գործարքի չզուտացված մասը վերաձևակերպվում է նոր գումարով չմարված Միջօրյա ռեպո գործարքի:

b) եթե կնքված մեկ Ռեպո գործարքի գումարը ≥ (մեծ է կամ հավասար) կատարված չմարված Միջօրյա ռեպո գործարքի գումարից, ապա զուտացում չի կատարվում, քանի որ առկա է արժեզրկում:

9) Յուրաքանչյուր Կնքված գործարքի զուտացման գործընթացից հետո կատարվում է զուտացման պայմանների պահպանման ստուգում, և նոր տվյալների հաշվարկում:

10) Զուտացման ընթացքում չկատարված Ռեպո գործարքները մնում են համակարգում գրանցված գործարքների կատարման հերթում (մինչեւ օրվա վերջ) և կարող են կատարվել հաջորդ զուտացման միջոցով կամ ավելցուկային արժողության հաշվին՝ համաձայն սահմանված կանոնների:

11) Այն դեպքում, երբ Համակարգում այլեւս չեն բավարարվում (խախտվում է) օրվա տվյալ պահին զուտացման գործընթացի համար սահմանված պայմանները, ապա Համակարգը տվյալ պահին չի իրականացնում զուտացման ընթացակարգ:

(6.1. կետը լրաց. 16.12.14թ. թիվ 348Ա)

Հավելված 7

«Ռեպո/Հակադարձ ռեպո» համակարգի միջոցով գործառնությունների իրականացման հետ կապված ժամանակացույցը

ժամանակացույցը (տես՝ կից .xls ֆայլով)

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Հավելված 8

«Ռեպո/Հակադարձ ռեպո» համակարգով կատարվող գործարքների օրինակներ

Ռեպո, Միջօրյա ռեպո գործարքների մարման օրինակներ

Օրինակ՝

Գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպոյի) հանրագումարը՝ 20մլն է, տվյալ պահին առկա (մարման ենթակա) կատարված Միջօրյա ռեպո գործարք չկա, բացի այդ տվյալ օրը մինչև օրվա վերջ կատարված գործարքների հանրագումարը 10 մլն է,

օրվա վերջի դրությամբ առկա է նաև կնքված դեռ չկատարված Ռեպո գործարք՝ 15 մլն դրամի

մասնակցի «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը (առկա ընդունելի արժեթղթերի արժողությունը)՝ 35,660,452.28

Vընդ (t) - ∑ L(առկա ռեպո,t)) = 35,660,452.28 - (20,000,000 +10,000,000) =5,660,452.28

մասնակի կատարված Ռեպո գործարքի գումարը կկազմի՝

I (մասնակի առաջարկ) = DIV(5,660,452.28) = 5,660,452

Օրինակ՝- կապված Կետ-140 հետ

Գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) հանրագումարը՝ 20 մլն է, բացի այդ տվյալ պահին առկա (մարման ենթակա) կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը՝ 10 մլն. է

Մասնակցի «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը (առկա ընդունելի արժեթղթերի արժողությունը)՝ 15 մլն (կա «ռեպո զամբյուղի» արժեզրկում -15 մլն.)

Մասնակցի «Ռեպո զամբյուղում» առկա/փոխանցված դրամական միջոցները՝ 11 մլն է, որից 5 մլն. պետք է ապահովի գործող 20 մլն. Ռեպո գործարքների դիմաց «Ռեպո զամբյուղի» համալրումը: Սակայն դեռևս առկա է «Ռեպո զամբյուղի» արժեզրկում 4 մլն.-ով:

Միջօրյա ռեպո գործարքի հաշվանցի(զուտացման) համար կարող են օգտագործվել «Ռեպո զամբյուղի» 6 մլն դրամական միջոցները, որի արդյունքում կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը կնվազի 6 մլն-ով և կկազմի 4 մլն:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Հաշվանցի արդյունքում կունենանք՝

Գործող Ռեպո գործարքներ (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) - 20 մլն

«Ռեպո զամբյուղում» փաստացի արժողությունը – 15 մլն

«Ռեպո զամբյուղում» առկա/փոխանցված դրամական միջոցները – 5 մլն.

առկա է մարման ենթակա կատարված Միջօրյա ռեպո գործարք -4 մլն. (10մլն-6մլն), և «Ռեպո զամբյուղի» արժեզրկում -4մլն

Կետ 140-ի հետ կապված օրինակ՝

Գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) հանրագումարը՝ 20 մլն է, բացի այդ տվյալ պահին առկա (մարման ենթակա) կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը՝ 10 մլն

Մասնակցի «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը (առկա ընդունելի արժեթղթերի արժողությունը)՝ 25 մլն

Մասնակցի «Ռեպո զամբյուղում» առկա/փոխանցված դրամական միջոցները՝ 7 մլն,

Կետ 140-ի համաձայն՝ հաշվանցի արդյունքում Կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը կնվազի 7 մլն-ով և կկազմի 3 մլն. արդյունքում (1)-ին անհավասարությունը կլինի՝

20 մլն. + 3 մլն. ≤ 25 մլն.

23 մլն. ≤ 25 մլն.

Մասնակցի «Ռեպո զամբյուղի» ավելցուկային արժողությունը կազմում է 2 մլն., որին համապատասխան արժեթղթեր Մասնակիցը օրվա ընթացքում կարող է հետ վերցնել զամբյուղից, պահպանելով (1) անհավասարությունը: Արժեթղթերը հետ վերցնելիս անհրաժեշտ է հաշվի առնել արժեթղթերի քայլը (պատիկությունը):

Կետ 144-ի օրինակներ

Օրինակ 1՝

«Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի ամփոփման փուլի սկզբի դրությամբ գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի)

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

հանրագումարը՝ 20 մլն է, բացի այդ տվյալ պահին առկա (մարման ենթակա)կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը՝ 10 մլն է,

մասնակցի «ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը (առկա ընդունելի արժեթղթերի արժողությունը)՝ 31 մլն է (արժեզրկում չկա)

ամփոփման փուլում 10 մլն. Կատարված Միջօրյա ռեպոն կվերաձևակերպվի որպես Լոմբարդային ռեպո գործարքի,

Արդյունքում կունենանք՝

գործող Ռեպո գործարքներ՝ 20մլն.

Լոմբարդային ռեպո գործարք՝ 10մլն.

«Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը ՝ 31 մլն է, որից 1 մլնը ավելցուկային է , որը հետ է փոխանցվում մասնակցին նվազեցվելով Թրիգեր արժողության չափով :

Օրինակ 2՝

Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի ամփոփման փուլի սկզբի դրությամբ գործող ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) հանրագումարը՝ 20 մլն է, բացի այդ տվյալ պահին առկա (մարման ենթակա) կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը՝ 10 մլն է,

մասնակցի «ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը (առկա ընդունելի արժեթղթերի արժողությունը)՝ 26 մլն է (կա 4 մլն. արժեզրկում)

ա/ ամփոփման փուլում, եթե 4մլն. առկա է մասնակցի թղթակցային հաշվում, ապա՝

- 4մլն. գանձվում է թղթակցային հաշվից, և համալրվում է «Ռեպո զամբյուղը», («Ռեպո զամբյուղի» արժեզրկում այլևս չկա)
- «Ռեպո զամբյուղում» առկա դրամական միջոցները հաշվանցվում են Կետ-140-ի համաձայն, որի արդյունքում կատարված Միջօրյա ռեպոն կնվազի(կմարվի) 4մլն.-ի չափով
- մնացած 6մլն. Կատարված Միջօրյա ռեպոն կվերաձևակերպվի որպես Լոմբարդային ռեպո գործարք,

Արդյունքում կունենանք՝

թղթակցային հաշվի Դ-տ 4մլն.

հաշվանցմամբ մարված Միջօրյա ռեպո՝ 4մլն.

գործող Ռեպո գործարքներ՝ 20մլն.

Լոմբարդային ռեպո գործարք՝ 6մլն.

«ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը ՝ 26մլն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

բ/ եթե թղթակցային հաշվում ընդամենը 1մլն. կա, ապա՝

- 1մլն. գանձվում է թղթակցային հաշվից, և համալրվում է «Ռեպո զամբյուղը», (դեռ կա «Ռեպո զամբյուղի» արժեզրկում- 3մլն.)
- Քանի որ գործող Ռեպո գործարքները լրիվ ապահովված են, ապա չհամալրման տուգանք չի գանձվում
- զամբյուղում առկա դրամական միջոցները հաշվանցվում են Կետ-140-ի համաձայն, որի արդյունքում կատարված Միջօրյա ռեպոն կնվազի(կմարվի) 1մլն.-ի չափով
- մնացած 9մլն. Կատարված միջօրյա ռեպոյից 6մլն. որի դիմաց առկա է համապատասխան ապահովվածություն կվերաձևակերպվի որպես Լոմբարդային ռեպո գործարք,
- համապատասխան ապահովվածություն չունեցող 3մլն կատարված Միջօրյա ռեպոն կվերաձևակերպվի որպես Մասնակցի՝ Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն և միաժամանակ կհաշվարկվի տուգանք չմարված պարտավորության համար (3մլն. դիմաց)

Արդյունքում կունենանք՝

թղթակցային հաշվի Դ-տ 1մլն.

հաշվանցմամբ մարված Միջօրյա ռեպո՝ 1մլն.

գործող Ռեպո գործարքներ՝ 20մլն.

Լոմբարդային ռեպո գործարք՝ 6մլն.

Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն՝ 3մլն.

«ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը՝ 26մլն

տուգանք չմարված պարտավորության համար՝ 3մլն դիմաց

<u>Օրինակ 3՝</u>

«Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի ամփոփման փուլի սկզբի դրությամբ գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) հանրագումարը՝ 20 մլն է, բացի այդ տվյալ պահին առկա (մարման ենթակա) կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը՝ 10 մլն է,

Մասնակցի «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը (առկա ընդունելի արժեթղթերի արժողությունը)՝ 12 մլն (կա 18մլն. արժեզրկում)

ա/ ամփոփման փուլում, եթե 18մլն. առկա է մասնակցի թղթակցային հաշվում, ապա՝

- 18մլն. գանձվում է թղթակցային հաշվից, և համալրվում է «Ռեպո զամբյուղը», («Ռեպո զամբյուղի» արժեզրկում այլևս չկա)
- զամբյուղում առկա դրամական միջոցներից 8մլն. չափով մնում են որպես գործող Ռեպո գործարքների ապահովվածություն, իսկ մնացած 10մլն.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

հաշվանցվում են Կետ-140-ի համաձայն, որի արդյունքում կատարված Միջօրյա ռեպոն կնվազի(կմարվի) 10մլն.-ի չափով և կզրոյացվի

Արդյունքում կունենանք՝

թղթակցային հաշվի Դ-տ 18մլն.

հաշվանցումով մարված Միջօրյա ռեպո՝ 10մլն.

գործող Ռեպո գործարքներ՝ 20մլն.

«Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը ՝ 20մլն., որից 12մլն. արժեթղթեր և 8մլն. փող

բ/ եթե թղթակցային հաշվում ընդամենը 5մլն. կա, ապա՝

- 5մլն. գանձվում է թղթակցային հաշվից, և համալրվում է «Ռեպո զամբյուղը», (սակայն դեռ կա «Ռեպո զամբյուղի» արժեզրկում- 13մլն.)
- հաշվարկվում է համապատասխան տուգանք գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) չապահովվածության համար,(20-12-5= 3մլն. դիմաց)
- քանի որ գործող Ռեպո գործարքների համար առկա էր 8մլն. արժեզրկում, ուստի գանձված 5մլն. դրամական միջոցները կուղղվեն գործող Ռեպո գործարքների արժեզրկման մասնակի փակմանը, իսկ կատարված Միջօրյա ռեպոն կմնա լիովին չապահովված : Ուստի զամբյուղում առկա դրամական միջոցները չեն հաշվանցվի Կետ-142-ի համաձայն,
- 10մլն կատարված Միջօրյա ռեպոն, որը ապահովվածություն չունի կվերաձևակերպվի որպես Մասնակցի՝ Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն և միաժամանակ կհաշվարկվի չմարված պարտավորության համար տուգանք (10մլն. դիմաց)

Արդյունքում կունենանք՝

թղթակցային հաշվի Դ-Տ 5մլն.

գործող Ռեպո գործարքներ՝ 20մլն.

Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն՝ 10մլն.

«Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը՝ 17մլն., որից 12մլն. արժեթուղթ և 5մլն. փող (օրվա վերջում զամբյուղը մնացել է արժեզրկված)

տուգանք «Ռեպո զամբյուղի» չհամալրման համար՝ 3մլն. դիմաց

տուգանք չմարված պարտավորության համար՝ 10մլն դիմաց

Ռեպո գործարքների զուտացման օրինակներ

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Օրինակ 1՝

«Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի ամփոփման փուլի սկզբի դրությամբ գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) հանրագումարը՝ 20մլն է, բացի այդ տվյալ պահին առկա (մարման ենթակա)կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը՝ 10մլն է

Մասնակցի «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը (առկա ընդունելի արժեթղթերի արժողությունը)՝ 31մլն է (զամբյուղի արժեզրկում չկա)

առկա կնքված, դեռևս չկատարված Ռեպո գործարքների գումարը 15մլն. է

ամփոփման փուլում, քանի որ չկա «Ռեպո զամբյուղի» արժեզրկում (նաև առկա է զամբյուղի ավելցուկային արժողություն), ապա Զուտացումից հետո, իրականացվում է նաև կնքված դեռ չկատարված Ռեպո գործարքների կատարում՝

- Զուտացման գումարը կկազմի NETT=min(15mln.,10mln.)=10մլն.
- Զուտացման կատարում՝ 10մլն.կատարված Միջօրյա ռեպոն մարվում է և այդ 10մլն. չափով կնքված Ռեպո գործարքը կատարվում է
- 1մլն ավելցուկային արժողության դիմաց կնքված Ռեպո գործարքները կատարվում են
- կհաշվարկվի չկատարված Ռեպո գործարքի դիմաց տուգանք մնացած 4մլն. կնքված չկատարված Ռեպո գործարքի համար

Արդյունքում կունենանք՝

մասնակցի թղթակցային հաշվի Կ-տ 1մլն

հաշվանցով մարված Միջօրյա ռեպո՝ 10մլն.

գործող Ռեպո գործարք՝ 20մլն.

մասնակի կատարված Ռեպո գործարք՝ 11մլն.

«Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը ՝ 31մլն.

տուգանք կնքված չկատարված Ռեպո գործարքի՝ 4մլն. դիմաց

<u>Օրինակ 2՝</u>

«Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի ամփոփման փուլի սկզբի դրությամբ գործող ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) հանրագումարը՝ 20մլն է, բացի այդ տվյալ պահին առկա (մարման ենթակա) կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը՝ 10մլն է

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

մասնակցի «ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը (առկա ընդունելի արժեթղթերի արժողությունը)՝ 31մլն է (զամբյուղի արժեզրկում չկա)

առկա կնքված, դեռևս չկատարված Ռեպո գործարքների գումարը 5մլն. է

ամփոփման փուլում, քանի որ չկա «ռեպո զամբյուղի» արժեզրկում (նաև առկա է զամբյուղի ավելցուկային արժողություն) , ապա զուտացումից հետո, կատարվում է նաև կնքված դեռ չկատարված Ռեպո գործարքի կատարում՝

- Զուտացման գումարը կկազմի NETT=min(5mln.,10mln.)=5մլն.
- Զուտացման կատարում՝ 5մլն. կատարված միջօրյա ռեպոն մարվում է և այդ 5մլն. չափով կնքված Ռեպո գործարքը կատարվում է
- մնացած 5մլն.Կատարված Միջօրյա ռեպոն վերաձևակերպվում է որպես Լոմբարդային ռեպո, քանի որ կա ապահովվածություն

Արդյունքում կունենանք՝

գործող Ռեպո գործարք՝ 20մլն.

Հաշվանցով մարված Միջօրյա ռեպո՝ 5մլն.

կատարված Ռեպո գործարք՝ 5մլն.

կնքված Լոմբարդային ռեպո՝ 5մլն.

«Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը՝ 31մլն., որից 1մլն. հանդիսանում է ավելցուկային արժողություն և հաշվի առնելով Թրիգեր արժողությունը, այն հետ կփոխանցվի Մասնակցին:

Օրինակ 3՝

«Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի ամփոփման փուլի սկզբի դրությամբ գործող ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) հանրագումարը՝ 20մլն է, բացի այդ տվյալ պահին առկա (մարման ենթակա) կատարված Միջօրյա ռեպո գործարքի գումարը՝ 10մլն է

Մասնակցի «ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը (առկա ընդունելի արժեթղթերի արժողությունը)՝ 26մլն է (կա «ռեպո զամբյուղի» արժեզրկում- 4մլն.)

առկա ակցեպտավորված/կնքված, սակայն դեռևս չկատարված գործարքների գումարը 15մլն. է

ա/ ամփոփման փուլում, եթե 4մլն. առկա է մասնակցի թղթակցային հաշվում, ապա՝

- 4մլն. գանձվում է թղթակցային հաշվից, և համալրվում է «Ռեպո զամբյուղը», («Ռեպո զամբյուղի» արժեզրկում այլևս չկա)
- Ռեպո զամբյուղում առկա դրամական միջոցները հաշվանցվում են Կետ-140-ի

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

համաձայն, որի արդյունքում Կատարված Միջօրյա ռեպոն կնվազի(կմարվի) 4մլն.-ի չափով, Կատարված Միջօրյա ռեպոյի չմարված գումարը կկազմի 6մլն.

- Զուտացման գումարը կկազմի NETT=min(15mln.,6mln.)=6մլն.
- զուտացման կատարում՝ Քանի որ զուտացման NETTmin գումարը մեծ չէ «Ռեպո զամբյուղում» փաստացի արժողության և գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպոյի) հանրագումարի տարբերությունից (6=(26-20)), ապա զուտացումը կատարվում է NETT գումարի չափով, այսինքն 6մլն. չափով
- 6մլն. կատարված Միջօրյա ռեպոն մարվում է և 6մլն. չափով կնքված Ռեպո գործարքը կատարվում է
- կհաշվարկվի չկատարված Ռեպո գործարքի դիմաց տուգանք՝ մնացած 9մլն. կնքված, սակայն չկատարված Ռեպո գործարքի համար

Արդյունքում կունենանք՝

թղթակցային հաշվի Դ-տ 4մլն.

գործող Ռեպո գործարքներ՝ 20մլն.

հաշվանցով մարված Միջօրյա ռեպո՝ 10մլն.

կատարված Ռեպո գործարք՝ 6մլն.

կնքված և չկատարված ռեպո գործարք՝ 9մլն., որի համար հաշվարկվում է տուգանք

«ռեպո զամբյուղի» փաստացի արժողություն՝ 26մլն

բ/ եթե թղթակցային հաշվում ընդամենը 1մլն. կա, ապա՝

- 1մլն. գանձվում է թղթակցային հաշվից, և համալրվում է «Ռեպո զամբյուղը», (դեռ կա «Ռեպո զամբյուղի» արժեզրկում- 3մլն.)
- Ռեպո զամբյուղում առկա դրամական միջոցները հաշվանցվում են Կետ-140-ի համաձայն, որի արդյունքում կատարված Միջօրյա ռեպոն կնվազի(կմարվի) 1մլն.-ի չափով, իսկ կատարված միջօրյա ռեպոյի չմարված գումարը կկազմի 9մլն.
- Զուտացման գումարը կկազմի NETT=min(15mln.,9mln.)=9մլն.
- Քանի որ զուտացման գումարը մեծ է «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողության և գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված Միջօրյա ռեպոյի) հանրագումարի տարբերությունից (9>(26-20)), ապա զուտացումը կատարվում է «ռեպո զամբյուղի» փաստացի արժողության և գործող Ռեպո գործարքների հանրագումարի տարբերության չափով, այսինքն 6մլն. չափով
- այսինքն՝ մնացած 9մլն. կատարված Միջօրյա ռեպոյից 6մլն. կզուտացվի կնքված Ռեպո գործարքների հետ՝ 6մլն. կատարված Միջօրյա ռեպոն մարվում է և այդ 6մլն. չափով կատարվում է կնքված Ռեպո գործարքը
- համապատասխան ապահովվածություն չունեցող 3մլն կատարված Միջօրյա ռեպոն կվերաձևակերպվի որպես Մասնակցի՝ Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն և միաժամանակ կհաշվարկվի չմարված պարտավորության համար տուգանք (3մլն. դիմաց)

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

- կհաշվարկվի չկատարված ռեպո գործարքի դիմաց տուգանք՝ մնացած 9մլն. կնքված սակայն չկատարված գործարքի համար

Արդյունքում կունենանք՝

թղթակցային հաշվի Դ-տ 1մլն

գործող Ռեպո գործարքներ՝ 20մլն.

կատարված Ռեպո գործարք՝ 6մլն.

հաշվանցով մարված Միջօրյա ռեպո՝ 7մլն. (1մլն + 6մլն)

կնքված և չկատարված Ռեպո գործարք՝ 9մլն., որի համար հաշվարկվում է տուգանք

Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն՝ 3մլն.,

միաժամանակ տուգանքի հաշվարկում չմարված պարտավորության համար (3մլն. դիմաց)

«ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը՝ 26մլն

Օրինակ 4՝

«Ռեպո/հակադարձ ռեպո» համակարգի ամփոփման փուլի սկզբի դրությամբ գործող ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) հանրագումարը՝ 20մլն է, բացի այդ տվյալ պահին առկա (մարման ենթակա) կատարված միջօրյա ռեպո գործարքի գումարը՝ 10մլն է,

մասնակցի «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը (առկա ընդունելի արժեթղթերի արժողությունը)՝ 26մլն (առկա է «Ռեպո զամբյուղի» արժեզրկում - 4մլն.)

առկա ակցեպտավորված, սակայն դեռևս չկատարված գործարքների գումարը 5մլն. է

ա/ ամփոփման փուլում, եթե 4մլն. առկա է մասնակցի թղթակցային հաշվում, ապա՝

- 4մլն. գանձվում է թղթակցային հաշվից, և համալրվում է «Ռեպո զամբյուղը», («Ռեպո զամբյուղի» արժեզրկում այլևս չկա)
- Ռեպո զամբյուղում առկա դրամական միջոցները հաշվանցվում են Կետ-140-ի համաձայն, որի արդյունքում կնքված Միջօրյա ռեպոն կնվազի(կմարվի) 4մլն.-ի չափով, իսկ կնքված Միջօրյա ռեպոյի չմարված գումարը կկազմի 6մլն.
- Զուտացման գումարը կկազմի NETT=min(5mln.,6mln.)=5մլն.
- զուտացման կատարում՝ Քանի որ Զուտացման գումարը մեծ չէ «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողության և գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) հանրագումարի տարբերությունից (5<(26-20)), ապա զուտացումը կատարվում է NETT գումարի չափով, այսինքն 5մլն. չափով
- 5մլն.կնքված Միջօրյա ռեպոն մարվում է և այդ 5մլն. չափով կատարվում է կնքված Ռեպո գործարքը
- մնացած 1մլն. կատարված միջօրյա ռեպոն, որը չի մարվել վերաձևակերպվում է որպես Լոմբարդային ռեպո, քանի որ կա ապահովվածություն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Արդյունքում կունենանք՝

թղթակցային հաշվի Դ-տ 4մլն.

գործող ռեպո գործարքներ՝ 20մլն.

հաշվանցով մարված միջօրյա ռեպո՝ 9մլն. (4մլն. և 5մլն.)

կատարված Ռեպո գործարք՝ 5մլն.

կնքված Լոմբարդային ռեպո՝ 1մլն.

«ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը՝ 26մլն

բ/ եթե թղթակցային հաշվում ընդամենը 1մլն. կա, ապա՝

- 1մլն. գանձվում է թղթակցային հաշվից, և համալրվում է «Ռեպո զամբյուղը», (դեռ կա «Ռեպո զամբյուղի» արժեզրկում- 3մլն.)
- զամբյուղում առկա դրամական միջոցները հաշվանցվում են Կետ-140-ի համաձայն, որի արդյունքում կատարված Միջօրյա ռեպոն կնվազի(կմարվի) 1մլն.-ի չափով, իսկ կատարված միջօրյա ռեպոյի չմարված գումարը կկազմի 9մլն.
- Զուտացման գումարը կկազմի NETT=min(5mln.,9mln.)=5մլն.
- Զուտացման կատարում՝ Քանի որ զուտացման գումարը մեծ չէ «Ռեպո զամբյուղի» փաստացի արժողության և գործող Ռեպո գործարքների (բացառությամբ կատարված միջօրյա ռեպոյի) հանրագումարի տարբերությունից (5<(26-20)), ապա Զուտացումը կատարվում է NETT գումարի չափով, այսինքն 5մլն. չափով
- 5մլն. կատարված Միջօրյա ռեպոն մարվում է և այդ 5մլն. չափով կատարվում է կնքված Ռեպո գործարքը
- մնացած 4մլն. կատարված միջօրյա ռեպոյի չմարված գումարից 1մլն վերաձևակերպվում է որպես Լոմբարդային ռեպո, իսկ համապատասխան ապահովվածություն չունեցող 3մլն կատարված Միջօրյա ռեպոն կվերաձևակերպվի որպես Մասնակցի՝ Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն և միաժամանակ կհաշվարկվի չմարված պարտավորության համար տուգանք (3մլն. դիմաց)

Արդյունքում կունենանք՝

թղթակցային հաշվի Դ-տ 1մլն

գործող Ռեպո գործարքներ՝ 20մլն.

կատարված Ռեպո գործարք՝ 5մլն.

հաշվանցով մարված Միջօրյա ռեպո՝ 6մլն. (1մլն. և 5մլն.)

կնքված Լոմբարդային ռեպո՝ 1մլն.

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչություն + 374 10 59 27 60 , 20 00 mher.abrahamyan@cba.am

Կենտրոնական բանկի նկատմամբ չմարված դրամական պարտավորություն՝ 3մլն.,
չմարված դրամական պարտավորության՝ 3մլն.-ի դիմաց հաշվարկվում է տուգանք
«Ռեպո զամբյուղի» փաստացի արժողությունը ՝ 26մլն: